

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

Р. А. ИШХАНЯН

АРМЯНСКАЯ КНИГА

1512—1920

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1981

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱ

Iskhanyan, R. A.

Ռ. Ա. ԻՇԽԱՆՅԱՆ

Hay girk'ë

Հ Ա Յ Գ Ի Ր Բ Ը

1512—1920

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1981

GRAD

Z

228

A76

I84

1981

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ ֆունդամենտալ
գիտական գրադարանի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ Հ. Ս. ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

Գիրքը հրատարակության է երաշխավորել գրախոս՝
բանաս. գիտույթ. քնննածու Հ. Մ. ԳՍՎԹՅԱՆԸ

Իշխանյան Ռ. Ա.

Ի 684 Հայ գիրքը. 1512—1920 [Պատ. խմբ. Հ. Ս. Մա-
նասերյան, Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981—154 էջ,
3 թերթ նկ.

Գրքի առաջին մասում հակիրճ ներկայացված են գրերի մաշ-
տոցյան գյուտը և հայ դպրության առաջընթացը, Երկրորդ՝ հիմ-
նական մասը նվիրված է հայկական տպագրության սկզբնավոր-
մանը և հայ գրքի ավելի քան 400-ամյա պատմությանը:

Նախատեսված է հայ գրքի ու մշակույթի պատմության մը գրադ-
վողներին և, առհասարակ, ընթերցողներին լայն շրջանի համար:

4503000000

Ի-----84-81

703 (02)—81

ԳՄԴ 76. 11 (22) 1

002 (C43) 1

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1981



Մեսրոպ Մաշտոց (նկ. Ստ. Կերսիպյանի)

Ա Ռ Ա Զ Ի Ն Մ Ա Ս

ՀԱՅ ԶԵՌԱԳԻՐ ԳԻՐՔԸ

ՆԱԽԲԱՆ V ԴԱՐԸ

Գիրք ասելով այժմ, գլխավորապես, հասկանում ենք տպագիր գիրք, որ ինչ-որ հարցի կամ հարցերի վերաբերյալ գրավոր տեղեկատվություն է պարունակում: Նախքան տպագրությունը նույն դերը կատարել են ձեռքով գրված պապիրուսե փաթեթներն ու մագաղաթյա մատյանները, ինչպես նաև՝ արձանագրություններ պարունակող քարե կոթողները, կավե սալիկները, ծառերի գրակիր տերևները կամ կեղևը և այլն: Այդ ամենը, հատկապես մագաղաթյա մատյանները, նույնպես պարմանականորեն գիրք են կոչվում: Հայաստանում հին ժամանակներում գործածվել են թե՛ վիմագիր ու սալիկային, և թե՛ պապիրուսե ու մագաղաթյա «գրքեր»:

Հայաստանը գրի ու գրականության շատ հին երկիր է: Նախքան հայերեն մեսրոպյան գրի գործածությունը, Հայաստանում գրել են տարբեր լեզուներով ու գրերով՝ լուվիերեն, աքքադերեն, նորխուռիերեն, արամեերեն, պահլավերեն, հունարեն, ասորերեն: Մինչև V դարը այս լեզուներից մի քանիսով գրված արձանագրություններ են պահպանվել Հայաստանի տարբեր մասերում: Պատմական վավերագրերում հիշատակությունների կան նաև շպահպանված գրավոր երկերի մասին. օրինակ, հայտնի է, որ Հայոց Արտավազդ II թագավորը (մ. թ. ա. 55—34 թթ.) գրել է հունարեն թատերգություններ, որոնք բեմադրվել են Հայաստանի մայրաքաղաք Արտաշատի ամֆիթատրոնում:

Հեթանոսական Հայաստանում գրքի կենտրոններ են եղել մեհյանները (հեթանոսական տաճարները) և թագավորական գրապահոցները: Առաջիններում պահվել է կրոնական, պատմական և այլ կարգի գրականություն: Թագավորական պահոցները հատկացված են եղել արքայական դիվանի փաստաթղթերի պահպանմանը: Հայ պատմիչները, հատկապես Մովսես Խորենացին, ունեն այնպիսի վկայություններ, որոնցից երևում է, որ նախաքրիստոնեական Հայաստանի մեհյաններում երբեմն եղել է բավական մեծաքանակ գրականություն: Ըստ որոշ տվյալների, այդ մեհյանական գրականության մեջ եղել են գաղափարագրերով գրված հայերեն բնագրեր (այդ գրերը մասամբ որպես ծածկագիր գործածվել են նաև քրիստոնեական շրջանում):

ՏԱՌԵՐԻ ՄԱՇՏՈՅՅԱՆ ԳՅՈՒՏԸ ԵՎ ՀԱՅ ԳՊՐՈՒԹՅՈՒՆԸ

Քրիստոնեությունը Հայաստան թափանցել է I դարում, իսկ 301 թ. հայոց Տրդատ Մեծ թագավորը քրիստոնեությունը հռչակեց պետական կրոն: Երկրում սկսեց ավելի մեծ շափերով տարածվել հունարեն և ասորերեն կրոնական ու աշխարհիկ գրականությունը: Գլխոցներում ուսուցումը տարվում էր այդ լեզուներով:

387 թ. տեղի ունեցավ երկու իրադարձություն: Պարսկաստանն ու Բյուզանդիան համաձայնության եկան Հայաստանը բաժանելու իրենց ազդեցության ոլորտների՝ արևելյան և արևմտյան մասերի: Առաջինը դեռևս մնում էր Պարսկաստանից զգալապես անկախ՝ հայոց Արշակունի թագավորների իշխանության ներքո: Արևմտյան մասը միացվեց Հռոմեական արևելյան կայսրությանը, որպես նրա մի նահանգը: Նույն թվականին հայոց եկեղեցու կաթողիկոս դարձավ հայ հայրենասեր կուսակցության ներկայացուցիչ Սահակ Պարթևը, որը ուղիներ էր որոնում երկրում հունարենի և ասորերենի ազդեցությունը նվազեցնելու և քաղաքական բաժանման ենթարկված երկիրը հոգևոր ու մշակութային տեսակետից միավորելու:

Սահակ Պարթևի մերձակիցն էր հայոց զինվորական դասի ներկայացուցիչ Մեսրոպ Մաշտոցը: Նա ընդունեց հոգևոր կարգ և սկսեց քրիստոնեական քարոզչություն Հայաստանի այն մասերում, ուր դեռևս իշխում էր հեթանոսությունը: Նրա քարոզչությունը նպատակին չէր հասնում, որովհետև ժողովուրդը չէր հասկանում հունարեն կամ ասորերեն ընթերցվող Աստվածաշունչը: Մաշտոցի համար պարզ դարձավ, որ ինչպես իր քարոզչությունը, այնպես էլ երկրի հոգևոր ու մշակութային միավորման և ժողովրդին հունական ձուլումից փրկելու միակ ուղին հայ գիր ու գրականություն ստեղծելն է: Կաթողիկոսի և հայոց թագավոր Վուսմշապուհի հովանավորությամբ ու խրախուսանքով՝ Մաշտոցը 405 թ. ստեղծեց հայոց գրերը և Սահակ Պարթևի ու իր աշակերտների հետ սկսեց Աստվածաշնչի թարգմանությունը:

Երկրում սկիզբ առավ մի հզոր շարժում, որը կոչվեց քարգմանչաց, և որի ոգեշնչողները Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցն էին: Ամենամեծ եռանդը ցուցաբերում էր Մաշտոցը, որը շրջում էր Հայաստանի տարբեր զավառներում՝ ամենուրեք հիմնելով հայկական դպրոցներ, կարգելով ուսուցիչներ, որոնց ինքն էր պատրաստում:

Աստվածաշնչի հետ թարգմանվեցին այլ երկեր, սկսեցին գրել հայերեն ինքնուրույն գրքեր: Սկիզբ առավ հայոց դպրոցները, որն ի պատիվ սկզբնավորողների հետագայում կոչվեց սահակ-մեսրոպյան:

V դարում հունարենից և ասորերենից թարգմանվեցին քրիստոնեական նշանավոր հեղինակների՝ Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նզդիանզացու, Եփրեմ Խուրի Ասորու, Հովհան Ոսկեբերանի, Կյուրեղ Ալեքսանդրացու, Եվսեբիոս Կեսարացու, Եպիփան Կիպրացու և շատ ուրիշների երկերը:

Այս դարի երկրորդ կեսին սկսվեց հունաբան կոչվող դպրոցի գործունեությունը, և թարգմանվեցին անտիկ շրջանի փիլիսոփաների ու գիտնականների, այդ թվում՝ Արիստոտելի, Պլատոնի, Փիլոն Ալեքսանդրացու, Դիոնիսիոս Թրակացու և այլոց երկերը: V և հաջորդ դարերում հայերեն թարգմանված մի շարք երկերի հունարեն բնագրերն այժմ կորած են, և այդ

երկերը պահպանվել են միայն հայերեն թարգմանություններով (օրինակ, Զենոնի, Փիլոն Ալեքսանդրացու, Տիմոթեոս Կուլի, Եվսեբիոս Կեսարացու և այլոց գործերից)։

Հայ ինքնուրույն գրականության առաջին հեղինակները նույնպես Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը եղան։ Նրանք գրեցին հոգևոր բանաստեղծություններ՝ շարականներ, ճառեր, եկեղեցական կանոններ։

Մաշտոցի աշակերտներից Կորյունը, իր ուսուցչի մահից (440 թ.) հետո գրեց նրա կենսագրությունը՝ «Վարք Մաշտոցի»։

V դարի հայ խոշորագույն պատմիչն էր Մովսես Խորենացին, որ գրեց իր նշանավոր «Հայոց պատմությունը»։ Այդտեղ հայ ժողովրդի պատմությունը հնագույն ժամանակներից ըսկըսած հասցված է մինչև 428 թ.՝ հայ Արշակունյաց պետության անկումը։ «Հայոց պատմություն» վերնագրով երկ գրեց նաև V դարի մի այլ պատմիչ՝ Ղազար Փարպեցին։ Միևնույն դարում ականավոր հայ փիլիսոփա Եղիշիկ Կողբացին գրեց «Եղծ աղանդոց» փիլիսոփայական-բանավիճային երկը՝ ուղղված զրադաշտականության և հեթանոսության դեմ։ Եղիշին գրեց իր «Վարդանի և Հայոց պատերազմի մասին» բանաստեղծական ներշնչանքով լի հայրենասիրական, վավերագրական երկը՝ նվիրված 451 թ. հայ-պարսկական պատերազմում հայերի տոկունությանն ու անձնվիրությանը։ V դարում մեսրոպյան տառերով վերաշարադրվեցին դեռևս IV դարում հայ հեղինակների գրած որոշ երկեր։

Գրական այս շարժումը շարունակվեց հաջորդ դարերում։ VI դարում Հայաստանում և Հունական աշխարհում իր երկերով նշանավոր դարձավ ժամանակի խոշոր հայ փիլիսոփաներից մեկը՝ Գավիթ Անհաղթը։ VII դարում ասպարեզ եկավ ականավոր հայ մաթեմատիկոս, աստղագետ և փիլիսոփա Անանիա Շիրակացին։

Միջնադարյան հայ նշանավոր պատմիչներից են նաև Մովսես Կաղանկատվացին (VII դար), որը գրել է Հայաստանի արևելյան կողմերի (Աղվանքի) պատմությունը, Հովհաննես Դրասխանակերտցին (IX դար), որ ստեղծել է հայոց Բագրա-

տունի թագավորների ու արաբական խալիֆայի դեմ նրանց մղած պատերազմների պատմությունը, Թովմա Արծրունին (IX—X դդ.), որ գրել է Վանի հայոց Արծրունիների թագավորության մասին, Արիստակես Լաստիվերցին (XI դար), որ նկարագրել է Հայաստանի պատմության ծանր շրջանը սելջուկների արշավանքի ժամանակ, Կիրակոս Գանձակեցին (XIII դար), որ գրել է Հայաստանի պատմությունը մոնղոլների արշավանքի նկարագրությամբ, Ստեփանոս Օրբելյանը (XIII—XIV դդ.)՝ Հայաստանի Սյունյաց աշխարհի պատմիչը և շատ ուրիշներ։

Միջնադարյան Հայաստանում ստեղծագործել են բազմաթիվ բանաստեղծներ, որոնցից առավել հռչակվածներն են Գրիգոր Նարեկացին (X դ.), Ներսես Շնորհալին (XII դ.), Ֆրիկը (XIII դ.), Հովհաննես Թլկուրանցին (XIV դ.), Մկրտիչ Նաղաշը (XV դ.), Նահապետ Քուչակը (XVI դ.)։ Ավելի նոր շրջանում՝ Նաղաշ Հովնաթանը (XVII—XVIII դդ.), Սայաթ-Նովան (XVIII դ.)։ Վերջինս հռչակվեց իբրև անդրկովկասյան երեք ժողովուրդների բանաստեղծ, քանի որ բացի հայերենից գրում էր նաև ադրբեջաներեն ու վրացերեն։

Միջնադարյան հայ գեղարվեստական արձակի խոշորագույն դեմքը առակագիր Վարդան Այգեկցին էր (XII—XIII դդ.)։

Գավիթ Անհաղթից հետո հանդես եկած առավել ականավոր հայ փիլիսոփաներից են՝ Հովհաննես Սարկավազը (XI—XII դդ.), Հովհաննես Երզնկացին (XIII դ.), Հովհան Որոտնեցին (XIV դ.), Գրիգոր Տաթևացին (XIV—XV դդ.), Սիմեոն Զուղայեցին (XVII դ.)։

Գիտնիսիոս Թրակացու V դարի թարգմանիչներից հետո Միջնադարյան Հայաստանում հանդես եկան մի շարք լեզվաբան-քերականագետներ, որոնցից են Ստեփանոս Սյունեցին (VII—VIII դդ.), Արիստակես Գրիշը (XII դ.), Վարդան Արևելցին (XIII դ.), Եսայի Նշեցին (XIII—XIV դդ.), Հովհաննես Հոլովը (XVII դ.) և շատ ուրիշներ։

Միջնադարում մեծապես զարգացավ հայ բժշկությունն ու բժշկական գրականությունը։ Առավել նշանավոր բժիշկ հեղի-

նակներից էին Մխիթար Հերացին (XII դ.) և Ամիրզովլաթ Ամասիացին (XV դ.):

Հայ իրավաբանական գրականության հիմնադիրն է եղել Սահակ Պարթևը, որը եկեղեցական մի շարք կանոնների հեղինակ է, ապա VIII դարում Հովհան Օձնեցի կաթողիկոսը կազմեց «Կանոնագիրք Հայոց» օրենքների մեծ ժողովածուն: Այս ասպարեզում ամենից նշանավոր եղավ XII դարի հեղինակ, առակագիր Մխիթար Գոշը՝ իր «Դատաստանագրքով», որի մեջ առանձնահատուկը մարդասիրական ոգին է:

X—XI դարերում արգասավոր էր խոշոր գիտնական Գրիգոր Մագիստրոսի գործունեությունը:

Ահա այս բոլոր և ուրիշ շատ հեղինակների, ինչպես և թարգմանական բազում երկերն էին կազմում հին ու միջնադարյան հայ ձեռագիր գրքերի բովանդակությունը:

ՀԱՅ ՁԵՌԱԳԻՐ ԳՐԵՆՐ

Հեթանոսական Հայաստանի մշակութային կենտրոնների՝ մեհյանների փոխարեն քրիստոնեական Հայաստանում հիմնադրվեցին վանքեր:

Ամբողջ միջնադարի ընթացքում Հայաստանի տարբեր վայրերում գործող բազմաթիվ վանքերը կրոնական կենտրոններ լինելով՝ միաժամանակ ունեին դպրոցներ ու համալսարաններ, գրադարաններ: Վանքերը նաև գրչության կենտրոններ էին. նրանցում էին գրվում և ընդօրինակվում ձեռագրերը:

Հայաստանում այդ կենտրոններից էին Էջմիածնի, Նարեկի, Աղթամարի, Սաղմոսավանքի, Գեղարդի, Անիի, Գլաձորի, Տաթևի, Հաղբատի, Սանահինի, Արգինայի, Կեչառիսի (Մաղկաձոր), Գեորգիի, Հաղարծինի (Դիլիջան), Ամրդուլու (Բաղեշ) և շատ ուրիշ վանքեր: Կիլիկիայում հռչակված էին Հոռմկլայի, Սկևռայի, Դրազարկի, Բարձրաբերդի, Ակների վանքերը և ուրիշներ: Հայկական գրչության կենտրոններ են եղել նաև Հայաստանից դուրս հայաբնակ վայրերում կառուցված վանքերում, հատկապես Ղրիմում, Արևմտյան Անատոլիայում, Պաղեստինում, Լեհաստանում, Իտալիայում, Պարսկաստանում և այլուր:

Ուսումնական հաստատություններում պատրաստվում էին ձեռագրերի մասնագետ ընդօրինակողներ, որոնք կոչվում էին գրիչ: Գրիչները հմուտ էին հայերեն տարբեր տառատեսակների գեղեցիկ գրություն եղանակներին: Հին ու միջնադարյան մի շարք նշանավոր հեղինակներ միաժամանակ գրիչ են եղել: Սակայն ավելի շատ էին միայն ընդօրինակող գրիչները:

Միջնադարում հայ գիրքը ընդօրինակվել, բազմացվել է գրիչների ձեռքով, և այդ կերպ, հաճախ շատ դժվարին պայմաններում, գոյատևել է սահակ-մեսրոպյան դպրությունը:

Հայերեն հին ձեռագրերի հիշատակարաններն այսօր պատմում են հայ գրիչների ծանր աշխատանքի, նրանց համբերատարության ու տոկունության մասին: Շատ դեպքերում քաղցը, ցուրտը, օտար զորքերի և ավազակախմբերի հարձակումներն ու ասպատակությունները չեն կարողացել ընկճել գրիչներին ու չեն խափանել նրանց գործը: Գրիչներ են եղել, որոնք մի քանի տասնյակ ձեռագրեր են ընդօրինակել: XV դարի գրիչ Հովհաննես Մանկասարենցը ընդօրինակել է 132 ձեռագիր:

Հայ գրիչների նշանաբանն էր՝ «Զեռքս հող կդառնա, գիրքս կմնա»: Գրիչներն իրենց հիշատակարաններում նշում էին ձեռագիրն ընդօրինակելու թվականը, վայրը, նաև ներողություն էին խնդրում թույլ տված սխալների համար: Նրանք իրենց կոչում էին մեղավոր, մեղապարտ, առուպ և այլ նվաստացնող մականուններով, խնդրում էին, որ ընթերցողները բարի հիշեն իրենց ու հարազատներին և ձեռագրի ստեղծման հետ առնչված մարդկանց:

Հայ գրիչների աշխատանքը դարերի ընթացքում անընդմեջ շարունակվել է, և դրա շնորհիվ մինչև մեր օրերն են հասել հին ու միջնադարյան հայ և այլազգի հարյուրավոր հեղինակների մեսրոպատառ երկեր:

Վանքերում ձեռագիր մատյանների ստեղծումն սկսվում էր մաղաղաթ պատրաստելուց. դրա համար ոչխարի, հորթի, այծյամի կամ այլ կենդանիների կաշին հատուկ մշակվում էր: X դարից սկսած Հայաստանում գրելու համար օգտագործվել է նաև թուղթ:

Մագաղաթի կամ թղթի էջերին գրիչն ընդօրինակում էր երկը: Գրում էին երկաթե կամ եղեգնյա գործիքներով, ավելի ուշ՝ սագի փետուրով և ինքնահոսով: Գործածում էին բուսական և քիմիական թանաք՝ մեծ մասամբ սև գույնի, երբեմն էլ կապույտ, կանաչ, կարմիր և այլ գույների ներկեր:

Հնում գրքի ընդօրինակությունը կատարվում էր մեսրոպյան խոշոր գրով, որ կոչվում էր երկաթագիր: Նույն գրով V դարից սկսած Հայաստանում քարերի վրա փորագրում էին արձանագրություններ: Պահպանված հայերեն ամենահին արձանագրությունը (V դ.) փորագրված է Տեկորի տաճարին: Երկաթագիրն իր հերթին մի քանի տեսակի էր՝ հայտնի են բոլորագիծ և ուղղագիծ երկաթագրեր: Պահպանված երկաթագիր ձեռագրերի մեջ շատ են Ավետարանները, որ նշանակում է, թե հնում երկաթագիրն օգտագործվել է առավել սիրված, պատվավոր ձեռագրեր ընդօրինակելու համար:

V—VI դարերից պահպանված են երկաթագիր մատյանների առանձին մագաղաթյա թերթեր, ամբողջական ձեռագիր (երկաթագիր) կա VII դարից՝ Վեհամոր Ավետարանը, IX դարից կա երկու երկաթագիր Ավետարան՝ Մլբե թագուհունը (862 թ.) և Լազարյանը (887 թ.):


Հետագայում ավելի շատ է տարածում գտնում հայերեն գրի մի այլ տեսակ՝ բոլորագիրը, որը մշակվել է երկաթագրից. այն ավելի մանր է, և նրանով ավելի արագ էր գրություն կատարվում: Ձեռագրերը բոլորագրերով ընդօրինակելիս՝ երկաթագիրը գործածում էին որպես գլխատառեր: Մշակվեցին նաև հայերեն գրի այլ տեսակներ՝ նոտրգիր, շղագիր և այլն:

Գրելիս հաճախ բառերը կրճատում էին, կրճատված բառի վրա դնում էին նշան (ւ), որ պատիվ էր կոչվում: Օրինակ, սուրբ բառը գրում էին՝ սբ կամ պատմութիւն՝ պատմութիւ և այլն: Վերջում գրիչը գրում էր հիշատակարան:

Երբ գրիչն ավարտում էր երկի ընդօրինակումը, գրված էջերը հանձնվում էին մանրանկարչին, որը կոչվում էր ծաղկող: Նա մագաղաթների էջերին թողնված ազատ տեղերում և լուսանցքներում նկարում էր ձեռագրի բովանդակության այս

կամ այն հատվածն արտահայտող պատկերներ, հաճախ էլ՝ տարբեր բնույթի այլ նկարներ, խորաններ, զարդեր:

Հին ու միջնադարյան հայ մանրանկարչությունն այսօր հիացնում է ներշնչումների ուժով ու նյութերի բազմազանությամբ, կատարման արվեստի նրբություններով, ինչպես և գույների ընտրության մեծ ճաշակով ու գծանկարի վարպետու-



Նկ. 1. Վեհամոր Ավետարանը (VII դ.)

թյամբ: Հայ մանրանկարիչներից համաշխարհային ճանաչում է ստացել Թորոս Ռոսլինը (Կիլիկիա, XIII դ.): Նշանավոր արվեստագետ-վարպետներ են եղել նաև նկարիչներ Մարգարեն (XIII դ.), Մոմիկը (XIII—XIV դդ.), Սարգիս Պիծակը (XIV դ.), Հակոբ Զուղայեցին (XVI—XVII դդ.) և շատ ուրիշներ:

Գրված ու ծաղկված մագաղաթյա թերթերն, այնուհետև, անցնում էին կազմարարի ձեռքը, դասավորվում, կարվում և կազմվում ու այդպես գրքի կերպարանը էին ստանում:

Միջնադարյան Հայաստանում կազմարարութիւնը նույնպէս արվեստի մակարդակի էր հասցված: Կազմը լինում էր տախտակից՝ մեծ մասամբ կաշեպատ: Հիանալի են բազմաթիվ մատյանների կաշվե զարդանկար կազմերը: Զարդերը բազմաբնույթ են, հաճախ ոսկերչական վարպետութեամբ կատարված: Շատ են նաև դրվագված մետաղով կամ արծաթապատ՝ գունավոր քարերով, երբեմն թանկագին ակներով զարդարված կազմերը: VI դարից պահպանվել է Ավետարանի փղոսկրյա կազմ՝ որ նուրբ քանդակներով է զարդարուն:

Մաշտոցյան գրերի գլոստից ի վեր հայ ժողովրդի մեջ մեծ սեր ու նվիրվածութիւն է եղել հայերեն գրքի նկատմամբ: Միջնադարից պահպանվել են հատուկ ճարտարապետութեամբ կառուցված գրադարանային շէնքեր, որոնցում հարչուրավոր, հաճախ հազարավոր ձեռագիր մատյաններ են պահպանվել:

Հաճախ ձեռագրերի պահպաններ և ընթերցասրահներ էին դարձնում Հայաստանի անդնդախոր ձորերում փորված կամ բնական քարայրները: Նրանցում ձեռագրերն ավելի անվտանգ էին պահվում օտարերկրացիների ավերիչ արշավանքների ժամանակ, մանավանդ երկրում հայկական պետականութիւն չեղած ժամանակաշրջաններում:

Միջնադարում իր հարստութեամբ հռչակված էր Հաղբատի վանքի գրադարանը: Այդ վանքը հիմնադրվել է X դարում, Լոռու անդնդախոր ձորերից մեկի մոտ և ապա XI դարից դարձել կրթական կարևոր կենտրոն, ուր ուսման էին գալիս տարբեր վայրերի պատանիներ ու երիտասարդներ: Հաղբատի գրադարանի շէնքը կառուցվել է XI դարում: Գրադարանը արագ համարվելով՝ շուտով դարձել է ամենահարուստը ամբողջ երկրում: Գլուղացիներ, արհեստավորներ, իշխաններ ու իշխանուհիներ, հոգևորականներ գրադարանին բազմաթիվ մեծ ու փոքր դրամական, գուլքային և այլ կարգի նվիրատուութիւններ են արել, որոնց մասին այսօր պատմում են վանքի պատերին արված երկաթագիր արձանագրութիւնները:

Երբ գրականութիւնն այլևս չէր տեղավորվում գրադարանի շէնքում, մաս-մաս տեղափոխում էին վանքի եկեղեցիները, այլ շինութիւններ և մանավանդ Զրաղացի կոշվող մո-

տակա ձորի մեծ քարայրը, որը վաղուց ի վեր գրապահոց-ընթերցարանի դեր էր կատարում:

XI դարի երկրորդ կեսին Հաղբատի համալսարանի ուսանողներից և գրադարանի ամենաեռանդուն ընթերցողներից է եղել Հովհաննես Սարկավազը (Արցախի Փառխասա գավառից), որը հետո դարձավ Հայաստանի հռչակավոր բնագետ-մաթեմատիկոսն ու փիլիսոփան: Նրա, իբրև գրադարանի անխնջ ընթերցողի մասին, Կիրակոս Գանձակեցի պատմիչը հետևյալ վկայութիւնն է տալիս: Պատանի ուսանող Հովհաննեսը քարայրի գրադարանի մի անկյունում սովորականի պես ընթերցելիս է լինում: Այդ օրը նրա ընկերներն ընթերցանութիւնն ավարտելով հեռանում են, չնկատելով գրքերի խորքը քաշված Հովհաննեսին: Քարայրի դուռը կողպում են, շարժական կամուրջն իջեցնում: Երբ մի քանի օր հետո գալիս են քարայր-ընթերցարան, զարմանքով այդտեղ գտնում են անհետացած ընկերոջը՝ դարձյալ կարգալիս: Հարցնում են՝ «Ինչպե՞ս ապրեցիր առանց ուտելիքի ու խմելիքի»: Հովհաննես Սարկավազը ցույց տարով առջևի գրքերն՝ ասում է. «Այս է իմ ուտելիքն ու խմելիքը, որ կերա և խմեցի այս օրերին»:

Հովհաննես Սարկավազը լինելով խոշոր գիտնական, նաև նշանավոր մատենագետ էր. նա է կազմել միջնադարյան Հայաստանի ուսումնական հաստատութիւններում ըստ ծրագրի պարտադիր համարվող կրոնական և աշխարհիկ գրականութեան ցուցակները, որոնցով երկար ժամանակ առաջնորդվում էին հայկական դպրոցներն ու համալսարանները:

Հաղբատից ոչ հեռու գտնվող Սանահինի վանքը (հիմնադրված X դարում) նույնպես ունեցել է գրադարանի հատուկ շէնք՝ հարուստ գրականութեամբ, որի մի մասը դարձյալ պահվել է հատուկ քարայրում: Այստեղ գործել է միջնադարյան Հայաստանի ականավոր մատենագետ Գրիգոր Աբասի որդին (XIII դար): Նա հեղինակն է «Գիրք պատճառաց» մատենագիտական աշխատութեան, որը միաժամանակ տարբեր ուսումնական նյութերի ժողովածու-դասագիրք էր: Սանահինի համալսարանում ի թիվս այլոց դասախոսել է աշխարհական հռչակավոր գիտնական, իշխան Գրիգոր Մագիստրոսը, որ ժա-

մանակի մեծ ընթերցասերներից էր և ուներ հարուստ անձնական գրադարան:

Հոշակվեց նաև Սյունիքում Որոտան գետի կիրճի բարձրագիր ժայռին IX դարում կառուցված Տաթևի վանքն՝ իր համալսարանով և ճոխ գրադարանով: Այն զարգացման բարձրակետին հասավ XIV դարում, երբ համալսարանի տնօրեն էր հայ մեծ փիլիսոփա Գրիգոր Տաթևացին:

Միջնադարյան Հայաստանի տասնյակ ուրիշ գրադարաններ նույնպես ունեցել են գրքային հարուստ ունեցվածք և իրենց հետաքրքրական պատմությունները:

Հատկապես հին էր էջմիածնի վանքի գրադարանը, որն ըստ պատմիչ Ղազար Փարպեցու վկայության, գոյություն է ունեցել արդեն V դարում: Այն դարձավ հայոց ամենաերկարակյաց գրադարանը, որ 1939 թ. էջմիածնից տեղափոխվեց Երևան և այժմ հայտնի է իբրև Մաշտոցի անվան մատենադարան (մատենադարան հայերեն ավելի հին բառ է, քան գրադարան, երկուսն էլ միևնույն իմաստն ունեն, թեև արևելահայերը մատենադարան այժմ գործածում են գլխավորապես ձեռագրատան իմաստով):

Միջնադարյան Հայաստանում շատ գրադարաններ ունեին իրենց գրացուցակները: Մշակված էին գրադարանային գրքից օգտվելու հատուկ կանոններ: Գրքի խնամքի վերաբերյալ հրահանգներ կային: Մաշված մատյանները նորոգվում էին, նոր կազմ ստանում: Առավել քայքայված ձեռագրերի մագաղաթները մաքրվում էին և օգտագործվում նոր ձեռագրեր գրելու համար:

Չնայած հայերեն գրքի նկատմամբ ժողովրդի, մտավորականության ունեցած մեծ սիրուն, գրքերի ու գրադարանների պահպանման համար թափված ջանքերին, միջնադարում, այնուամենայնիվ, հայերեն շատ ձեռագրեր են ոչնչացվել:

Միջնադարից վկայություններ են պահպանվել հայ ձեռագրերի զանգվածային հափշտակման և ոչնչացման մասին: Օրինակ, 1170 թ. Սյունիքի Բաղաբերդ ամրոցում սելջուկները 10.000 հայերեն ձեռագրեր ոտքի կոխան դարձրին:

Հայերի համար սրբություն դարձած շատ ձեռագրեր օտար-

երկրյա զորքերի արշավանքների ժամանակ գերի էին տարվում, ապա ժողովուրդը մեծ գումար էր հավաքում և ազատում ձեռագրերը գերությունից: Եղել են ոչ քիչ դեպքեր, երբ մարդիկ շինաչելով իրենց կյանքը՝ ձեռագրեր են փրկել հերոզեհից ու հեղեղումներից: Երբեմն ասպատակությունների ժամանակ թողնելով ունեցվածքը, նույնիսկ երեխաներին, հայ մարդիկ ձեռագիր մատյանները փախցրել են հարյուրավոր կիլոմետրեր՝ դեպի ապահով վայր: Մաշտոցի անվան մատենադարանում է պահվում Մշո Ճառնարանը, որի մագաղաթները պատրաստվել են 700 հորթի կաշվից: Ավելի քան 2 փութ կշռող այդ ձեռագիր-հսկան XIII դարում գերի է տարվել սելջուկների կողմից և մեծ փրկագնով ազատվել: 1915 թ. հայկական եղեռնի օրերին հայոց Մուշ քաղաքից փախստական հայ կանաչք իրենց հետ վերցնում են այդ գրչագիրը: Քանի որ ծանր էր, բաժանում են երկու մասի, և մասերից յուրաքանչյուրը տարբեր ուղիներով, մեծ տառապանքների զնով ազատվում է:

Եվ այնուամենայնիվ, պատերազմների, գաղթերի ու այլ պատճառներով հայկական ձեռագրերի մեծ մասը ոչնչացել է: Ներկայումս աշխարհում կա շուրջ 25000 հայկական ձեռագիր, որոնցից՝ Երևանի Մաշտոցի անվան մատենադարանում՝ ավելի քան 10 հազար: Հայ ձեռագրերի հարուստ հավաքածուներ կան նաև Երուսաղեմում, Վիեննայում, Վիեննայում, Լոնդոնում, Փարիզում և այլուր:

ԵՐԿՐՈՐԳ ՄԱՍ

ՀԱՅ ՏՊԱԳԻՐ ԳԻՐՔԸ 1512—1800 ԹԹ.

ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Տպագրութիւնը շարժական տառերով տարբեր բնագրեր տպելու արվեստն է: Բնագիրը շարվում է հատուկ տպատառերով՝ տող առ տող, շարվածքին ներկ է քսվում, ապա շարված էջը մամուլով սեղմվում է թղթին և ստացվում են միևնույն շարվածքի դրոշմված էջեր: Ապա տպատառերի շարվածքը ցրվում է, և տառերն օգտագործվում են այլ շարվածքի մեջ: Սա է տպագրության էությունը: Հետագայում տպագրական արվեստը շատ կատարելագործվեց, բայց տառերի, ավելի ուշ՝ տողերի շարժականության սկզբունքը մնաց:

Եղել է և կա նաև դրոշմատիպ. երբ նախապես փայտի, մետաղի կամ այլ նյութի վրա փորագրութեամբ կամ այլ եղանակով պատրաստվում է էջի դրոշմը (շրջված), ապա ներկվում ու սեղմվում թղթին: Շարժական տառերով կատարվող տպագրությունից առաջ և նրան զուգահեռ եղել է այդպիսի փայտափորագիր տիպ: Բայց դա իսկական տպագրություն չի համարվում:

Շարժական տառերով տպագրելու գաղափարը Եվրոպա է եկել Հեռավոր Արևելքից¹: Եվ այդ գործում կարևոր դեր է կատարել հայազգի ճանապարհորդ Անտոն Հայր կամ Հայկազու-

¹ Չինաստանում շարժական տառերով գիրք տպագրելու արվեստը ծագել է XI դարում և թափանցել հարևան երկրներ: Ապա Հեռավոր Արևելքում այդ արվեստը մոտացվել է: XIX դարի սկզբներին Հեռավոր Արևելք, այդ թվում Չինաստան է հասել եվրոպական տպագրությունը:

նր: Այս մասին տեղեկություն է տալիս XVII դարի մուղավացի քաղաքական գործիչ, գիտնական Նիկողայոս Միլեսկուն (Սպաթարիոսը): Նա 1675—78 թթ. եղել է ռուսական մի դեսպանության ղեկավարը Չինաստանում և այդ երկրի մասին աշխատություն է գրել, որ կոչվում է «Աշխարհի՝ Ասիա կոչվող առաջին մասի նկարագրությունը»: Այդտեղ գրված է. «Եվ այն հաստատ է, որ մետաքսի արտադրությունը շինացիներից են մյուս պետությունները սովորել, և ոչ միայն այդ, այլ նաև՝ թնդանոթներ ձուլելը: ծովագնացությունը՝ մագնիսի օգնությամբ, ինչպես և գրքեր տպագրելը շինացիներից են սովորել Եվրոպայում: Երբ կալմիկները և թաթարները գրավեցին Չինաստանը, և նրանց հետ Չինաստան եկան հայր Օդերիկը, Անտոն Հայր և Մարկո Պոլոս վենետիկցին, և, ճշմարիտ, նրանք Չինաստանից Եվրոպա բերեցին այդ արվեստները»²:

Կալմիկ կոչվում են մոնղոլները, նրանք Չինաստանում իշխել են XIII—XIV դարերում, մինչև 1368 թ.: Հենց XIV դարում տպագրության գաղափարը՝ շինական տպագիր գրքերի հետ թափանցել է Եվրոպա, և հաջորդ XV դարի 40-ական թրվականներին սկիզբ է առել եվրոպական տպագրությունը Գերմանիայում՝ Յոհան Գուտենբերգի նախաձեռնությամբ:

Մինչև 1500 (կամ 1525) թվականը տպագրված գրքերը կոչվում են օրորոցային (լատիներեն ինկունաբուլա) կամ խանձարուրային, իսկ մինչև 1800 թ. տպագրվածները՝ հնատիպ գրքեր:

* * *

XVI դարում, երբ սկզբնավորվեց հայկական տպագրությունը, միջնադարյան գրչությունն էր իր ուսերին կրում հայ գիրք ստեղծելու հայերեն գրավոր խոսքը բազմացնելու ծանրությունը: Ապա՝ աստիճանաբար հայկական տպագրությունն ամրապնդվեց և շուտով գրչության հետ հավասար կրում էր

² Н. Г. Спафарий. Описание первая части вселенная, Казань, 1910, էջ 24—25:

հայ գիրք ստեղծելու ծանրությունը, իսկ հետո, ի վերջո, ամբողջությունամբ առավ իր ուսերին:

Հնատիպ գիրքը մշակութային յուրահատուկ երևույթ է. իր անվանաթերթով, շարվածքի ձևով, կառուցվածքով այն բավականին տարբերվում է ժամանակակից գրքից և միջին օղակ է ձեռագիր և այժմեական գրքերի միջև:

Հնատիպ գրքերի տպագրությունը բառակրճատումներով էր կատարվում, ինչպես ձեռագիր մատյաններում: Անվանաթերթին ակզբնական շրջանում մի քանի բառ էր տպվում, հետագայում շատ տեղեկություններ էին տրվում, XVII—XVIII դարերի հնատիպերը ծանրաբեռնված անվանաթերթեր ունեն: Կարևոր առանձնահատկություն է հիշատակարանը, որի առկայությունը նույնպես ձեռագիր մատյանների ավանդույթն է: Հնատիպերի հիշատակարանները մի քանի տողից մինչև մի շարք էջերի են հասնում: Նրանցում տեղեկություններ են տրվում գրքի տպագրության հանգամանքների, դժվարությունների, տպագրությանը մասնակցած անձանց, պատմական անցուղարձեերի մասին և այլն: Այդ հիշատակարանները հնատիպ գրքի պատմության լավագույն վավերագրերն են, հին տպագրիչների ծանր, հաճախ անձնուրաց աշխատանքի վկայումներ:

Հայ տպագիր գրքի պատմության ամենահետաքրքրական շրջանը հնատիպ գրքի մոտ 300 տարին է՝ 1512—1800 թթ.: Այդ շրջանում հայ հին տպագրիչները շարունակում էին միջնադարյան գրիչների ավանդները. ընդ որում, այդ տպագրիչների մի մասը նախապես գրիչ էր եղել կամ, տպագրիչ դառնալով, շարունակում էր մնալ գրիչ: Հայ հին տպագրիչները ժամանակի կրթված մարդիկ էին. թեև այժմ նրանց տպագրիչ անուն ենք տալիս, բայց իրականում շատ ավելին էին: Նրանք պարզապես հայերեն գիրք ստեղծողներ էին՝ և՛ բնագիր պատրաստող, և՛ հրատարակիչ, և՛ խմբագիր ու սրբագրիչ, և՛ գրաշար ու տպագրող... Հայ հնատիպ գրքի պատմությունը տառապանքների, զրկանքների ու իսկական սխրագործությունների մի շղթա է՝ լի ողբերգական դրվագներով, և գլխավոր գործող անձինք են հայ հին տպագրիչները: Նրանք մեծ մասամբ

գործել են հայրենի երկրից հեռու, նյութական ծանր պայմաններում, կրել են պարտքատերերի ու գրաքննիչների հալածանքները, իսկ նպատակը մեկն է եղել՝ տպագրության նորագույն արվեստի օգնությամբ շարունակել սահակ-մեսրոպյան դպրությունը, կենդանի պահել հայոց գրավոր խոսքը, մեսրոպատառ գիրքը:

Գրքի պատմության ականավոր մասնագետ, ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Ալեքսեյ Սիդորովը, հայկական տպագրության 450-ամյակի առթիվ ծանոթանալով հայ հնատիպ գրքի պատմությանը, նշեց, որ ինքը կուզեր «ի լուր ամենքի խոսել հայ գրքի մշակույթի համաշխարհային նշանակության մասին» և որ «Բացառիկ դժվար պայմաններում դարգացած՝ հայ տպագրությունը արժանի է այն ստեղծող մեծ ժողովրդին»:

Հայ տպագրության դարգացումը 1800-ից մինչև 1920 թվականը նույնքան հարուստ չէ հետաքրքրական, հուզիչ զորավազներով, տառապալից մաքառումներով, որքան նախորդ երեքհարյուրամյա ժամանակամիջոցը, սակայն այն ևս ուշագրավ շատ կողմեր ունի: Հայ տպագրության այդ նոր շրջանը դեռ լավ չի ուսումնասիրված, նրա առավել մանրամասն ուսումնասիրումը առաջիկայի գործ է:

Հայ գրքի պատմությունը միաժամանակ հայոց գրագրանների, մատենագիտության և գրավաճառության պատմությունն է:

Հայոց միջնադարյան գրագրանները մինչև XVII դարը ձեռագրագրաններ էին: XVI դարի վերջում և հատկապես XVII-ին տպագիր գրքերը նույնպես սկսում են տեղ գտնել հայոց գրագրաններում: Օրինակ, XVII դարից մեզ է հասել Բաղեշի Ամրդուլու վանքի գրագրանի գրացուցակը, որտեղ ձեռագրերի հետ նշված են մի շարք տպագիր գրքեր՝ հրատարակված Խաչիայում: Հետագայում տպագիր գրքերը դարձան հայոց գրագրանների ունեցվածքի գլխավոր մասը, իսկ ավելի ուշ ձեռագրերը առանձնացվեցին տպագիր գրքերից, և գրագրանները մեծ մասամբ դարձան տպագիր գրքերի պահոցներ:

Հայկական մատենագիտությունը շատ հնուց է գալիս:

Պահպանված են եկեղեցու կողմից հանձնարարվող (կանոնական) և արգելված (պարականոն), ինչպես նաև եկեղեցական ու աշխարհիկ գրքերի ցուցակներ, որոնք գալիս են IV—V և հետագա դարերից: Կան հայոց հոգևոր բանաստեղծությունների (շարականների), պատմական, փիլիսոփայական երկերի հեղինակային մատենագիտական ցուցակներ, որոնք ըստեղծվել են Միջնադարում: Հայերեն առաջին տպագիր մատենագիտությունը լույս է տեսել 1710 թ. Վենետիկում, Առաքել էրզրումեցու «Բանք և քարոզք» գրքի վերջում: Դա իտալացի տպագրիչ Անտոնիո Բորտոլիի կողմից վաճառվող հայերեն գրքերի մի ցուցակ է:

Ինչ վերաբերում է գրավաճառությանը, ապա հնուց ի վեր հայոց մեջ կային շրջիկ գրավաճառներ, որոնք ձեռագիր մատյաններ, իսկ XVI դարից սկսած նաև տպագիր գրքեր էին վաճառքի հանում Հայաստանի և այլ երկրների հայաբնակ վայրերի քաղաքներում ու գյուղերում: Նրանք գրքեր էին վաճառում հատկապես տոն օրերին, եկեղեցիների բակերում: Շատ էին վաճառվում Ավետարան, Նարեկացու «Գիրք աղօթից»-ը («Մատեան ողբերգութեան»), Սաղմոսարան, օրացույց-տոնացույցեր, բժշկարաններ և այլն:

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԴՈՐԸ

XVI դարում հայ մշակութային կյանքի մեջ տեղի ունեցած ամենանշանակալից երևույթը հայկական տպագրության սկզբնավորումն է:

Դարի առաջին կեսին Հայաստանի քաղաքական, տնտեսական պայմանները չափազանց անբարենպաստ էին մշակույթի զարգացման համար: Երկիրը, բաժանված Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի միջև, ամենից ավելի շատ էր իր վրա կրում այդ երկու բռնապետությունների շարաշահումները, ինչպես և նրանց փոխադարձ թշնամանքի հետեւանքները: Ասիական այդ հզոր պետությունների միջև եղած լարվածությունը և ապա 1512—14 թվականներից ծայր առած երկարատև պատերազմները հիմնականում տեղի էին ունենում

Հայաստանի հողում, և ամենից ավելի տուժում էր հայ ժողովուրդը:

Երբեմն վտանգավոր շափեր էին ընդունում նաև տեղական մեծ ու փոքր իշխանությունների մեջ մղվող կռիվները կամ այնպիսի շարժումներ, ինչպիսին էր թուրք ջալալիների ապստամբությունը Սուլթանի դեմ (XVI դարի վերջը, XVII-ի սկիզբը). այդ ամենից նույնպես հիմնականում քրիստոնյա բնակչությունն էր տուժում:

Ահա 1509 թ. Հայաստանի Մոկաց աշխարհում գրված մի ձեռագիր հիշատակարան, որ ընդհանուր պատկեր է տալիս այդ ժամանակաշրջանի մասին (բերում ենք գրաբարից աշխարհաբար թարգմանած). «Այս դառը և նեղ ժամանակներում մեծ պատուհաս եղավ մեր աշխարհի վրա: Քանի որ այդ ժամանակ դեպի Քավրիզ գնաց Շահ Իսմայիլ անունով փաղիշահը, նեոի մի նախակարապետ, և շատ ավերածություն արեց մեր աշխարհում՝ սպանություններ և կողպուտ բոլոր վայրերում: Եվ ո՞վ կարող է գրի առնել այն շարությունները կամ դավերը, որ նա գործում է աշխարհի վրա: Եվ տեղից տեղ, աշխարհից աշխարհ շրջեցինք. շատերը սովամահ ու ձնախեղդ եղան կամ գազանի բաժին դարձան նրա ահից»: Այսպիսին էր իրագրությունը թուրք-պարսկական պատերազմի նախօրեին. դրանից մի քանի տարի անց սկսված ահեղ պատերազմը ավելի վատթարացրեց վիճակը:

Հայաստանում մշակութային կյանքին համատարած խավարն էր սպառնում, հայոց լեռներում ծվարած մենաստաններից ներս մեծ զոհողություններով պահպանվում էր սահակամեսրոպյան դպրության թուլացող կրակը:

Այդ ժամանակ հեռավոր Վենետիկում մետաղից ձուլվում են մեսրոպյան տառեր, և գուտենբերգյան տպագրական մամուլի տակից դուրս են գալիս հայերեն տպագրված առաջին էջերը:

Հայաստանն իր հին ու նոր հարևանների համեմատ քաղաքական առավել ծանր կացությունների մեջ էր և, այնուամենայնիվ, առաջինն էր, որ որդեգրեց այն ժամանակների մեծագույն գյուտը:

Հայկական տպագրութեան սկզբնավորման գործում դեր է կատարել հայերեն գիրքը մեծ շափերով բազմացնելու սուր պահանջը, որ զգացվում էր դեռևս նախորդ դարից: Հայ գրչութունը բավական տոկոսն գտնվեց սելջուկ-մոնղոլական արշավանքների ամբողջ ժամանակաշրջանում: Թեև Հայաստանի ամենածանր ժամանակներում էլ հայ գրիչները շարունակել են ձեռագիր մատյանների ընդօրինակումը, սակայն գրչության արվեստի բարդությունները, ընդօրինակման աշխատատարությունը XVI—XVII դարերում այլևս հնարավորություն չէին տալիս հայ ձեռագրերը անհրաժեշտ շափերով բազմացնելու, ինչպես և մեսրոպատառ գիրքը առավել մատչելի ու էժան դարձնելու:

Եվրոպայում XV դարի կեսերից սկսած արագ թափով զարգացող տպագրական գործը չէր կարող չհետաքրքրել հայ գործիչներին, այդ թվում եկեղեցու ղեկավարներին: Տպագրության արժանիքները ակնհայտ էին: Բավական է ասել, որ այն ժամանակ ընդօրինակմամբ մի ձեռագիր մատյան ստեղծելու վրա ծախսվող ժամանակամիջոցը մոտավորապես այնքան էր (իսկ երբեմն ավելի), որքան նույն ծավալի շորսից հինգ հարյուր շրինակ տպագիր գրքեր ստեղծելու համար պահանջվող ժամանակը:

Հայաստանը եվրոպայի հետ շփման մեջ էր ոչ միայն հայ առևտրականների ու հայկական այլևայլ պատգամավորությունների, ուխտագնացների միջոցով, այլև եվրոպական տարբեր երկրներում հաստատված ու անընդհատ համալրվող հայկական համայնքների շնորհիվ:

Մյուս կողմից, Հայաստանում որքան էլ ճիշտ հասկացվեր գուտենբերգյան տպագրության նշանակությունը, որքան էլ գրավիչ թվար տպագրական արվեստի միջոցով հայ գիրքը բազմացնելու հեռանկարը, ակներև էր նաև, որ թե՛ XVI և թե՛ XVII դարերում Հայաստանում տպարան հիմնելն անհնար էր: Երկրի անկայուն վիճակը, հայկական հողերում մեկը մյուսին հաջորդող պատերազմները, ինչպես և շրջապատող հետամնացությունն ու մեծ հեռավորությունը եվրոպայի զարգացած

կենտրոններից լիովին բացառում էին Հայաստանում տպագրական գործի հիմնադրումը այդ ժամանակաշրջանում:

Մնում էր մի ելք՝ հայերեն գրքեր տպագրել Եվրոպայում, այնտեղ ստեղծել Հայաստանի տպարանները և հրատարակված գրականությունը փոխադրել հայրենիք:

Հայաստանյան եկեղեցին, որ պատմական հանգամանքների բերումով էական դեր էր կատարում հայ հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքում, XVI դարում արդեն լուրջ հետաքրքրություն էր ցուցաբերում տպագրական գործի նկատմամբ: Հայ եկեղեցու մի շարք ներկայացուցիչների համար հասկանալի էր դարձել հայերեն գրքերի լուրջ պակասը տպագրության միջոցով լրացնելու հնարավորությունը: Գրա վկայությունն է, օրինակ, Կիլիկիայի Ազարիա կաթողիկոսի 1585 թ. Հոռմի պապին գրած նամակը, ուր գանգատ կա հայերեն Աստվածաշնչի խիստ պակասի վերաբերյալ և խընդրանք Հոռմի Գրիգոր XIII պապին՝ հրատարակել այդ գիրքը:

Հայ առաջին տպագրիչ Հակոբ Մեղապարտը

Առաջին մարդը, որին հաջողվել է եվրոպայում հիմնել տպարան և հրատարակել հայերեն գրքեր, Հակոբ Մեղապարտն է՝ հայ տպագրության ուսման հիմնադրամ:

Հակոբ Մեղապարտը տպագրական գործով զբաղվել է վենետիկում, 1510-ական թթ.: Պատահական չէ, որ նա իր տպագրական գործունեության վայրը ընտրել էր վենետիկը: Գուտենբերգյան տպագրական արվեստը 1440-ական թվականներին ծագելով Գերմանիայում՝ 1465-ին հասել էր Իտալիա: Իսկ XV դարի վերջում վենետիկը դարձել էր եվրոպական տպագրության ամենախոշոր կենտրոնը: Ըստ մոտավոր հաշվումների, XVI դարի սկզբներին այս քաղաքում գործել են մոտ 250 տպարաններ: Վենետիկում էին իրենց գրահրատարակչական գործունեությունը ծավալել եվրոպական մի շարք նշանավոր տպագրիչներ, այդ թվում հռչակավոր Ալդո Մանուցիուսը, իր աշակերտներով և ժառանգներով:

Վենետիկը իտալական մյուս քաղաքներից ավելի հար-

մար էր հայկական տպագրութիւն սկզբնավորելու համար նաև այն պատճառով, որ կաթողիկոսական գրաքննութիւնը վենետիկյան հանրապետութիւնում մեղմ էր, և անծանոթ լեզվով գիրք հրատարակելու հաջողութիւնն առհասարակ չէր մեծ:

Նույն ժամանակաշրջանում վենետիկում իրենց մայրենի լեզուներով գրքեր էին հրատարակում նաև շատ ուրիշ ոչ իտալացի տպագրիչներ՝ գերմանացիներ, ֆրանսիացիներ, սերբեր, հուններ, հրեաներ և այլն: Հակոբ Մեղապարտը հազիվ թէ հաջողութիւն հասնէր, եթէ փորձեր հայերեն անգրանիկ գրքերը տպագրել իտալիայի մի այլ քաղաքում, ասենք՝ Հոմոնում. ի դեպ, հավանական է, որ նա նման փորձ արել է (ինչպես որ այդ փորձն արել են հետագա որոշ հայ տպագրիչներ):

Վերջապես, հայերեն տպագրութիւն սկսելու համար վենետիկն ուներ նաև մի այլ նպաստավոր պայման. այստեղ վաղուց ի վեր (հավանաբար XII դարից) կար հայկական համայնք: Եվրոպական տարբեր քաղաքների հետ առևտուր անող հայ վաճառականները մեծ մասամբ վենետիկով էին անցնում, Հայաստանից իբրև ուխտավոր կամ որևէ առաքելութիւնով ստացած եկուղները սովորաբար այցելում էին վենետիկ: Հայոց Կիլիկիան պետութիւնն և վենետիկյան հանրապետութիւնն միջև հաստատված վաղեմի բարեկամութիւնն էլ ավանդաբար պահպանվում էր: Դրա արտահայտութիւններէց էր վենետիկի Հայոց տունը, որը ստեղծվել էր Մարկոս Միանիի կտակով և ուր օթևանում, նյութական օժանդակութիւն էին ստանում հայ պանդուխտները: Ավելորդ չէ հիշել նաև, որ հայերը նկատելի ծառայութիւն են մատուցել վենետիկի՝ ժամանակին ծաղկուն հանրապետութիւնը, ուր եղել են անվանի հայ գործիչներ:

XVI դարում վենետիկը եղավ ոչ միայն հայ տպագրութիւն ծննդավայրը, այլև՝ օրրանը. այստեղ գործեցին նաև հայ երկրորդ, երրորդ տպագրիչները: Ավելին, մինչև XVII դարի սկիզբները ամենից ավելի շատ հայերեն գրքեր տպագրվել են վենետիկում:

* * *

Հակոբ Մեղապարտի գործի ու անձի վերաբերյալ գլխավոր աղբյուրները նրա հրատարակած գրքերն են և նրանցից մեկի մեջ եղած հակիրճ հիշատակարանը: Օժանդակ աղբյուրներ են՝ դիվանական որոշ փաստաթղթեր, Հակոբի գործի կողմնակի հիշատակումը և նրա տպագրական արվեստի որոշ տարրերի օգտագործումը հետագա հայ տպագրիչների կողմից, ինչպես և հայ հին տպագրութիւնն որոշ ավանդույթներ և այլն:

Հակոբ Մեղապարտի ծննդավայրը հայտնի չէ. ենթադրութիւն կա (Կ. Բասմաջյանի), որ նա երկար ժամանակ բնակվել է վենետիկում: Հակոբը եղել է ցածրաստիճան հոգեվորական: Վենետիկյան դիվանատան երկու փաստաթղթեր մտածել են տալիս, որ նա դեռևս XV դարի վերջում՝ 1498 թ. մի իտալացու՝ Դեմոկրիտո Տերրաչինայի հետ գործակցել է հայերեն գրքերի տպագրութիւն սկսելու նպատակով, բայց առանց որևէ արդյունքի: Տերրաչինայի մահից հետո Հակոբը Հոմոնի պապից հայերեն գրքեր տպագրելու թույլտվութիւն է ստացել (առանց մենաշնորհի). այդ առթիվ նա իր տպագրած «Ուրբաթագրքի» մեջ գրել է պապի պատկերը: Չի բացառվում, որ Հակոբը ինչ-որ կերպ սիրաշահած լինի նաև վենետիկի այն ժամանակվա դոժ Լեոնարդո Լորեդանոյին: Ապա՝ նա վենետիկի գրաձուլիչ վարպետներից մեկի մոտ իր գծագրերով պատրաստել է տվել հայերեն տպատառեր, ձեռք է բերել տպագրական սարքավորում և 1512 թ. վերջերին սկսել գրահրատարակչական գործը:

1513 թվականի մայիսի 31-ին վավերացված մի փաստաթուղթ վկայում է, որ վենետիկցի Պատուր և Լեյոն դի Մաքսիմի եղբայրների պահանջով վենետիկի հանրապետութիւնը այդ երկուսից բացի, մյուս բոլորին, 25 տարով խստիվ արգելել է իր տարածքում հայերեն գրքեր հրատարակել: Այստեղից ենթադրվում է, որ այդ որոշումը պատճառ է դարձել, որպեսզի նույն 1513 թ. վերջում (կամ գուցե 1514-ի սկզբում) Հակոբ Մեղապարտի տպարանը ընդմիջտ փակվի: Մեզ են հասել Հակոբ Մեղապարտի տպագրած 5 անուն գրքեր: Նրանց տպա-

գրական առանձնահատկությունների մանրամասն ուսումնասիրությունը ստույգ պարզել է այդ գրքերի տպագրման հաջորդականությունը, այն է՝ Ուրբաքազիրք, Պատարագատետր, Աղբարք, Պարգատումար, Տաղարան:

Ուրբաքազիրքը հայ առաջին տպագիր գիրքն է:

Գրքերից միայն Պատարագատետրն ունի հրատարակչական հիշատակարան, որը տպված է այդ գրքի վերջում՝ ազատ մնացած 5 տողի մեջ.

«Գրեցաւ սուրբ տառս ի ԶնԲ, ի աստուածապահ քաղաքս ի Վէնէժ, որ է Վենետիկ, Ֆրանկստան, ձեռամբ մեղապարտ Յակոբին: Ով որ կարդայք, մեղաց թողութիւն խնդրեցէք Աստուծոյ»:

Աշխարհաբար՝ «Այս սուրբ տառերը գրվեցին 962 (+ 551 = 1513)-ին Վենեժ աստվածապահ քաղաքում, որ է Վենետիկ՝ Ֆրանկստան, մեղապարտ Հակոբի ձեռքով: Ով կարդա, թող մեղքերիս թողություն խնդրի Աստուծոց»:

Ինչպես տեսնում ենք, հիշատակարանը վկայում է, որ «Պատարագատետրը» տպագրվել է 1513 թվականին, Վենետիկում, տպագրիչ Հակոբի կողմից, որը հետևելով հայ հին գրիչների սովորույթին իրեն մեղապարտ³ է անվանում և ընթերցողներից խնդրում է աղոթել իր մեղքերի թողության համար:

Քանի որ Ուրբաքազիրքը տպագրվել է Պատարագատետրից առաջ, կա հավանական ենթադրություն, որ այն նախորդ 1512-ին պետք է լույս տեսած լինի: Եվ այդպես, հայ տպագրության սկիզբը համարվում է 1512 թվականը:

Հակոբի տպարանի վերջին արտադրանքը մեկ տպագրական մամուլ (16 էջ) ծավալ ունեցող բնագիր է Վասն գանձի վերնագրով, որը տպագրվելուց հետո կցվել է Ուրբաքազիրքին:

Հակոբ Մեղապարտի տառերը խոշոր են, ձեռագրային տառերի նման և երկու տեսակ՝ 14 կետաչափի բոլորագիր հիմնական շարվածքի համար ու 16 կետաչափի գլխագրեր:


³ Հակոբի գործածած այս սովորական մականունը՝ Մեղապարտ, XIX դարի վերջերից սկսել է գործածվել իբրև հայ առաջին տպագրիչ անձանվան մի մասը:



Հակոբ Մեղապարտ (ըստ Ե. Տեմիրճյանի)



Աբգար Թոխաթեցի
(դիմանկար իր նրատարակած Սաղմոսարանից, 1565)



Նկ. 2. Հակոբ Մեղապարտի տպագրած Պատարագատետրի վերջին էջը՝ հիշատակարանով

Հայ տպագրութեան սկզբնավորողը ձգտել է իր հրատա-
րակութիւններին ձեռագիր՝ մատյանների տեսք տալ, քանի
որ վերջիններս այն ժամանակ հայութեան մեջ շատ հարգի
էին, իսկ տպագիր գրքերը՝ անսովոր: Հայաստանում տպա-
գրական դեռևս անծանոթ արվեստով ստեղծված մեքսոպա-
տառ գրքերը կարող էին վատ ընդունվել:

Ոչագրավ է և այն, որ Հակոբ Մեղապարտի գրքերում բո-
լորագիր յուրաքանչյուր տառից ոչ թե մեկ, այլ մի քանի հատ
կա, ամեն մեկն իր փոքր-ինչ ուրույն գծագրութեամբ: Սովոր-
աբար նույն տառատեսակի ու չափի միևնույն տառի բոլոր
տպատառերը (լիտերները) մի մայրից⁴ են ձուլվում և գծա-
գրութեամբ միմյանցից չեն տարբերվում: Հակոբը միևնույն
տառի համար (ասենք ա-ի համար) մի քանի մայրեր է պատ-
րաստել ավել և ամեն տպատառից մի քանի տարբերակ է
ունեցել. այնպես որ նույն տողում, նույնիսկ միևնույն բառի
մեջ նույնարժեք տառերը հաճախ քիչ տարբեր գծագրութիւն
ունեն: Սա նույնպես տպագիր գիրքը ձեռագրի նմանեցնելու
ձգտման հետևանքն է:

Իր հիշատակարանում էլ Հակոբը գրել է ոչ թե «տպեցալ»
կամ «ճղալ ստամպալ» և կամ նման մի բան, ինչպես հետա-
գայում գրում էին հայ տպագրիչները, այլ «Գրեցալ սուրբ
տառս», այսինքն՝ ինչպես ընդունված էր ձեռագրերի հիշատա-
կարաններում:

Հակոբ Մեղապարտը բացի գլխագիր և բոլորագիր տա-
ռերից, օգտագործել է նաև հատուկ ոճի զարդագրեր՝ որպես
մեծատառ: Նրա գրքերում կան նաև զարդեր: Վերնախորագրե-
րի համար Հակոբն օգտագործել է 24 զարդ-շրջանակներ,
որոնք գծագրման ոճով երեք ութնյակի են բաժանվում: Նրանք
փոխեփոխ գրված են գրքերի բոլոր էջերի վերևում: Բացի դրա-
նից, կան քառանկյունի շորս գեղեցիկ զարդեր՝ առաքեսկ ոճի,

⁴ Մայր (մատրիցա) կամ տառամայր կոչվում է տառի դրոշմվածքը
մետաղի վրա, որը լինում է կաղապար տպատառը ձուլելիս: Հայր (պուն-
սոն) կամ տառահայր կոչվում է պողպատյա տառաձևը, որը հարթածով
դրոշմվում է ավելի փափուկ մետաղի վրա, և ստացվում է մայր:

որոնք դրոշմված են գրքերից վերջին երկուսում, ամենից շատ
Տաղարանում:

Հակոբի տպագրութիւնը երկգույն է՝ սև և կարմիր:


Գրքերի վերջում տպված է Հակոբ Մեղապարտի խաչա-
ձև տպարանանիշը՝ լատինական շորս տառերով՝ D. I. Z. A. +
Այս հապավումները վերծանվում են հետևյալ կերպ. D. =
= Dei servus (Աստծո ծառայող), I. = Iacobus (Հակոբ), Z. =
= Zanni (Մաննի(յան) հայերեն՝ Հովհաննիսյան), A. = Ar-
menius (հայ):

Հակոբ Մեղապարտի տպագրած գրքերի բովանդակու-
թիւնը բազմազան է: Միջնադարում թե՛ պատարագատեսարերը,
թե՛ ուրբաթագրքերն ու աղթարքները և՛ թե պարզատուճար-
ներն ու տաղարանները ձեռագիր ընդօրինակութիւններով
տարածված են եղել հայոց մեջ: Ընդ որում, բացի Պատարա-
գատերից, որ եկեղեցու ծիսական գրքերից է, մյուսները ըն-
թեղցվել են թե՛ եկեղեցականների, և՛ թե աշխարհականների
կողմից: Այդպիսով, հրատարակութեան համար Հակոբի ընտ-
րածը Հայաստանում և հայ գաղթավայրերում համեմատա-
բար շատ ընթերցվող գրքերից են եղել:

Ուրբաթագիրքը՝ հայերեն առաջին տպագիր գիրքը, միջ-
նադարյան մի ժողովածու է, որ պարունակում է ապաքինման
աղոթքներ ու մաղթանքներ, ինչպես, օրինակ, Կիպրիանոս
Անտիոքացու աղոթքը, «Պատմութիւն Յուստիանէ կուսին»,
«Աղօթք Փոկասու», ապա կան ընդարձակ հատվածներ Ավե-
տարաններից, Գրիգոր Նարեկացու երկից հատված և այլն:
Ժողովածուն կոչվում է Ուրբաթագիրք այն պատճառով, որ
նրանում գրված առաջին գործի անունն է «Սուրբ Ուրբաթ» և
սկսվում է այսպես. «Ուրբաթ օր կամ շորեքշաբթի տանին
զհիւանդն...»:

Ահա մի պատառիկ Գրիգոր Նարեկացու «Մատեան ող-
բերգութեան» երկից, որ տեղ է գտել Ուրբաթագրքի մեջ.

Ողջանան վէրք, բառնան ապականութիւնք,
Տեղի տան տխրութիւնք, նահանջին հեծութիւնք,
Փախնու խաւարն, մեկնի մէզն,



Նկ. 3. Հայերեն առաջին տպագիր գիրքը՝ Ուրբանագիրքը (առաջին էջ), Վենետիկ, 1512 թ.

Մերժի մառախուղն, փարատի մռայլն,
Սպառի աղչամուղչն, վերանայ մութն,
Գնայ դիշերն, տարագրի տաղնայն,
Զբանայ շարիքն, հալածին հուսահատութիւնք...

Պատարագատետրը հայ եկեղեցու պատարագամատուցի մի տարբերակն է, պատարագ անելու կարգն է պարունակում:

Աղբարքի մի հատվածը միջնադարյան հետաքրքրական բժշկարան է. «Բժշկարան և հարքիմարան մեծին Ճալիանոս հարքիմին արարեալ»: Տրված են դեղերի բաղադրություններ: Գրքի մի դրալի մասն էլ պարունակում է աստղագուշակութուն, երազացույց և միջնադարին հատուկ նման ավերորդապաշտություններ:

Պարգատումարը հիմնականում անշարժ տոմարացույց է 36 տարիների համար, սկսած 1512 թվականից: Այստեղ կա նաև կուսնացույց, Մարմնախաղաց, Երազացույց և այլն: Այս մասերը նման են Աղթարքին:

Տաղաբանը միջնադարյան հայերեն տաղերի ու հանելուկների մի հիանալի հավաքածու է, բաղկացած հայ միջնադարյան նշանավոր բանաստեղծների՝ Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Ֆրիկի, Հովհաննես Քլիուրանցու, Մկրտիչ Նաղաշի և այլոց երկերից: Հիշենք մի հատված Քլիուրանցու տաղից, որ տպված է տաղարանի 9-րդ մամուլի 8-րդ էջում.

Ահայ եղև պայծառ դարուն,
Մաղկեաց այգին ու պաղչանին,
Դաշտք ու լեռունք զարդարեցան,
Արօտ հանին ըզխիլանին:
Գոյնքն ծաղկին ու հետ կապին,
Անուշանայ հովն ու քամին,
Զագերն ձայն ածեն այգին,
Քաղցր կու գա ձայն պլպուլին:

Զգալի տեղ է հատկացված Ներսես Շնորհալու հանելուկների, որոնք միջնադարյան Հայաստանում սիրված են եղել: Ահա դրանցից մեկը.


Գիրք

Տուն մի տեսայ սպիտակ փռած
 Ու սև հաւեր ի ներս թառած.
 Ձուս ածէին՝ ցեղ ի ցեղաց,
 Լեզուով խօսին բանականաց:

Հայ տպագրութեան երախայրիքները իրենց էջերում օգտակարի ու գեղեցիկի հետ պարունակում են նաև կախարհանքներ, այսինքն՝ սնահավատութեանը սնունդ տվող նյութեր: Դա օրինաչափ էր: Եվրոպական վաղ տպագրությունները նույն կարգի էին. նրանց մեջ ևս արժեքավոր երկերի կողքին կային «մեղքերի թողութեան» թղթեր, գուշակություններ և այլն: Կավը և վատը զուգահեռաբար լույս ընծայելու այդ հատկանիշը տպագրական արվեստը պահեց նաև հետագայում:

Հակոբի գործունեությունից հետո հայկական տպագրության կենդարչա դադար է եղել: Եվ ապա՝ հակոբյան հրատարակությունները հիմք ու ելակետ են դարձել հայկական տպագրության շարունակման համար: Հայ երկրորդ տպագրիչ Աբգար Քոխաթեցին իր տպագրական աշխատանքն սկսելուց առաջ ձեռքի տակ ունեցել է Հակոբի հրատարակությունները և օգտվել դրանցից: Աբգարն իր տպատառերը և տպագրությունը մի քանի անգամ անվանում է «նոր գիր»: Այսպես, 1565 թ. հրատարակած իր տոմարացույցի («Խառնայփնթուր տումարի») հիշատակարանում Աբգարը գրում է. «Քոխի ՌժԳ շինեցօ նոր գիրս հայոց և այս խառնայփնթուրս»: Ուրեմն, Աբգարին ծանոթ են եղել նախորդ կամ «հին գիրը», այսինքն՝ Հակոբի հայերեն տպագրությունն ու տպատառերը:

Աբգարի տպատառերը նույնպես ձեռագրի ձևով են պատրաստված, և դա արված է Հակոբի ձեռագրակերպ հրատարակություններին նմանվելու հակումով: Եթե Հակոբը որոշակի նպատակով ձգտել է իր տպագիր հրատարակությունները ներկայացնել իբրև ձեռագիր, ապա նրանից կես դար հետո գործած Աբգարը նման ձգտում չի ունեցել. ավելին՝ ընթերցողին թյուրիմացությունից զերծ պահելու համար նա որոշակիորեն



Նկ. 4. Հակոբ Մեղակեցու տպագրական արվեստի օրինակներ (սաղավոր)

գրել է, որ իր հրատարակությունը տպագրի է. «ամէն կոխած է, իսկի գրչի գիր չկա ի գիրքս»,— կարդում ենք Աբգարի հրատարակած Սաղմոսարանի հիշատակարանում: Պետք է եզրակացնել, որ Աբգարը ձեռագրակերպ տառեր է ձուլել տվել սոսկ հայկական առաջին տպագրության օրինակին հետևելով:

Աբգար Թոխաթեցու օգտագործած զարդագրերն էլ պատրաստված են Հակոբ Մեղապարտի զարդագրերի ոճով: Հայկական ձեռագրային բազմաթիվ ու ամենատարբեր ոճի զարդագրերից Աբգարը պատրաստել է տվել հենց այնպիսի ոճի զարդագրեր, որպիսիք հիսուն տարի առաջ օգտագործել է առաջին հայ տպագրիչը: Նա իբրև իր զարդագրերի նմուշներ նկատի է ունեցել Հակոբի գրքերում եղածները:

Հակոբի զարդագրերի ոճը պահպանեց նաև հայ երրորդ տպագրիչը՝ Աբգարի որդի Սուլթանշահը, որից հետո զարդագրերի այդ ձևերը այլևս չեն հանդիպում հայ հնատպագրերում: Սուլթանշահը իր գործընկեր Հովհաննես Տերզնցու հետ օգտագործել է նաև Հակոբի քառանկյունի զարդերի ձևը:

Աբգար Թոխաթեցու տպագրած գրքերի շփեր, տողատուժը, երկգույն (սև, կարմիր) տիպը նույնպես Հակոբ Մեղապարտի տպագրական ավանդույթն են հիշեցնում: Այսպիսի հայ երկրորդ տպագրիչն էլ Հակոբի նման հրատարակեց Պատարագատետր, Պարզատուժար, Տաղարան:

Եվ այսպես, հայ տպագրության կեսդարյա ընդմիջումը մոռացության չմատնեց առաջին տպագրիչի գործը, և կառուցվող շենքի պատը բարձրացվեց նրա դրած հիմքի վրա: Աբգար Թոխաթեցու տպագրական աշխատանքը անմիջականորեն շարունակեց նրա որդին՝ Սուլթանշահը, Հովհաննես Տերզնցու հետ: Այդպիսով, XVI դարի հայ տպագրիչների գոհարատարակչական գործունեությունը մեկը մյուսի շարունակությունն է եղել, մեկը մյուսի հետ առնչված և ամբողջությամբ՝ հաջորդ գրքերի հայկական տպագրության ակունքը: Ուրեմն, հայ առաջին տպագրիչ Հակոբ Մեղապարտը ոչ միայն հայկական տպագրության սկզբնավորողն է, այլև հիմնագիրը:

Հակոբ Մեղապարտի շնորհիվ արևելյան լեզուների մեջ եբրայերենից հետո, արաբերենի հետ միասին հայերենը

առաջինն էր, որ դարձավ գուտենբերգյան տպագրության լեզու: Իսկ ՍՍՀՄ լեզուներով գոյություն ունեցող տպագրությունների սկզբնավորման ժամանակագրությունը հետևյալն է. հայերեն՝ 1512 թ. (Վենետիկ, առաջին պահպանված հրատարակած գիրք), ռուսերեն և բելոռուսերեն՝ 1517 թ. (Պրագա, Սաղմոսարան), էստոներեն՝ 1535 թ. (Վիտենբերգ, Ս. Վանդրատի Քրիստոնեականը), լիտվերեն՝ 1547 թ. (Քյոնիգսբերգ, Մաթվիդասի Քրիստոնեականը), լատվիերեն՝ 1585 թ. (Վիլնյուս, Պ. Կանդուսի Քրիստոնեականի թարգմանությունը), վրացերեն՝ 1629 թ. (Հոմ, Վրաց-լատիներեն բառարան), մոլդավերեն՝ 1643 թ. (Ցաղ, «Կիրակնօրյա քարոզների ուսմիական գիրք»՝ Վարլամի թարգմ.):

Կա կարծիք, որ Հակոբ Մեղապարտի տպագրական աշխատանքը իր դերն է խաղացել նաև հայկական շրջանակներից դուրս: Օրինակ, արդեն հիշված Ալեքսեյ Միդորովն այն կարծիքին է, որ «արաբեսկ» կոչվող զարդերի օգտագործումը XVI դարի ռուսաստանյան հրատարակությունների մեջ պետք է կապել հայկական վաղ տպագրության հետ, որ «Վենետիկից հայկական զարդանկարը հասել է Մոսկվա՝ Իվան Ֆյոդորովին»⁵:

Աբգար Դպիր Թոխաթեցի, Սուլթանշահ, Հովհաննես Տերզնցի

Երկրորդ հայ տպագրիչը՝ Աբգար Դպիր Թոխաթեցին, պատմությանը լավ հայտնի անձնավորություն է: Նա իրեն հռչակել է որպես հայոց թագավորների շտապիղ, թագավորազն, որ նշանակում է, թե Հայաստանի թափուր գահի հավակնորդն էր: Նա դարձավ XVI դարի հայոց ազատագրական ձգտումների կենտրոնական դեմքերից մեկը: Աբգարը նաև ժամանակի զարգացած մտավորականներից էր, գործելու եռանդով լի մարդ: Այս ամենը պատճառ դարձան, որ Միքայել Սեբաստացի կաթողիկոսը Աբգարին հանձնարարի

⁵ Տե՛ս 400 лет русского книгопечатания, АН СССР, М., 1964, էջ 32—33; «Советская культура», 1963, № 41:



Աղաթքինսպետեցայնսնս
 ք հյալմեթնն ևսն Հակոբակորոցապակասուն
 Եւսպանե եղերմեղ յայգե յ
 Եւսղմիսն չե լերինք Կասա
 աստեալինս. ստեղծ երդերկիրև զս
 մնասն սին գերս:
 3 աւիտենից միսն չե յաւիտեանս
 զուեա. և մի դարձ ուղաներ զմարդ
 Խաւառ սպանս և ասացեր դարձար

Նկ. 5. Արգար Քոխաթեցու տպագրած Սաղմոսարանից մի էջ

Հոռոմ մեկնել և այնտեղ որպես Հայաստանի ներկայացուցիչ բանակցություններ վարել պապի հետ: 1562 թ. Սեբաստիայում գումարվեց մի ժողով, որտեղ կաթողիկոսն Աբգարին հանձնեց նամակ՝ ուղղված Հոռոմի պապին և մի վկայագիր՝ Աբգարի թագավորազն լինելու մասին: Նույն թվականին Աբգարը մեկնեց Իտալիա՝ իր որդի Սուլթանշահի և Ալեքսանդր քահանայի ուղեկցությամբ: Պատգամավորության գլխավոր նպատակն էր Հոռոմի ուշադրությունը հրավիրել Հայաստանի ազատագրության հարցի վրա, սակայն այդ ուղևորության շուրջափելի արդյունքը եղավ հայկական նոր տպագրությունը:

XVI դարի 60-ական թթ. Իտալիայում ուժեղացել էր կաթողիկական գրաքննությունը, մոլեզնում էր հավատաքննությունը: Այդ երկրում հայերեն գրքեր տպագրելը շատ ավելի դժվար էր դարձել, քան Հակոբ Մեղապարտի օրերին: Աբգարը կարողանում է Հոռոմի պապից հայերեն տպատառեր պատրաստելու թույլտվություն ստանալ, որ ինքնըստինքյան մեծ հաջողություն էր այն օրերին: Տպատառերը պատրաստել է տալիս Հոռոմում և Կոստանդնուպոլիս վերադառնալու ճանապարհին բավական ժամանակ կանգ է առնում Վենետիկում: Եղած որոշ տեղեկություններ մտածել են տալիս, որ Աբգարը մտադիր է եղել հայերեն տպատառերն ու տպագրական որոշ սարքեր տանել Հայաստան:

Քուրբական իշխանությունները կասկածում են Իտալիայում Աբգարի ունեցած գործունեության վրա՝ նրանում քաղաքական միտումներ տեսնելով: Ըստ մի վավերագրի⁶, այդ կասկածները փարատելու նպատակով է, որ Աբգարը իր տպարանը աշխատեցնում է Վենետիկում (ցույց տալու համար, որ Արևմուտք մեկնելու իր միակ նպատակը հայերեն գրքեր տպագրելն է եղել):

Վենետիկում 1565 թ. Աբգարը մի մեծադիր թերթի վրա տպագրում է տոմարացույց՝ «Սուլթանալփինթուր տումարի գեղեցիկ և պիտանի» վերնագրով, որի ճակատին կա երկու հե-

⁶ Սուլթանշահի նամակը (1583 թ.) Քաղեսու կաթողիկոսին, տե՛ս Վ. Զարգարյան, Հիշատակարան, հատ. 5, Կահիրե, 1939, էջ 13:

տաքրքրական նկար: Առաջինում պատկերված է ինքը՝ Աբգարը իր որդու հետ Հոռմի պապի և կարգինալների առջև, հայերեն տպատառերը ձեռքին, որ խորհրդանշում է պապից հայերեն տպատառեր պատրաստելու իրավունք ստանալը: Մյուս նկարում Աբգարը Վենետիկի դոժի և մեծամեծների առջև է կանգնած (հավանաբար, տպագրության իրավունք է խնդրում):

1565—1566 թթ. Աբգար Թոխաթեցին Վենետիկում տպագրում է Սաղմոսարան, որի մեջ նույնպես գրված են վերոհիշյալ նկարները: Այնուհետև, նա տպագրական պարագաները վերցրած, մեկնում է Կոստանդնուպոլիս:

Այստեղ Աբգարի տպարանը գործում է Ս. Նիկողայոս երկու եկեղեցիներից մեկի բակում: 1567-ի վերջին այս տըպարանում սկսվում է Փոֆր ֆերականութիւն կոչվող գրքի տպագրությունը, որ լույս է տեսնում 1568-ին: Դա հայերենի դպրոցական դասագիրք էր, առաջին հայերեն տպագիր դասագիրքը: Ապա 1568-ի ընթացքում Աբգարը՝ Առաքել Խորվիրակեցու և այլոց օգնությամբ հաջորդաբար լույս է բնծայում Տօնացոյց, Պարգատումար, Աղօթամատոյց (Ժամագիրք) և Պատարագամատոյց (մի գրքով), Տաղարան, Մաշտոց: Այս վերջինը հայոց եկեղեցու ծիսարանն է, Ժամագիրքը՝ եկեղեցու ժամակարգության ուղեցույցը, իսկ Պատարագամատոյցը նույն Պատարագատետրն է, որ կոչվում է նաև Խորհրդատետր:

Աբգարի ծառայությունը եղավ ոչ միայն այն, որ նա նոր կյանք հաղորդեց հայ տպագրության ընդհատված գործին, այլև այն, որ տպագրությունը հաստատեց հայաշատ մի քաղաքում՝ Կոստանդնուպոլսում, որն ավելի ուշ (XVIII դարում) պետք է դառնար հայկական գրահրատարակչության գլխավոր կենտրոնը՝ գերազանցելով անգամ Վենետիկին: Բացի դրանից՝ Աբգարի հայկական տպարանը գրահրատարակչական գործը մտտեցրեց հայրենիքին, կարծես ավելի մատչելի դարձրեց այն Հայաստանի համար:

Աբգար Թոխաթեցու որդի Սուլթանշահը (Մարկանտոնի-նո) հոր հետ մեկնելով Հոռոմ՝ մնում է այդտեղ և ուսումնասի-

րում շատինական դպրությունը: Ապա նա նկատելի դիրք է ձեռք բերում Վատիկանում, հնարավոր օգնություն է ցույց տալիս պանդուխտ հայերին:

Սուլթանշահը 1579 թ. Հոռոմի Գրիգոր XIII պապից կարգադրություն է առնում հայերեն տառեր ձուլելու: Նա Հոռոմում աշխատող ֆրանսիացի գրածուլող վարպետ Ռոբերտ Գրանժոնին հանձնում է հայերեն տառերի գծագրեր և պատրաստել տալիս գլխագիր ու բոլորագիր մի ձեռք տպատառեր: Բոլորագրերը համեմատած Հակոբի և Աբգարի տպատառերի հետ մանր էին և սկզբնատեսակն էին այժմ հայերեն ամենից ավելի շատ տարածված բոլորագիր տպատառերի (10 կետաշափի հասարակ): Սուլթանշահի այդ տպատառերը երկար ժամանակ՝ մինչև 1780-ական թվականները, գործածվեցին Հոռոմի տպարաններում՝ հայերեն գրքեր հրատարակելու համար: Իսկ առաջին անգամ նրանք գործածվել են նույն 1579 թ. տառերի պատրաստման վերաբերյալ մի էջանոց Հայտարարութիւն տպագրելու նպատակով:

1580-ական թվականների սկզբին Հոռոմում Սուլթանշահին սկսում է գործակցել քահանա Հովհաննես Տերզնցին, որն իր որդի Խաչատուրի հետ Հոռոմ էր եկել Հայաստանից (Տերզնցին Բաղեշի շրջանից էր, ապրել էր նաև Ամիգ քաղաքում):

Այս երկուսի ջանքերով, Վատիկանի նախաձեռնությամբ 1584 թ., Հոռոմի Դոմինիկ Բազա տպարանում հրատարակվում է Գրիգոր XIII պապի կազմած նոր տոմարի հայերեն փոխադրությունը՝ «Տօմար Գրիգորեանն յափտենական»: Տպագրությունը կատարվել է սուլթանշահ-գրանժոնյան տպատառերով: Գրքի փոխադրությունը և տպագրությունը գրեթե ամբողջությամբ իրականացրել է Հովհաննես Տերզնցին՝ իր որդի Խաչատուրի հետ:

Նույն 1584-ին այդ տառերով Սուլթանշահն ու Տերզնցին Հոռոմում տպագրեցին «Դաւառութիւն ուղղափառութեան» գրքույկը, իսկ 1586-ին Սուլթանշահը հրատարակեց հայոց եկեղեցու ծիսարանից՝ Մաշտոցից, մի հատված:

Տերզնցին անցնելով Վենետիկ, այնտեղ նոր տառեր է պատրաստել տալիս և 1587 թ. լույս է բնծայում Սաղմոսա-

րան: Երկգույն, մանր տառերով տպագրված այս գիրքը պարունակում է Տերզնցուն և նրա որդուն ներկայացնող գիմանկար, իսկ Հիշատակարանը պատմում է Իտալիայում հայ տպագրիչի անցկացրած արկածալից, դժվարին կյանքի մասին:



Նկ. 6. Հովհաննես Տերզնցի (պատկերը 1587 թ. իր տպագրած Սաղմոսարանից)

Հայ հին տպագրիչները հակում ունեին Սաղմոսարան հրատարակելու: Սաղմոսարանը կրոնական գիրք լինելով՝ նաև աշխարհականների կողմից էր ընթերցվում: Փոքր չափով հրատարակված սաղմոսարանները երկրից երկիր իրենց հետ ման էին ածում ու կարդում նույնիսկ կիսագրագետ հայ վաճառականները, պանդուխտ այլ հայեր: Սաղմոսարանն օգտա-

գործվում էր նաև դպրոցներում իբրև հայերենի դասագիրք: Տերզնցին, Աբգար Թոխաթեցուց հետո Սաղմոսարան հրատարակելով, իր մասնակցությունն է բերել հայ ընթերցողների և դպրոցի այդ պահանջները բավարարելու գործին:

Այնուհետև, նա մեկնել է Մարսել և հայերենի փոխադրել «Պատմութիւն Փարէզի և Վեննայի» միջնադարյան սիրավեպը:

Հովհաննես Տերզնցու գործունեությամբ ավարտվում է հայ տպագիր գրքի պատմության վաղ շրջանը՝ հայ տպագրության առաջին դարը:

Հակոբ Մեղապարտից մինչև Տերզնցի թեև մեսրոպատա շատ գրքեր շտպագրվեցին, բայց ստեղծվեցին ավանդներ, մանավանդ վատահույություն հայկական ինքնուրույն տպագրություն ունենալու նկատմամբ: Մշակութային ասպարեղ մտան հայ տպագրիչները՝ իրենց գործով խանդավառ, հաճախ մարտիրոսության աստիճանի հայ գրքին նվիրված անձինք:

* * *

Հայկական տպագրության առաջին դարում, բացի հայերից, մեսրոպատա տպագրություն կատարեցին նաև մի քանի եվրոպացիներ: Այսպես, հայատառ փայտփորագիր տպագրություն տեղ գտավ Փարիզում լույս տեսած հետևյալ երեք գրքերի մեջ. արևելագետ Կուլիեյմ Պոստելի «Linguarum»-ում (1538 թ.), Բլեզ դը Վիժների «Ձեռնարկ ծածկագրերի մասին» աշխատության մեջ (1586 թ.) և Պետրոս Գետանոս Պալմայի «Նմուշներ»-ում (1596 թ.): Հայկական տպագիր հատվածներ (շարժական տառերով) կան իտալացի արևելագետ Թեդեսո Ամբրոսիոսի «Ներածություն»-ում (Բազիլա, 1539 թ.) և գերմանացի հեղինակ Լեոնարտ Թուրնայզերի երկու աշխատություններում (Բեռլին, 1583 թ.):

Այս բոլոր գրքերը միաժամանակ հայագիտական ամենավաղ հրատարակություններն են, քանի որ նրանցում տեղեկություններ են տրված հայերի, Հայաստանի ու հայոց լեզվի մասին, և մեսրոպատա տպագիր հատվածները բերված են իբրև նմուշ՝ հայերենի ու նրա տառերի:

Հայկական տպագրութեան առաջին հարյուրամյակում հայ տպագրիչների ձեռքով տպագրված երկերից մեկ հասել է 18 անուն-հրատարակություն, այդ շրջանում եվրոպացիների տպագրած 9 գրքեր գիտենք, որոնցում փայտափորագիր կամ տպագիր հայերեն նմուշներ կամ այբուբեններ կան: Ուրեմն XVI դարից առայժմ հայտնի է 27 հայատառ տպագրություն: Իհարկե, հունձքը մեծ չի եղել, բայց գրանք առաջին պրտուղներն են, և իբրև այդպիսիք նվիրական են հայ մշակույթի պատմության համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԻ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԸ

Հայ տպագիր գիրքը XVII դարում, մինչև 1660-ական թվականները շարունակում էր ստեղծվել ժամանակով և տարածքով իրարից անջատ երևան եկող ու անհետացող տպարաններում: 1660 թ. հիմնվեց Ոսկանյան տպարանը, որից հետո հայկական տպագրությունը շարունակվեց անընդմեջ: Արդեն հաջորդ XVIII հարյուրամյակին հատուկ որոշ երևույթներ նկատելի են Վանանդեցի գրահրատարակիչների աշխատանքում, որ սկիզբ առավ 1685 թվականին ու շարունակվեց մինչև 1717 թ.: Ուրեմն XVII դարը հայ գրքի պատմության համար հատկանշական է հետևյալով. մի կողմից կարճատև կյանք ունեցող հայկական տպարաններ, մյուս կողմից՝ դարի երկրորդ կեսում շարունակաբար գործող հայկական տպագրության հիմնադրում և XVIII դարի հայ գրքի հրատարակությունը բնորոշ երևույթների սկզբնավորում:

Հայ ժողովրդի և նրա մշակույթի կյանքում XVII դարը չորջ հետք թողեց նախ նրանով, որ դարասկզբին՝ 1604 թ. պարսից շահ Աբասը արևելքից հարձակվող թուրքական բանակին ընկճելու նպատակով Արարատյան դաշտի և շրջակա գավառների հայկական բնակչությունը բռնի կերպով տեղափոխեց Պարսկաստանի խորքերը՝ Հայաստանի հսկայական տարածություններ հայազրկելով:

Բռնագաղթի նպատակներից մեկն էլ հայերի միջոցով Կենտրոնական Պարսկաստանի տնտեսությունը զարգացնելն

էր: Այն ժամանակվա պարսից մայրաքաղաք Սպահանի մոտ հիմնվեց Նոր Ջուղա հայկական ավանը, որը այս հարյուրամյակում մեծ դեր կատարեց հայոց տնտեսական, մշակութային, հասարակական կյանքում: Արևելքի և Արևմուտքի միջև կատարվող առևտրի մի զգալի մասն իրենց ձեռքը վերցրած նորջուղայեցի հայ վաճառականները մեծ հարստություն կուտակեցին, և Նոր Ջուղան տնտեսապես ծաղկեց: Այստեղ զարգացավ նաև հայ կերպարվեստը, ուսումնական գործը, բանարվեստը՝ թե գրավոր, թե նորգուսանական (աշուղական): Նոր Ջուղան այնքան ազդեցիկ դարձավ, որ վճռական դեր սկսեց կատարել նույնիսկ հայ կաթողիկոսների ընտրության գործում. XVII դարում նորջուղայեցիների միջամտությամբ ընտրվեցին Մովսես Տաթևացի, Փիլիպոս Աղբակեցի և Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսները, որոնք նորոգեցին հայոց եկեղեցական, մշակութային ու հասարակական կյանքը:

XVII դարում նկատելի շափերի հասավ հայերի կաթոլիկացումը: Հայ ղեկավարները շարունակաբար գիմում էին Հռոմ՝ ինդրելով ձեռնարկել Հայաստանի ազատագրմանը: Հռոմը պահանջում էր հայերի կաթոլիկացում, թեև որևէ քայլի չէր ձեռնարկում ազատագրման ուղղությամբ: Առհասարակ, տարբեր միջոցներով հայության առանձին հատվածներ կաթոլիկ էին դարձվում: Հատկապես նկատելի եղավ լեհահայության կաթոլիկացումը 1630—1680-ական թվականների ընթացքում: Կաթոլիկացումը ազդակում էր հայերի ուժացմանը, որն, իհարկե, այլ պատճառներ ևս ուներ: Ընդհանրապես, այս հարյուրամյակում հայերի մի շարք հատվածներ այլալեզու դառնալու և ձուլվելու ճանապարհը բռնեցին, թեև դրա դեմ պայքարում էին առավել լուսավորյալ գործիչները:


Հ Ո Ո Մ

Այս հարյուրամյակում հայերեն առաջին տպագրությունը կատարվել է Հռոմում, 1603 թվականին. կոչվում է «Ի կարճառու վարդապետութենէ քրիստոնէից»: Ընդհանրապես, XVII դարում Հռոմում տպագրվել են մոտ 30 անուն հայերեն գրքեր՝

հիմնականում Վատիկանի Հավատի բարոզչության տպարանում: Այս տպարանը, որ ընդունված է կոչել Ուրբանյան (հիմնադիրն է Ուրբանոս VII պապը), բացվել է 1627 թ.: Այն կաթոլիկական բարոզչության նպատակով գրքեր էր տպագրում մի շարք լեզուներով՝ այդ թվում արևելյան: Օրինակ, այստեղ 1629 թ. հրատարակվեց վրացերեն առաջին տպագիր գիրքը՝ վրաց-լատիներեն բառարան:

Վատիկանի հայկական հրատարակությունների նպատակն էր հայերի մեջ կաթոլիկական բարոզչությունն ուժեղացնել, ինչպես նաև օգնել Հռոմի այլազգի բարոզիչներին սովորելու հայերեն: Հռոմը Հայաստան և հայաբնակ այլ վայրեր ուղարկելու համար բարոզիչներ էր պատրաստում ոչ միայն հայազգի, այլև այլազգի՝ գլխավորապես իտալացի, ֆրանսիացի երիտասարդներից: Հայ և այլազգի աշակերտներին կրթելու համար անհրաժեշտ էին հայոց լեզվի ձեռնարկներ: Այդպես, Հռոմում տպագրվեցին հայերեն այբբենարաններ (1623 և 1673 թթ.), ապա՝ կաթոլիկական բարոզիչ, հայագետ Կղեմես Գալանոսի «Քերականական և տրամաբանական ներածություն»-ը (1645 թ.), որ գրաբարի և տրամաբանության ձևանարկ է, Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցու «Ձուռթիւն հայկարանութեան» գիրքը (1674 թ.), որ նույնպես գրաբարի ձեռնարկ է, Աստվածատուր ներսեսովիչի «Բառգիրք կատինացոց և Հայոց» բառարանը (1695 թ.) և ուրիշներ:

Հռոմում տպագրված հայերեն գրքերի մեծ մասը դավանաբանական-բարոզչական բնույթ ունի: Դրանցից են. կաթոլիկական դավանանքի հանգանակը՝ «Պաւանութիւն ճշմարիտ և ուղղափառ հաւատոյ» (1642 թ.), վերոհիշյալ Կղեմես Գալանոսի «Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծ սուրբ եկեղեցւոյն Հռոմմայ» բաղմահատոր աշխատությունը (1650—1690 թթ.), մի այլ կաթոլիկ բարոզիչի՝ Պ. Պիրոմալլիի «Յաղագս ճշմարտութեան հաւատոյն քրիստոնեականի» գիրքը (1678 թ.) և ուրիշներ: Լատիներենից հայերեն թարգմանված (Պետրոս Պողոսի կողմից) կաթոլիկական դավանանքը բարոզող հայտնի գրքերից է 1630 թ. լույս տեսած «Առաւել պար-



Նկ. 7. «Առաւել պարզարանութիւն» (անվանաթերթ),
Հռոմ, 1630 թ.

զարանութիւն» երկը, որը 1633 թ. վերահրատարակեց Փարիզում:

Հոռմում հրատարակված այս բոլոր գրքերը տպագրվել են սուլթանշահ-գրանժոնյան տառերով:

Հայերը շարունակաբար Վատիկանին էին դիմում հայերեն Աստվածաշունչ տպագրելու խնդրանքով. հայոց կաթողիկոսները, Կոնստանդնուպոլսի պատրիարքները, նոր Զուղայի վաճառականները անընդհատ նման դիմումներ էին ներկայացնում: Հոռմում մի շարք անգամ քննվել է այդ հարցը: Սակայն միշտ առանց արդյունքի:

Լվով, Նոր Զուղա, Կոնստանդնուպոլիս, Վենետիկ

XVII դարի սկզբներից տնտեսական և մշակութային աշխուժություն էին ապրում Գալիցիայի ու շրջակա երկրամասերի հայկական գաղութները (լեհահայեր, հունգարահայեր, մոլդովահայեր, ուկրաինահայեր), որոնց կենտրոնը Լվովն էր: Այդ աշխուժության մի արդյունքն էր հայկական տպագրության երևան գալը Լվովում:

Հայաստանի Բաղեշ քաղաքից Լվով եկած քահանա Հովհաննես Քարմատանենցը 1615 թ. ընթացքում պատրաստում է հայերեն տպատառեր, կահավորում տպարան (ինչպես ինքն է անվանում՝ կաղմարան) և 1616 թ. լույս է ընծայում մի Սաղմոսարան:

1618 թ. նույն տպարանում հրատարակվում է ղաչաղերեն մի աղոթագիրք՝ «Աղօթք հասարակաց»: Ղաչաղերենը Կիևյան Ռուսիայի վաղեմի հակառակորդ պոլովցիների լեզուն էր, որ արդեն XVI դարում Լվովի ու շրջակայքի հայերի զգալի մասի համար դարձել էր խոսակցական լեզու: Քարմատանենցը տրպագրելով այդ լեզվով աղոթագիրք, թերևս, «աշխարհաբար» հրատարակություն է կատարել. դա առաջին դեպքն էր, երբ հայերեն կրոնական գիրքը տպագրվում էր ոչ թե ժողովրդին անհասկանալի գրաբարով, այլ հայության մի հատվածի խոսակցական լեզվով:

Տեղեկություն է պահպանվել Հովհաննես Քարմատանեն-

ցի տպագրած մի բժշկարանի մասին, որ սակայն չի պահպանվել (վերոհիշյալ Սաղմոսարանն ու Աղոթագիրքը պահպանվել են մեկական օրինակով):

Քարմատանենցի հրատարակությունները բավական պարզունակ են, տառերը անվարժ պատրաստված: Սակայն ամեն դեպքում այդ տպարանի աշխատանքը նշանակալից երևույթ է եղել հարավ-արևելյան Եվրոպայի հայության մշակութային կյանքում:

Հայերի անունից Աստվածաշունչ տպագրելու խնդրանքով Վատիկանին է դիմում նաև Զմյուռնիայում Վենետիկի հանրապետության դեսպանի նախկին թարգման Հովհաննես Անկյուրացին (Մուլինո), որ 1637—1641 թթ. բնակվել է Հոռմում՝ նպատակ ունենալով այդտեղ Աստվածաշունչ տպագրել: Նա Վատիկանի ղեկավարներին ակնարկում է այն մասին, որ եթե Հոռմը շարունակի մերժել հայերին, բացառված չէ հայերեն Աստվածաշունչը «հերետիկոսական» (այսինքն՝ բողոքական) Հոլանդիայում տպագրելու հնարավորությունը: Ինքը՝ Անկյուրացին, որ հայ գրքի խանդավառ նվիրյալներից էր, անցնելով Վենետիկ, 1642 թ. տպագրում է Սաղմոսարան, իսկ հաջորդ տարին՝ XII դարի նշանավոր բանաստեղծ Ներսես Շնորհալու «Յիսուս որդի» երկը: «Նդի ի մտի զտպագրութեան արհեստն առ ի պայծառութիւն զզդիս հայոց», — գրել է Անկյուրացին իր հիշատակարանում:

Նորջուղայեցիները տեսնելով, որ Հոռմը իրենց խնդրանքը չի կատարում, որոշում են սեփական ուժերով տպարան ստեղծել:

1639 թ. Թուրքիայի և Պարսկաստանի միջև կնքված հաշտության պայմանագրով դադարել էին այդ երկրների միջև 100 տարուց ավելի տևած պատերազմները: Ն. Զուղայում շարունակում էին դարգանալ հայոց ուսումնական գործը և արվեստները: Տեղի Ամենափրկիչ վանքում գործող հայոց զբայրոց-համալսարանը նշանավոր շատ գործիչներ տվեց, որոնցից էին փիլիսոփա Սիմեոն Զուղայեցին և մշակութային գործիչ Ոսկան Երևանցին. վերջինը Հակոբ Մեղապարտից հետո դարձավ հայ տպագրության ամենանշանավոր դեմքը: Մշա-

կութային այս վերելքի մի արտահայտությունն էր ն. Զուղա-
յում հայ տպագրության ասպարեղ գալը:

Ամենափրկիչ վանքի միաբանները վանահայր Խաչատուր
Կեսարացու նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ 1636—
1637 թթ. ընթացքում կարողացան պատրաստել հայերեն տը-
պատառեր, տպագրական մամուլ և այդ ինքնաշեն տպարա-
նում 1638-ին լույս ընծայել Սաղմոսարան: Առաջին անգամ
էր, որ Պարսկաստանում և առհասարակ Միջին Արևելքում
գործի զրվեց տպագրական մամուլը:

Այն ժամանակ ավատական Պարսկաստանի խորքերում՝
եվրոպական մշակույթի կենտրոններից հեռու ընկած այգ
վայրում, տպագրական գործին ձեռնարկելը հանդգնություն
էր: Տպարանը սարքավորողներից ու այնտեղ աշխատողներից
որևէ մեկը ծանոթ չէր տպագրական գործին: Նրանք առանց
մի մասնագետ տպագրիչ վարպետի օգնության, ինքնուրույն
պատրաստեցին տպագրական բոլոր պիտույքները, ինչպես
նաև՝ թուղթ: Դա, ըստ էության, տպագրության հայկական
գյուտն էր՝ կատարված մի քանի համարձակ, հնարամիտ
մարդկանց կողմից և ամենից ավելի Խաչատուր Կեսարացու
ջանքերով: Սաղմոսարանի հիշատակարանում տպագրական
գործի մասին գրված է. «Ոչ ուսաք յումեքէ. Եւ ոչ տեսեալ ի
վարպետէ. Այլ ի տեսչութենէ հոգւոյն և աղօթիւք հոգևոր հօրն
մերոյ Տէր Մովսէս կոթողիկոսի» (Որևէ մեկից չսովորեցինք:
Եվ որևէ վարպետից չտեսանք: Այլ ստացանք հոգու տեսչու-
թյունից և մեր հոգևոր հօր Մովսէս կոթողիկոսի աղօթքով):

Խոսքը Մովսէս Տաթևացու մասին է, որ Խաչատուր Կե-
սարացու ուսուցիչն էր և հայոց լուսավորյալ կաթողիկոսնե-
րից: Նա իրոք մեծ դեր է կատարել ն. Զուղայի հայկական
տպարանի թե՛ մտահղացման և թե՛ ստեղծման գործում:

Սաղմոսարանից հետո տպարանում հրատարակվեցին
ևս երեք գրքեր. Հաբանց վարժ (1639—1641 թթ.), Խաբեղա-
տետր (1641 թ.), Ժամագիրք ատենի (1641—1642 թթ.):

Խաչատուր Կեսարացին զգում էր, որ իր հիմնադրած տը-
պարանը պարզունակ է. տառերն անմշակ էին, պատկերներ
չկային, առհասարակ տպագրությունը հեռու էր որակյալ լի-



Նկ. 8. Ժամագիրք ատենի (խորան գրքի ներքում).

Նոր Զուղա, 1641—42 թթ.

նելուց: Պարզ դարձավ նաև, որ այդ տպարանում անհնար է իրագործել գլխավոր նպատակը՝ Աստվածաշնչի տպագրությունը: Ուստի խաչատուր վարդապետը որոշեց իր աշակերտներից մեկին ուղարկել Իտալիա՝ տպագրական արվեստին կատարելագործվելու և որակյալ տառեր, պատկերների տպատխտակներ ու սարքավորում բերելու: Հառանց վառէր գեռևս նոր էր սկսել տպագրվել՝ 1639 թ., Խաչատուր Կեսարացին Իտալիա ուղարկեց իր աշակերտ Հովհաննես Զուղայեցուն:

Հովհաննեսն, իրոք, կարողանում է Իտալիայում ձուլել տալ հայերեն գեղեցիկ տպատառեր, պատրաստել տալ տպատախտակներ, գնել տպագրական սարքեր: 1644 թ. նա Իտալիայի Լիվոռնո քաղաքում իր սարքավորած տպարանում հրատարակեց Սաղմոսաբան և մեկ օրինակն ուղարկեց Ն. Զուղա՝ խաչատուր Կեսարացուն:

Ապա նա ձեռնարկում է իր տպարանը Ն. Զուղա փոխադրելու գործին:

Հովհաննես Զուղայեցին շատ դժվարություններ է հաղթահարել Իտալիայում տպարան ստեղծելու և մանավանդ այն Ն. Զուղա տեղափոխելու համար: 1646 թ. տպարանը Ն. Զուղայում էր, բայց մի քանի ամիս առաջ խաչատուր Կեսարացին վախճանվել էր:

Հովհաննեսը իր նոր տպարանում 1647 թ. հրատարակում է մի Պարզատումար, ապա սկսում է Աստվածաշնչի տպագրությունը, որ անավարտ է մնում: Ն. Զուղայում սկսվում են հալածանքներ Հովհաննեսի դեմ, և նա ստիպված հեռանում է այդ քաղաքից ու որոշ ժամանակ անց ղոհվում՝ առևանգիչների ձեռքից մի հայ աղջիկ ազատած լինելու համար:

Նոր Զուղայի հայկական տպարանի աշխատանքը վերսկսվում է 1684 թ., ապա 1688-ին երկար ժամանակով դադարում:

* * *

XVII դարի նշանավոր մատենագիր Երեմիա Զելեպի Քյոմուրճյանը Աբգար Գալիից ավելի քան մեկ դար հետո Կոստանդնուպոլսում նորից տպագրության է ձեռնարկում: 1677

թ. նա տպագրում է «Գիրք որ ի մնացորդացն Յիսուս Որդու»-ն (Ներսես Շնորհալու «Յիսուս որդի» երկի առանձին մասերի և այլ ոտանավորների հավաքածու է): Հաջորդ՝ 1678-ին Քյոմուրճյանը տպագրում է Պաղեստինի աստվածաշնչային վայրերին նվիրված իր չափածո երկերը՝ «Տեղաց տնօրինականաց» վերնագրով: Գրանով էլ ավարտվում է այս տպարանի աշխատանքը, և Կոստանդնուպոլսում հայկական տպագրության նոր ընդմիջում է սկսվում, բայց շատ ավելի փոքր՝ քան նախորդը: Մոտ մեկուկես տասնամյակ անց այս քաղաքում ըսկիզբ է առնում հայերի տպագրական մի նոր գործունեություն, որն այլևս դադար չի ունենում: Երեմիա Քյոմուրճյանի տպարանն անցնում է Կոստանդնուպոլսի հայկական տպագրության ականավոր ներկայացուցիչ Գրիգոր Մարզվանեցուն:

XVII դարի երկրորդ կեսում հայ գրքի տպագրության ձեռնարկեցին նաև Իտալացի տպարանատերեր Զիովանի Բովիսը, Զիովան Մորետին, Միքելանջելո Բարբոնին, Անտոնիո Բորտոլին: Բովիսը երեք հայազգիների, հատկապես Սահակ Թոխաթեցու միջոցով 1660 թ. հրատարակում է Սաղմոսաբան (ըստ Ն. Զուղայի 1638 թ. օրինակի) և Շնորհալու «Յիսուս որդի»-ն, որ Հովհաննես Անկյուրացու հրատարակության գրեթե նույնական տպագրությունն էր՝ պահպանված շարվածքից:

Զ. Մորետին Վենետիկում գործակցում է հայ վաճառականներ Նահապետ Գուլնազար Աղուլեցու և Գասպար Սահրադյանի հետ: Վերջինիս տպարանում 1686-ին նա լույս է ընծայում դարձյալ Ներսես Շնորհալու «Յիսուս որդի»-ն և մի **Խորհրդառեալ** (Պատարագատետր): Իսկ 1687-ին Նահապետ Աղուլեցու տանը կահավորված տպարանն սկսում է և նույն տարում ավարտում Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցու «Պարզաբանութիւն հոգեհուազ սաղմոսացն» աշխարհաբար գրքի հրատարակությունը:

Այս մեծագիր (840 երկայուն էջ) գիրքը զուտ հայկական հրատարակություն է. Մորետին կողմնակի մասնակցությունն է ունեցել նրա տպագրությանը: Հրատարակությանը մասնակցել է գրքի հեղինակ Հովհաննես Հոլովը:

Այս գրքի մեջ բերված են գրաբար սաղմոսները և զուգա-



Նկ. 9. Վենետիկի տպարանատեր Նահապետ Գուլնազար Ագոլեցին (1686 թ. դիմանկար)

հեն տրված է նրանց պարզաբանությունը նոր գրական հայերեն (աշխարհաբար): Պարզաբանությունները գրքի հիմնական մասն են, գրանք կազմել է Հովհաննես Հոլովը:

Սա երկրորդ աշխարհաբար գիրքն է՝ 1675 թ. Մարսելում լույս տեսած «Արհեստ համարողութեան»-ի հրատարակումից հետո: Հովհաննես Հոլովը «Պարզաբանութեան» առաջաբանում գրում է, որ գրաբար գիտեն միայն հայ հոգևորականները, իսկ աշխարհականները, միշտ զբաղված լինելով առօրյա աշխատանքներով, ժամանակ չունեն գրաբար սովորելու, ուստի չեն հասկանում այդ լեզվով եղած երկերը: Եվ նա այդ նկատի առնելով՝ կազմել է գրաբար սաղմոսների աշխարհաբար սլարզաբանությունները, որոնք հայ աշխարհականները կարող են կարգալ ու հասկանալ: Սա աշխարհաբարի առաջին հրատարակային սլարզաբանությունն էր և այն նույն հիմնական փաստարկումով (գրաբարը ժողովրդին անհասկանալի է, աշխարհաբարը՝ հասկանալի), որ առաջ էին քաշում XIX դարի մի շարք հայ հեղինակներ:

Գալով դարձյալ իտալացի տպագրիչներին, պետք է նշենք, որ նրանցից Մ. Բարբոնին մեկ տասնամյակում (1680—1690) հրատարակեց 12 անուն հայերեն գրքեր, բարձրորակ տպագրությամբ՝ Ավետարան, Տաղարան, Սաղմոսարան և այլն: Սակայն վերոհիշյալ շորս իտալացիներից ամենից բեղմնավորը Անտոնիո Բորտոլին եղավ, որ հայերեն գրքերի հրատարակություն է սկսել 1695-ին, և ապա նրա անունը կրող տպարանը հայերեն գրքեր է հրատարակել շուրջ 100 տարի, մինչև 1789 թ., երբ վենետիկում հայկական գրահրատարակությունը ամբողջովին իրենց ձեռքը վերցրին Մխիթարյանները:

XVII դարում այլ եվրոպացիներ լույս են բնծայել լատիներեն, անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն գրքեր, որոնց մեջ կան հայերեն մեծ կամ փոքր հատվածներ: Այդ հրատարակությունների մի մասը հայազիտական արժեք ունի: 1621 թ. Միլանի նշանավոր Ամբրոսյան վարժարանի տպարանում հրատարակվեց իտալացի հայագետ Փրանցիսկո Ռիվոլայի Հայերեն-լատիներեն բառարանը («Բառգիրք հայոց»): Այս բա-

սիրոյ և միաբանութեան»), որ նախապես տպագրվել էր Վե- նետիկում Մ. Բարբոնի կողմից (դա 1439 թ. Ֆլորենցիայի եկեղեցական ժողովում հայոց և հռոմեական եկեղեցիների միավորման մասին ընդունված կանոնն է):

Ոսկանյան տպարան

XVII դարում հայ գրքի պատմության ասպարեզում ամե- նախոշոր իրադարձությունը հայոց Ոսկանյան տպարանի գործունեությունն էր Հոլանդիայում, Իտալիայում և Ֆրան- սիայում:

1656 թ. Հակոբ IV Ջուղայեցի կաթողիկոսի կարգադրու- թյամբ էջմիածնի դպիր Մատթեոս Մարեցին մեկնում է Եվրո- պա տպագրական գործերով: Հիմնական նպատակը պետք է լիներ հայերեն Աստվածաշնչի տպագրությունը: Մարեցինը ըստ ստացած հրահանգի դիմում է Հռոմ: Հաջողության չհաս- նելով և կարծես իրականացնելով Հովհաննես Անկյուրացու վերը հիշված զգուշացումը՝ Աստվածաշնչի տպագրության նը- պատակով մեկնում է «Տերետիկոսական» Հոլանդիա՝ իր գոր- ծունեության վայր ընտրելով նավահանգստային խոշոր կենտ- րոն Ամստերդամը: Այս քաղաքում էջմիածնի պատվիրակը մեծ տոկունություն է ցուցաբերում, հաղթահարելով բազմա- բնույթ դժվարություններ, իր խոսքով՝ «ի ցայգ եւ ի ցերեկ մահու շափ աշխատելով միայն և առանց ուրեր օգնականի, յերկարելով յաշխատութիւնս Դ ամ և Բ ամիս, դանձն առնելով զվիշտս և զտառապանս...» («Գիշեր ու ցերեկ մահվան շափ աշխատելով միայնակ, առանց որևէ օգնականի, երկարելով աշխատանքս 4 տարի և 8 ամիս, հանձն առնելով վշտեր ու տառապանքներ»):

Մարեցին, ի վերջո, կարողանում է ստեղծել բազմալի տպարանը և իբրև փորձ 1660 թ. դեկտեմբերին սկսում է տը- պագրել Շնորհալու «Յիսուս որդի»-ն: Տպարանի խոշոր բոլո- րագիր և զլխագիր տպատառերը Մարեցու տված գծագրերով պատրաստել էր Հոլանդիայի նշանավոր էլդեվիթների տպա- գրատան բազմահմուտ վարպետ գերմանացի Ֆոն Դիկը (հո- լանդերեն՝ Վան Դեյկ): Մարեցին հոլանդական մի տպարանից


դնել է նաև այն ժամանակ հայտնի նկարիչ-փորագրիչ Քրիս- տոֆել վան Զիխեմ Կրտսերի պատրաստած տպատախտակնե- րը: Դրանք Աստվածաշնչի նյութերով պատկերներ էին, մեծ մասամբ փորագրված ըստ եվրոպացի նշանավոր վարպետ- ներ Ռաֆայելի, Դյուրերի, Գուցիուսի հայտնի նկարների:

Սակայն Մարեցուն վիճակված չէր տեսնելու իր հիմնա- դրած տպարանի երախայրիքը: Նա մահացավ 1661 թ. սկզբը- ներին՝ մենակության մեջ, ողբերգորեն: Մահվանից քիչ առաջ՝ նրա մահճի մոտ կանգնած պարտքատերերը պետք է բռնա- գրավեին տպարանը: Այդ ծանր պահին՝ առևտրական գործե- րով Ամստերդամում գտնվող նորջուլայեցի վաճառական Ավետիս Ղլիճենցը պատրաստակամություն է հայտնում վը- ճարելու Մարեցու պարտքերը: Նա որևէ շահույթ չի պահան- ջում իր դրամի դիմաց:

Մարեցու մահից հետո Ավետիսը հետևում է, որ Դիկը ավարտի պատվիրված ավելի փոքր շափի հայկական տպա- տառերը, որոնք նախատեսված էին Աստվածաշնչի տպագրու- թյան համար: Ավետիսը լինելով կիսագրագետ, ճարահատյալ, ուստի և մեծ դժվարությամբ շարունակում ու ավարտում է «Յիսուս որդու» տպագրությունը:

Ավետիս Ղլիճենցի հայրենասիրական զոհաբերումների շնորհիվ պահպանված հայկական տպարանը հսկայական դեր կատարեց հայոց մշակութային կյանքում: Տպարանն ի պա- տիվ էջմիածնի և Ուշիի Ս. Սարգիս վանքի Ավետիսը կոչում է Ս. էջմիածնի և Ս. Սարգիս զորավարի անվան:

Ուշի գյուղի Ս. Սարգիս վանքի հիշատակությունը այս անվան մեջ պատահականություն չէր: Այդ վանքում վանա- հայր էր Ավետիսի եղբայր Ոսկան Երեանցին՝ ժամանակի ամե- նակիրթ ու զարգացած հայ մտավորականներից մեկը: Ահա նրան էլ Ավետիսը շտապ հրավիրում է Ամստերդամ՝ հրատա- րակչական գործի գլուխ անցնելու: Հակոբ Ջուղայեցի կաթո- ղիկոսը հավանություն է տալիս այս ընտրությանը, քանի որ Ոսկան վարդապետը տարիների ընթացքում զբաղվել էր տպա- գրության համար Աստվածաշնչի բնագիրը պատրաստելու գործով:



Նկ. 11. Հայերեն Աստվածաշնչի առաջին հրատարակությունը (անվանաթերթ). Ամստերդամ, 1666—68 թթ.

Ինքը՝ Ռսկան Երևանցին Ամստերդամ մեկնելու իր որոշումը բացատրում է հայ գրքի սակասը լրացնելու փափագով: Նախքան Ռսկանը կմեկներ Ամստերդամ, նրա աշակերտ Կարապետ Անդրիանացին շտապ հասնելով այդ քաղաքը, ստանձնում է տպարանի ղեկավարությունը և հրատարակում շորս գիրք՝ երկու ժամագիրք, երկու Սաղմոսաբան, ապա սկսում է հինգերորդի՝ Ծարակնոցի՝ հայ հոգևոր երգերի ժողովածուի, տպագրությունը:

1664-ին Ռսկանը հասնում է Ամստերդամ և Անդրիանացու հետ ավարտում սկսած տպագրությունը: Դա առաջին տպագիր Ծարակնոցն էր, բարձրորակ, խաղերով (հայկական հին ձայնանիշերով), պատկերազարդ հրատարակված: Ապա տպարանը լույս է բնծայում մի հայերեն այբբենարան և Ռսկանի հեղինակած «Քերականության գիրք»-ը: Իրանը վերջին փորձնական տպագրություններն էին Աստվածաշնչի հրատարակությունը նախապատրաստելու ճանապարհին:

Ռսկան Երևանցին նախապատրաստական այլ աշխատանքներ էլ է անում. լրացնում է տպարանի տառատեսակները նոսրգրով, ավարտում է իր խմբագրական աշխատանքը Աստվածաշնչի բնագրի վրա: Տպագրության պատրաստած Ռսկանի բնագիրը՝ կանոնով, գրքերի դասավորությամբ, անատումով համապատասխանեցված էր Աստվածաշնչի լատինական բնագրին՝ Վուլգատային:

Երբ տառատեսակները, տպատախտակները, ինչպես և ձևեր բերված փորձը արդեն բավարար էին, Ռսկան Երևանցին ձևանամուխ է լինում Աստվածաշնչի տպագրությանը: Դա 1666 թվականի մարտի 11-ն էր: Գրքի տպագրության վրա Ռսկանն ու իր օգնականները՝ Կարապետ Անդրիանացին և Օհան Երևանցին աշխատում են ավելի քան երկուսուկես տարի: Գիրքը լույս է տեսնում 1668 թ. վերջին:

Ռսկանյան Աստվածաշունչը համարում են հայ հին տպագրության պսակը կամ թագուհին, ինչպես որ Աստվածաշնչի սահակ-մեսրոպյան թարգմանությունը համարվում է թարգմանությունների թագուհի: Իրոք, այս հրատարակությունը հայոց տպագրական գործի հասունության արտահայտու-

Գ Ի Բ Գ
Պ Ե Տ Մ Ո Ւ Թ Ե Լ Ե Ն Յ

Հարստություն

Ս Լ Բ Գ Ե Տ Ի Ն
 Ա Յ Լ Բ Ե Լ Ե Յ Գ Ե Լ Ե Ն
 Ժ Ա Յ Ի Ո Յ

Մենք ցիլիկաճանց հայաստանեացիք և
 եւ գաւառիս արարատոյ՝ և մասնի զողջման
 գաւառի, սկսեալ ի թաւաշին հայոց. 1054 թին
 սկսել յարարաւ պատմանքսու Յուս. աշին
 Վ ի յառնաւած եւալ մանուարաւ
 շարք՝ առաջ և անոնք:

Տրտրեացիք Տրտրեանո՛ւ Ստեփ. Լ. Մանկի
 և Կրտսի Կրտսի քրոջքն:

Ի զարարատն Յուս. Յարոյ կոթու
 Անտ Արոյ Նճարանի:

Լ. Պրոխորովի Տեառն Սեփեանց Կրտսե
 շարք բնի պատմարք:



ԱՍՄԲԵԼՈՒՄՈՒՄ

Վ ի թաւաշին փոխին 1669 թին Յուս. Յարոյ
 զարք 1:

Իսկ ըստ հայոց. 1118 թ.
 Սահմ. 29:

Նկ. 12. Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց»-ը
 (անվանաթերթ), Ամստերդամ, 1669 թ.

թյունն էր: Մեծածավալ (1462 էջ կամ 2924 սյունակ, 159 պատկեր) և բարդ բնագիր ունեցող այս գիրքը հայ տպագրիչ վարպետները լույս են ընծայել օրինակելի, բարձր արվեստով: Կարևոր էին Ոսկան Երևանցու և Կարապետ Անդրիանացու անձնական արժանիքները՝ գրքի բնագիրը մանրակրկիտ նախապատրաստելու, սրբագրելու և տպագրությունը մարտը ու որակով անելու գործում:

Հայերեն Աստվածաշնչի տպագրության բարդ գործը նախապատրաստվել էր հայ տպագրության անցած ամբողջ ճանապարհին կուտակված փորձով:

Ոսկանյան տպարանը Ամստերդամում գործեց մինչև 1669 թ.՝ լույս ընծայելով ևս 10 անուն գիրք, այդ թվում Մաշտոց, Տոնացոյց, Եւր կտակարան, Մովսես Խորենացու անունով հայտնի «Աշխարհացոյց»-ը, Վարդան Այդեկցու առակները՝ «Աղուեսագիրք» անվամբ (այս երկուքը միասին, մի կազմի մեջ), ապա՝ XVII դարի հայ խոշորագույն պատմիչ Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց»-ը, որ հայ տպագրության պատմության մեջ առաջին երկն էր՝ ճրատարակված հեղինակի կենդանության օրոք:

Հուանդիայում հայկական տպագրության գործը ազատ էր զավանդարանական-գրարենական զժվարություններից, որոնք առկա էին կաթոլիկական աշխարհում: Սակայն Հուանդիայում էլ կային այլ կարգի զժվարություններ: Ոսկանյան տպարանը լրջորեն նեղվում էր հուանդացի պարտքատերերի ճնշումներից և հատկանաբար կհակվեր, եթե Ոսկան Երևանցին տպարանը չտեղափոխեր այդ քաղաքից:

Ս. էջմիածնի և Ս. Սարգսի անվան հայկական տպարանի նոր հանգրվանն է դառնում Իտալիայի Կիոտոնո քաղաքը: Այստեղ 1669—70 թթ. ընթացքում տպարանը լույս է ընծայում երեք կրոնական գիրք, որից հետո տեղափոխվում է Ֆրանսիայի Մարսել քաղաքը և 1673 թ. վերսկսում աշխատանքը: Ոսկան Երևանցին Ֆրանսիայի Լուզովիկոս XIV թագավորին նվիրել էր իր ճրատարակած Աստվածաշնչի մի օրինակը՝ նշանավոր հուանդացի կազմարար Ալբերտ Մազնուսի կաշեպատ շքեղ կազմով և իրավունք խնդրել Ֆրանսիայում

Հանգրվանելու: Ֆրանսիական իշխանությունները բարձրացկամորեն թույլ էին տվել հայկական տպագրիչներին աշխատել Ֆրանսիայում:


Տպարանը շարունակեց պահպանել Ս. էջմիածնի և Ս. Սարգսի անունը: Մարտելում այն գործեց մինչև 1686 թ.՝ լույս ընծայելով ևս 16 անուն գիրք, այդ թվում նորից ժամագիրք, Սաղմոսարան, Այբբենարան, Պարզառումար, դարձյալ՝ Աշխարհացոյց ու Աղուէտագիրք, խալեբերնի դասագիրք, թվաբանություն ձևանարկ և այլն:

Այստեղ Ոսկանը 1673 թ. սկսում է Գրիգոր Նարեկացու «Գիրք աղօթից»-ի («Մատեան ողբերգութեան») անդրանիկ հրատարակությունը, սակայն, դավանաբանական գրաքննության կասկածների պատճառով այն մնում է անավարտ:

Հայկական տպարանի նյութական ծանր վիճակը և աշխատողներից մեկի սկսած վեճերը գրամական հողի վրա, ընկճում են Ոսկան Երևանցու կամքն ու առողջությունը: Նա ընկնում է անկողին և մահանում 1674 թ. փետրվարի 4-ին (թաղված է Մարտելում):

Տպարանի ղեկավարությունն անցնում է Ոսկանի քեռորդի և տպարանի ավագ գրաշար Սողոմոն Լեոնյանին: Իբրև վարպետ այստեղ շարունակում է աշխատել Ոսկանի աշակերտներից Մատթեոս Վանանդեցի Հովհաննիսյանը, որը Ոսկանի խմբին էր միացել 1670 թ. և դարձավ հայ տպագրության պայծառ ղեմքերից մեկը: Նա Ոսկանյան տպարանում առանց վարձի, իբրև «հոգու պարտք» աշխատել է 14 տարի. «մնացի ընդ վեհին Ոսկանայ արհիեպիսկոպոսի և քեռորդոյ նորա Սաղօմոնի ամս չորեքտասան և վարձուց կողմանէ ոչ ինչ ընկալայ», — հետագայում գրել է նա իր մասին:

Ս. էջմիածնի և Ս. Սարգսի անվան տպարանը գրահրատարակչական շատ կարևոր կենտրոն եղավ հայ մշակույթի պատմության մեջ: Երեք քաղաքներում գործելով 26 տարի՝ այդ տպարան-հրատարակչությունը լույս ընծայեց չորս տասնյակ անուն հայերեն գրքեր: Դրանցից առաջ հայկական որևէ տպարան չէր եղել այդքան երկարակյաց և չէր հրատարակել այս տպարանի նույնիսկ մեկ քառորդի չափ գրքեր:



Նկ. 13. Առաջին աշխարհարար տպագիր գիրքը՝ «Արհեստ համարողութեան» (անվանաթերթ). Մարտել, 1675 թ.

Ոսկանյան տպարանի դերը կարևոր էր նաև նրանով, որ առաջինը լույս ընծայեց հայերեն Աստվածաշունչ, Շարակնոց: Տպարանն առաջինն էր նաև, որ նկատելի քանակով հրատարակեց աշխարհիկ գրքեր՝ «Աշխարհացոյց»-ը, Վարդան Այգեկցու առակները, Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց»-ը և այլն:

Այս տպարանում 1675 թ. լույս տեսավ նաև առաջին գիրքը՝ նոր գրական հայերենով (աշխարհաբար) «Արհեստ համարողութեան»-ը, որ թվաբանական-հաշվապահական ձևերի է, թարգմանված լատիներենից և հրատարակված հայ առևտրականների համար: Գրքի լեզուն ժամանակի ընդհանուր խոսակցական աշխարհաբարն է՝ գրական մշակման ենթարկված, այսինքն՝ հայոց նոր գրական լեզուն՝ այն ժամանակվա վիճակում: XVII դարում արդեն գրում էին նոր հայերենով, սակայն շատ քիչ: Միջին գրական հայերենը արդեն դադարել էր գործածվելուց: Գրական ընդունված լեզուն մնում էր գրաբարը՝ հին գրական հայերենը: Այն ժողովրդին անհասկանալի էր, բայց դարավոր ավանդույթի ուժով եկեղեցու և մտավորականության կողմից դիտվում էր հայոց միակ գրական լեզուն: Գրաբար էին գրվում և հրատարակվում գեղարվեստական, կրոնական, գիտական երկերը, դասագրքերը և միայն մերթ քնդ մերթ լույս էին տեսնում նոր գրական լեզվով գրքեր, թեև դրանց քանակը աստիճանաբար ավելանալ սկսեց: Կյանքը թելադրում էր իրենք. ժողովրդին հասկանալի նոր լեզուն աստիճանաբար ուղի էր հարթում իր համար, մինչև որ XIX դարի կեսերին հաղթանակ տարավ:

Ոսկանյան տպարանը ղգալի դեր կատարեց նաև հայ գրքի տպաքանակը մեծացնելու գործում: Նախքան այդ, հայերեն գրքերը, սովորաբար, լույս էին տեսնում երկու հարյուրից մինչև հինգ հարյուր օրինակ: Ոսկանյան հրատարակությունների տպաքանակը անցնում էր հազարից՝ հասնելով մինչև հինգ հազար օրինակի: Սրանով հնարավոր դարձավ գգալապես վերացնել հայ գրքի այն պակասը, որի մասին մի շարք վկայություններ ունենք XVI և XVII դարերից: Ոսկանյան տպարանի շնորհիվ որոշ կրոնական և աշխարհիկ գրքերի այնպիսի քանակ ստեղծվեց, որ արդեն առանձին ընտանիքներ անգամ ձեռք էին բերում հայերեն գրքեր: Հավազյուտ գիրք համարվող Աստվածաշունչը դադարեց այդպիսին լինելուց:

Ոսկանյան հրատարակությունները եմրոպայից՝ հայերեն տպագիր գրքերի այն ժամանակ սովորական դարձած ճանապարհորդությունն էին կատարում. նավերով բերվում էին


Ձմյունիա, այստեղից տարբեր միջոցներով հասցվում Հայաստան և Փոքր Ասիայի հայաբնակ այլ վայրեր:

Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի անվան տպարանը ստեղծեց նաև բարձրորակ գրահրատարակչական ավանդներ: Երկար ժամանակ նրա հրատարակությունները համարվում էին բնագրային տեսակետից ամենավատահին, և հետագա տպագրողները նրանցից էին արտատպություններ անում. «Ի յօրինակս տպեցեալ լուսատու հոգի Ոսկան վարդապետին՝ յար և նման, ոչ աւելի և ոչ նուազ», «Ամէնեին Ոսկան վարդապետին շինած շարակնոցին վերայ շարեցի», — այսպիսի վկայություններ կան XVIII դարում Կոստանդնուպոլսում և Վենետիկում տպագրված հայերեն գրքերի հիշատակարաններում:

Վերջապես, այս տպարանի շնորհիվ ստեղծվեց անընդմեջ գործող հայկական գրահրատարակչությունը. մինչ այդ կարճ ժամանակով հայանվող ու մարող տպագրական օջախների փոխարեն, սկիզբ առավ հայկական այն գրատպությունը, որն այլևս չընդհատվեց մինչև մեր օրերը:

Ոսկանը պատրաստեց առաջնակարգ տպագրիչներ, որոնք տարբեր վայրերում շարունակեցին նրա գործը. Ոսկանյան տպարանի տառերով ու պատկերներով XVII դարի վերջում տպարան հիմնվեց Կոստանդնուպոլսում, որ երբեմն իր հրատարակությունների վրա դնում էր Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի անունը: Ոսկանի աշակերտներից Մատթեոս Վանանդեցին Մարսելից գնալով Ամստերդամ՝ 1685 թ. հիմնեց նոր տպարան և սկիզբ դրեց ամստերդամյան հայոց երկրորդ հրատարակչությանը: Ոսկանյան խմբից մի ուրիշը՝ Քաղեսո Համազասպանը, անցնելով Վենետիկ, վաճառական Գասպար Սահրադյանի դրամով հիմնեց տպարան և 1686—1688 թվականներին առաջին անգամ տպագրեց ձաշոց (հայոց եկեղեցու կարևոր գրքերից): Այդ մեծագիր հրատարակությունը բաղկացած է 1222 էջից և բարձրարվեստ, պատկերազարդ տպագրություն է:

Ոսկան Երևանցին, իբրև մշակութային գործիչ, մահից հետո երկար ժամանակ ակնածանքով էր հիշվում հայ տպա-



դիր գրքերի հիշատակարաններում: Նրան անվանում էին «բազմաշխատ հոգևոր մշակն Քրիստոսի», «յոզներախտ մատուցակն գիտութեան ի ձեռն բազմութեանց գրեանց ցի- գրին Հայկաղոնեաց», նաև «երկրորդ թարգմանիչն» (որպես առաջին նկատի ունեին հայ դպրութեան V դարի հիմնադիր- թարգմանիչներին):


Վ ա ն ա ն դ ե ց ի ն ե ր

Մշակութային-լուսավորական կարևոր դեր կատարեց նաև Վանանդեցիների տպարանը Ամստերդամում, որի հիմ- նադիրն էր վերն արգեն հիշված Մատթեոս Վանանդեցին: Նա հայերեն նոր, կատարելագործված տառաշար պատվիրեց իննգարացի նշանավոր գրածուլող նիկողայոս Քիշին, սար- բավորեց նոր տպարան և 1685 թ. լույս ընծայեց մի Շարակ- նոց:

1694 թ. տպարանի գլուխ անցավ Ռսկան Երևանցու ըն- կեր և Մատթեոսի քեռորդի Թովմաս Վանանդեցի Նուրիջան- լանը՝ ժամանակի կիրթ ու զարգացած հայերից մեկը: Նա Հայաստանի Գողթն գավառում վանահայր-եպիսկոպոս էր: Նա էր Մատթեոս Վանանդեցուն և իր եղբորորդիներ Ղուկաս ու Միքայել Վանանդեցիներին իր հետ բերել Եվրոպա. առա- ջինին որպես աշակերտ հանձնել էր Ռսկան Երևանցուն, իսկ մյուս երկուսին Հոռմում տվել էր կրթություն: Ոսումն ավար- տելով՝ Ղուկասն ու Միքայելը նույնպես եկել էին Ամստերդամ ու գործի անցել տպարանում: Կարևոր դեր կատարեց հատկա- պես Ղուկաս Վանանդեցին, որ նշանավոր հայկաբան էր և հըմ- տացած փիլիսոփայության ու բնական գիտությունների ա- պարեզներում:

Վանանդեցիները 1695 թ. լույս ընծայեցին աշխարհի առաջին հայերեն տպագիր քարտեզը (կիսագնդեր)՝ «Համա- տարած աշխարհացոյց» անունով: Դա մի մեծագիր (118× ×150 սմ.), պղնձափորագիր հրատարակություն է, կատար- ված բարձր ճաշակով: Հաջորդ տարին հրատարակվեց Ղուկաս Վանանդեցու «Բանալի համատարած աշխարհացոյցին» գրք-

ՀԱՄԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ



Նկ. 15. Հայերեն առաջին տպագիր քարտեզը՝ «Համատարած աշխարհացոյց». Ամստերդամ, 1695

քույրը, որ հայերեն առաջին քարտեզի ուղեցույցն էր: «Աշխարհացոյց»-ի հետ նույն թվականին Վանանդեցիները տպագրեցին նաև Մովսես Խորենացու «Ազգաբանութիւն»-ը, այսինքն՝ Հայոց պատմութիւնը, որը այդ նշանավոր երկի առաջին հրատարակութիւնն է:

Այնուհետև տպագրում են նաև կապուստան, ժամագիրք, Թոմա Կեմպացու «Յաղագս համահետեմանն Քրիստոսի» ժամանակին հայտնի գիրքը (թարգմանութիւն) և այլն: Այս տպարանը ևս լույս է բնծայել աշխարհիկ մի շարք գրքեր՝ նախատեսված գլխավորաբար հայ վաճառականների համար: Դրանցից է, օրինակ, Ղուկաս Վանանդեցու հեղինակած «Գանձ շափոյ, կշոյ, թուոյ և դրամից բոլոր աշխարհի» երկը (1699 թ.), որ XVII դարում տպագրված աշխարհաբար երրորդ գիրքն է: Տպարանում հրատարակվեցին նաև Ղուկաս Վանանդեցու այլ երկեր, ինչպես՝ «Համաձայնութիւն հնգետան ամսոց» (1698), «Գուռն իմաստութեան» (1699), որ հայերենի զպրոցական դասագիրք է: 1702 թ. այստեղ հրատարակվեց Մատթեոս և Ղուկաս Վանանդեցիների համատեղ աշխատութիւնը՝ «Քնաբանութիւն իմաստասիրական», որ օղերևութաբանութիւնը և բնութիւնը այլ երևույթներին նվիրված երկ է և այլն: Մատթեոսը տպարանում անխոնջ աշխատել է մինչև 1704 թ.:

Վանանդեցիների հրատարակութիւնները տպագրական արվեստի տեսակետից մի քայլ առաջ էին նույնիսկ ոսկանյան հրատարակութիւնների համեմատ. այսօր անգամ նրանց նուրբ ու գեղեցիկ տիպը, առաջնակարգ սրբագրութիւնը հիացմունք են պատճառում:

Հուլանդական վավերագրերը վկայում են, որ Թովմաս Վանանդեցին ջանքեր է գործադրել իր տպարանը հայերենի տեղափոխելու, բայց հաջողութիւն չի հասել: Թովմասը մահացել է 1708 թվականին: Դրանից հետո տպարանը աշխատել է ևս ինը տարի Ղուկաս Վանանդեցու տնօրինութիւնով:

Վանանդեցիներն Ամստերդամում կապեր են հաստատում ժամանակի մի քանի նշանավոր գիտնականների հետ: Օրինակ, նրանց էր այցելում հոլանդավոր գերմանացի փիլիսոփա,

մաթեմատիկոս Գոտֆրիդ Լայբնիցը, Ղուկաս Վանանդեցուց հայերենի դասեր էր առնում գերմանացի արևելագետ Յոհան Շրյոդերը: Վերջինս Ամստերդամում 1711 թ. հրատարակեց իր «Արամեան լեզուին գանձ» հայագիտական աշխատութիւնը, ուր գրաբարի հետ առաջին անգամ տրված է աշխարհաբարի (արևելահայ) քերականութիւնը: Իր աշխատութիւնը գրելիս՝ Շրյոդերը մեծապես օգտվել է Վանանդեցիների ծառայութիւններից, իսկ գրքի հայերեն հատվածների տպագրութեան համար օգտագործվել են Վանանդեցիների տպատառերը:

1717 թ. պարտքատերերի կողմից տպարանի բռնագրավման պատճառով մշակույթի այս կարևոր կենտրոնը դադարեցնում է իր գործունեութիւնը: Դրանով եվրոպայում երկար ժամանակով ընդհատվում է հայկական ինքնուրույն տպագրութիւնը, հայերեն գրքեր տպագրվում էին միայն իտալացիների տպարաններում: Եվրոպայում որևէ հայկական տըպարան չի գործում, մինչև որ 1776 թ. Տրիեստում և 1789-ին՝ Վենետիկում բացվում են Մխիթարյանների զույգ տպարանները: Ընդ որում, վենետիկյան Ս. Ղազարի տպարանի համար Ամստերդամում գնվել են Վանանդեցիների տպատառերը:

ՀԱՅ ԳՆՔԸ XVIIII ԳԱՐՈՒՄ

XVIII դարում հայկական գրահրատարակչության նկատելի տեղաշարժ կատարվեց դեպի արևելք: Հայ գրքի ստեղծման ծանրության կենտրոնը Արևմտյան եվրոպայից տեղափոխվեց Կոստանդնուպոլիս և ապա հայկական տպագրութիւնը հաստատվեց մայր երկրում՝ էջմիածնում: Դա XVIII դարի երկրորդ կեսին էր, երբ հայկական գրահրատարակչութիւնը թափանցեց նաև Ռուսաստան ու Հնդկաստան: Ապա՝ նախորդ երկու հարյուրամյակների համեմատ միայն XVIII դարում չորս անգամ ավելի հայերեն գրքեր հրատարակեցին: Հայ տըպագրիչները, որ մինչ այդ հայերեն տպատառերը ձուլել էին տալիս եվրոպական վարպետների մոտ, այս հարյուրամյա-

կում յուրացրին նաև գրաձուլական արվեստը, իսկ հայ գրա-
ձուլողներից ոմանք հռչակ ձեռք բերեցին և պատվերներ էին
ստանում նաև այլ լեզուների տպատառեր պատրաստելու:

Կոստանդնուպոլիս, Զմյուռնիա

Եվրոպայում հայկական տպարանները ամենից ավելի
շատ նեղվում էին դրամական դժվարություններից: Գրքերի
վաճառքից գոյացող գումարները չէին բավարարում տպա-
գրական ծախսերը ծածկելու համար, և հայ տպագրիչները
շարունակաբար պարտքերի մեջ էին: Մեծ մասամբ օգնության
էին հասնում բարերար հայ վաճառականները, որոնցից շա-
տերի անունները նշված են հնատիպ գրքերի հիշատակարան-
ներում: Սակայն այդ նվիրաբերությունները հայկական «պան-
դուխտ» տպարանների պահպանման վստահելի հիմք լինել
չէին կարող: Վկայություններ կան, որ էջմիածնի կաթողիկոս-
ներն էլ են ցանկացել դրամական օգնություն ցույց տալ հայ
տպագրիչներին, մասնավորապես ոսկանյան խմբին, սակայն
խոստումներից բացի, նրանք ոչինչ անել չէին կարողանում,
քանի որ XVII դարի ընթացքում էջմիածնի դրամական-նյու-
թական դրությունը ծանր էր, կաթողիկոսներն իրենք մեծ մա-
սամբ պարտքեր էին ունենում:

Հայ տպագրությունն իր կենսունակությունը պահելու հա-
մար պետք ուներ հայկական ավելի հոծ միջավայրի, որպեսզի
մեծուպատառ գիրքը գնորդ ունենար հենց տպարանի մոտ:
Եղած հանգամանքներում հայ գրքի առավել հարմար կենտ-
րոն կարող էր դառնալ Կոստանդնուպոլիսը: Այս քաղաքը մի
կողմից մոտ էր եվրոպական կենտրոններին, և դյուրին էր լու-
ծել տպագրական պիտույքների ու թղթի հարցերը, մյուս կող-
մից, որ առավել կարևոր էր, այդ քաղաքը հայաշատ էր, հայ
գրքի սպառման համար այստեղ մեծ հնարավորություններ
կային, քան եվրոպական որևէ քաղաքում: Այստեղ կային նաև
դրամատեր շատ հայեր, որոնց օգնությունը հայկական տպա-
րաններին երբեմն ղգալի էր լինում: Կոստանդնուպոլսում կար
հայ եկեղեցու պատրիարքարան, որը XVIII դարի ընթացքում

և հետո օգնում էր հայկական որոշ տպարանների նյութապես
և բարոյապես ու ինքն էլ գրքեր էր պատվիրում տպագրիչնե-
րին: Այնուհետև, Կոստանդնուպոլիսը ավելի մոտ էր և՛ Հա-
յաստանին, և՛ հայաշատ մյուս վայրերին: Կոստանդնուպոլ-
սում եվրոպական մի քանի երկրների համեմատ տպագրու-
թյունն ավելի քիչ էր ենթակա գրաքննության. հայոց եկեղե-
ցին դավանաբանական տեսակետից այստեղ կարող էր իր բո-
լոր գրքերը հրատարակել՝ միայն չպետք է քննադատվեր մահ-
մեղադանությունը, իսկ կաթողիկոսյան քննադատությունը
առանձին դեպքերում անգամ խրախուսվում էր պետական
մարմինների կողմից:

Այս հիմնական պատճառներով էր, որ XVII դարի վերջից
հայկական տպագրության զարգացումը եվրոպայից տեղա-
փոխվեց Կոստանդնուպոլիս: XVIII դարում Կոստանդնուպոլ-
սում լույս տեսան շուրջ 300 անուն հայերեն գրքեր: Ոչ
մի քաղաքում մինչև 1800 թվականը այսպիսի քանակով հա-
յերեն գրքեր չեն տպագրվել. երկրորդ տեղում է Վենետիկը՝
ուր մինչև 1800 թ. տպագրվել է շուրջ 270 անուն գիրք:

1690-ական թվականներին թուրքական իշխանություննե-
րից հալածական կաթողիկ հայերը Կոստանդնուպոլսում բա-
ցում են գաղտնի տպարան՝ ծածկագրված անունով. այդտեղ
հրատարակված գրքերի անվանաթերթերին և հիշատակարան-
ներում, որպես տպագրավայր, հաճախ նշում էին Ամստերդա-
մը (Ս. Աստվածածնի անվ. տպարան) կամ Լիվոռնոն (Ս. էջ-
միածնի և Ս. Սարգսի անվ. տպարան), Մարսելը, երբեմն էլ
ճիշտ տպագրավայրը՝ Կոստանդնուպոլիսը (նույնպես՝ Ս. էջ-
միածնի և Ս. Սարգսի անվ. տպարան): Հրատարակած գրքերի
տառերն ու պատկերները ոսկանյան էին: Հավանաբար Մար-
սելի Ոսկանյան տպարանի կայքը կամ նրա մի մասը Կոս-
տանդնուպոլիս էր բերվել: Այս տպարանն սկսեց գործել Ոս-
կանյան տպարանի փակվելուց (1686 թ.) փոքր-ինչ անց, և
տպավորություն էր ստեղծում, թե շարունակում է աշխատել
հենց Ոսկանյան տպարանը: Այս նոր տպարանը նախապես
գործում էր Կոստանդնուպոլիսի կաթողիկոսների ղեկավար Սար-
գիս Եվրոկացի Գասպարյանի (Սեհատճի) տնօրինությամբ:

Լիվոնոյի անունով 1696 թ. տպարանը հրատարակեց Խաչատուր Էրզրումցու «Գիրք քերականութեան»-ը, ապա՝ «Գիրք պատմութեան կայսերն Փանցիանոսի» (կամ «Սօթն իմաստասէրք») աշխարհիկ ընթերցանութեան գիրքը, 1697-ին՝ «Պատմութիւն դարձի», 1698-ին՝ Երեմիա Մեղրեցուն վերագրվող «Բողոքի ճշտոյն»-ը, վերահրատարակվեց Վարդան Այգեկցու «Աղուէսագիրք»-ը, ինչպես և «Աշխարհացոյց»-ը (միատեղ)։ Տպարանն Ամստերդամի անունով լույս ընծայեց շարակնոցներ (1692 թ. և այլն), Մարտիի անունով՝ «Գիրք մտածական աղօթից», «Գիրք տօմարաց հայոց», կաթողիկական ժամագիրք (1708 թ.), Կոստանդնուպոլսի անունով՝ «Գիրք մեկնութեան Յայտնութեանն», Այբբենարան (1700), Թոմաս Կեմպացու «Յաղագս համահետեմանն Քրիստոսի» և այլն։

Կաթողիկական այս տպարանի մասն է կազմել (կամ գուցե հենց նույնն է եղել) 1705—1718 թթ. մի շարք գրքերի վրա Պետրոս Լատինացու և Կոստանդնուպոլսի Պեկօղլի թաղամասի անուններով հիշատակվող տպարանը։ Այդտեղ 1705—1707 թթ. տպագրվել է Աստվածաշնչի երկրորդ հրատարակությունը, որ սուրբազանի արտատպությունն է։

1700 թ. Կոստանդնուպոլսի կաթողիկական տպարանին գործակցում էր հայ մշակույթի մեծ գործիչ Մխիթար Սեբաստացին։

Գրավորչին Կոստանդնուպոլսում տպագրական գործունեություն է սկսում Բաղեշի Ամրդոլու վանքի նախկին դպիր, նկարիչ Գրիգոր Մարզվանեցին։ Նա նախ օգտագործում է Երեմիա Քյոմուրճյանի տպատառերը, ապա սովորում է գրածուլական գործը, պատրաստում նոր տպատառեր, պատկերների ու զարդերի տախտակներ։ Շուրջ շորս տարվա իր այդ աշխատանքից հետո, 1698 թ. լույս է ընծայում մի Տաղարան։

Մարզվանեցին, ըստ նրա հիշատակարանների, հայ գիրքը գնահատող, ազգային կյանքում գրքի դերը հասկացող անձնավորություն է եղել, նվիրված տպագրության գործին։ Նա իր գործունեության ընթացքում մի քանի անգամ անհաջողությունների է հանդիպել. գործընկերները խել են տպագրական կայքը, յուրացրել տպագրած գրքերի եկամուտի իր

բաժինը և այլն։ Լինելով տաղանդավոր նկարիչ՝ Մարզվանեցին ոչ միայն պատրաստել է տպագրական բազմաթիվ զարդեր, այլ նաև ստեղծագործել դիմանկարներ ու խմբանկարներ՝ իր կողմից հրատարակվող գրքերի բովանդակության համապատասխան։ Դրանով նա նոր շրջան է բացել հայկական գրքային գծանկարչության բնագավառում։ Ոսկանյան տպարանի զարդերը, զարդագրերը հայկական էին, բայց պատկերները, ինչպես ասվեց, եվրոպական վարպետների նկարների վերարտադրություններ՝ զուրկ հայկական շեշտից։ Մարզվանեցու ինքնուրույն պատկերները արդեն ազգային երանդունեին, թեև նա ևս երբեմն օգտվել է եվրոպական նկարագրումներից։

Գրիգոր Մարզվանեցու տպագրական գործունեությունը որոշ ընդմիջումներով տևել է մոտ 40 տարի (մինչև 1734 թ.), նա հրատարակել է շուրջ մեկուկես տասնյակ անուն գրքեր, որոնցից ամենից ավելի աչքի են ընկնում մեծածավալ Յասմաուրֆի (Եկեղեցու գործիչների կյանքը պատկերող գիրք) պատկերազարդ, ճոխ երկու հրատարակությունները, որոնցից առաջինը (1706 թ.) Յասմաուրֆի անդրանիկ հրատարակությունն է։ Մարզվանեցին առաջին անգամ լույս ընծայեց նաև հայ հին մատենագիրներից Ազաթանգեղոսի Հայոց պատմությունը (1709 թ.), Զենոբ Գլակին վերագրվող «Գիրք պատմութեանց երկրին Տարօնոյ»-ն (1719 թ.), միջնադարի հայ մեծ փիլիսոփա Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ը (1720 թ. անավարտ տպագրություն)։ Նա հրատարակեց Այբբենարան (1712 թ.), Հովհաննես Զուղայեցի Մրգուզի «Կրթութիւն հաւատոյ» աշխատությունը (1713 թ.), Պարզատումար (1723 թ.) և այլն։

Մարզվանեցու հրատարակությունները տպագրական արվեստի տեսակետից բարձրորակ են, գրագիտությունն առաջնակարգ։

Մարզվանեցու տպարանի աշխատող Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցին վեճ ունեցավ տպարանատիրոջ հետ ու դուրս գալով այդ տպարանից, հիմնեց իր սեփականը և 1699 թ. լույս ընծայեց մի Շարակնոց։ Դրանով սկսվեց պու-



Նկ. 16. Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»-ի առաջին հրատարակութեան անվանաթերթը. Կոստանդնուպոլիս, 1709 թ.

առհայ տպագրութեան մյուս խոշոր ներկայացուցչի հրատարակական-տպագրական բեղմնավոր գործունեութունը, որը տեղեց մոտ 50 տարի:

Աստվածատուրը հրատարակել է ավելի քան ութ տասնյակ անուն գրքեր, ամենից ավելի հայկական եկեղեցու համար՝ ժամագրքեր, շարահնոցներ, մաշտոցներ, տոնացույցներ, Յասմաուրբ, Ճաշոց և այլն: Առաջին անգամ ամբողջությամբ հրատարակել է Գրիգոր Նարեկացու «Մատենանոց երգերգութեան»-ը (1701—1702 թթ.), ապա Կյուրեղ Ալեքսանդրացու «Պարապմանց գիրք»-ը (1716 թ.), նշանավոր Սիմեոն Զուղայեցու «Տրամաբանութիւն»-ը (1728 թ.), Հաննա Հովհաննեսի «Պատմութիւն Երուսաղեմի»-ն (1730 թ.), Դավիթ Անհաղթի «Գիրք սահմանաց»-ը (1731 թ.) և այլն:

Աստվածատուրը դարձավ Կոստանդնուպոլսի ամենաճանաչված տպագրիչը, ամենաժողովուն տպարանով: Նա կապ էր պահպանում գրավաճառների հետ, նրանցից տեղեկանում առավել պահանջվող գրքերի մասին: Օրինակ, գրավաճառ Մանուկ էրզրումեցու խորհրդով նա վերահրատարակեց ժողովրդի մեջ շատ ընթերցվող գրքերից մեկը՝ «Գիրք պատմութեան կայսերն Փանցիանոսի»-ն:

Աստվածատուրը Կոստանդնուպոլսեցու տպարանում որպես սրբագրիչ աշխատել է և այնտեղ իր մի քանի երկերը լույս ընծայել ժամանակի նշանավոր բանաստեղծ Պաղտասար Դպիրը: Նա իբրև սրբագրիչ և խմբագիր աշխատել է նաև Կոստանդնուպոլսի մի քանի այլ տպարաններում, հրատարակել է իր քերականական աշխատությունները և բանաստեղծությունների (տաղերի) ժողովածուները (1723, 1734, 1740, 1769 թթ.), որոնք մեծ տարածում ունեին ժողովրդի մեջ:

1740-ական թթ. վերջերից Աստվածատուրի տպարանն անցնում է նրա որդի Հովհաննեսին և զործում ևս քառորդ դար, ապա 1776 թվականից հետո անցնում է Կոստանդնուպոլսի ուրիշ տպագրիչների ձեռքը: Որոշ տվյալներ կան, որոնք ենթադրել են տալիս, թե այդ տպարանը գնել են նշանավոր Արապյանները, որոնց տպագրական գործունեությունը շարունակվել է մինչև 1850-ական թվականները: Այդպիսով, ըս-

Գ Ի Ր Կ
ՍԸՏՄԸՆԸՑ
 Դասքի ԼՆյաշի Փիւհոտաքի
 և ԼՃաբան Արդարի:
Տպեցեալ ՚ի ՏայրնյաւթԷ
 սբյ ԼՆմիածնի տն Լբրա
 Տամու Արքան Աթղնիսի
 ամ Տայրց:
ԼՆ ՚ի ՊատրիարքութԷ
 սբյ ԼԷմի տն Կրիգորի
 Արքազան և ԼՃաբան
 Արդարի:
Կամօք և գոյիւք ԱԷՏա
 զան ԼՆաշնորդի Կոստան
 գրնու պօլսոյ՝ տն ՅօՏան
 նիսի Արքան և ԼՃաբան
 Արդարի:

Նկ. 17. Գավիթ Աննադր, Գիրք սահմանաց (անվանաթերթ),
 Կոստանդնուպոլիս, 1731 թ.

տացվում է, որ Աստվածատուր Դպիրի հիմնած տպարանը մեկ ու կես դարի կյանք է ունեցել:

XVIII դարի ընթացքում Կոստանդնուպոլսում գործել են նաև Սարգիս Դպիրի, նրա որդի Մարտիրոսի, Չնչին Հովհաննեսի, Բարսեղ և Հակոբ, ապա՝ Սարգիս և Միքայիլ Սեբաստացիների, Աբրահամ Թրակացու, Հովհաննեսի և Հակոբի, Ստեփանոս Պետրոսյանի, Արապյանների, «Մալր դպրատան», Մատթեոս Դպիր Հովնանյանի և այլոց տպարանները:



Նկ. 18. Գրիգոր Գալաստրալյանի «Գրգոյկ որ կոչի նուագան»-ից բացվածք: Հրատ. Մալր դպրատան (Կ. Պոլիս, 1794 թ.)

Հատկապես նշանակալից եղավ Արապյանների դերը հայ գրքի պատմության մեջ: Հովհաննես Արապյանը և նրա որդի Պողոսը 1766 թվականից աշխատել են Հակոբ (Սարգսի որդի) տպագրիչի հետ միասին («Հովհաննես և Հակոբ» տպարան), ապա Արապյանները սկսել են գործել առանձին:

Նշանավոր էր Պողոս Արապյանը (1742—1835), որ Օսմանյան կայսրության մեջ հռչակված գրածուլիչ էր և տպագրության բնագավառում, եղել է Թուրքիայի արքունի տպարանի տեսուչը, պատրաստել է հայկական տարբեր տեսակի շատ տպատառեր, հորինել է թուրքերեն տպագրության համար նոր տառատեսակներ, վրաց Հերակլ թագավորի հրավերով 1781—83 թթ. եղել է Թիֆլիսում, ձուլել վրացական տառեր, վերականգնել տեղի տպարանը և վրացերեն գրքեր տպագրել:

Կոստանդնուպոլսի Արապյանների մի քանի տպարաններում լույս են տեսել շուրջ 150 անուն հայերեն գրքեր ու պարբերականներ, բարձրորակ տպագրությամբ:

XVIII դարի ընթացքում Կոստանդնուպոլսում գործել են ավելի քան երկու տասնյակ հայկական տպարաններ, որոնք մեսրոպատառ դիրք են մատակարարել ինչպես տեղի հայությանը, այնպես էլ Հայաստանին ու հայաշատ այլ վայրերի: Այս ժամանակաշրջանի պոլսահայ տպարաններն են, որ լույս բնծայեցին հայ հին և միջնադարյան հեղինակների մի ղգալի մասի երկերը, որոնք նոր կյանք առան, դարձան հազարների սեփականություն: Բացի վերը հիշված հեղինակներից, առաջին անգամ Կոստանդնուպոլսում հրատարակվեցին նաև Փավստոս Բուզանդի, Եղիշեի, Ներսես Լամբրոնացու, Գրիգոր Սկևռացու, Ստեփանոս Օրբելյանի և ուրիշների երկերը: Հայ թարգմանական մատենագրությունից հրատարակվեցին Հովհան Ոսկեբերանի, Եփրեմ Խուրի Ասորու և այլոց երկերը:

XVIII դարում Կոստանդնուպոլսի տպարանները լույս բնծայեցին նաև նույն ժամանակաշրջանի մի շարք գործիչների ու հեղինակների երկեր, այդ թվում Ղազար Ջահկեցու, Հակոբ Նալլանի, Հակոբ Շամախեցու, Գեորգ Մխլայմի, Հովհաննես Մրգուզի, Պաղտասար Գպիրի և ուրիշների: Հրատարակվեցին բազմաթիվ տաղարաններ, դպրոցական այբբենարաններ, մի քանի անգամ տպագրվեց այն ժամանակ շատ ընթերցվող «Պղնձե քաղաք» գիրքը և այլն:

Իհարկե, ավելի շատ էին հրատարակվում կրոնական ու եկեղեցական գրքեր, որոնք այն ժամանակ գլխավորապես հայ եկեղեցու պատվերով կամ պահանջով էին տպագրվում: Այդ գրքերը օգտագործվում էին նաև իբրև մայրենի լեզվի դասագրքեր, մեծ մասամբ՝ որպես ընթերցանության գրքեր դպրոցներում:



Նկ. 18. Եղիշե Կողբացու «Եղծ ազանդոց»-ի առաջին հրատարակության անվանաթերթը. Չմյուսնիա, 1762 թ. տպագր. Մահաբեի Մարկոսի

XVIII դարում Կոստանդնուպոլսը դարձավ նաև հայ գրավաճառության կենտրոն: Այստեղ հայ գրավաճառները սկսեցին ներգործել գրահրատարակչության վրա: Ոչ քիչ դեպքերում հայ տպագրիչները այս կամ այն գրքի տպագրությանը ձեռնարկում էին գրավաճառի խորհրդով կամ պատվերով: 1730—40 թթ. Կոստանդնուպոլսում այս կարգի գրավաճառներ

քից են եղել տիրացու Հարությունը, վերոհիշյալ Մանուկ էրզրումեցին և ուրիշներ:

Թուրքիայում բացի Կոստանդնուպոլսից, XVIII դարում հայկական տպագրություն է եղել նաև Զմյուռնիա հայաշատ քաղաքում: Այստեղ Մահտեսի Մարկոս անունով փորձված մի տպագրիչ 1759 թվականին հիմնել է տպարան և լույս բնծայել «Գիրք մեկնութեան»-ը (ժամակարգության մեկնություն է): Տպարանի լույս բնծայած երեք գրքերից մեկը շատ կարևոր հրատարակություն է՝ V դարի ականավոր փիլիսոփա Եզնիկ Կողբացու Եղծ աղանդոց-ը: Դա Եզնիկի հայտնի երկի առաջին տպագրությունն է (1762 թ.), որ կատարվել է այդ երկի պահպանված միակ ձեռագիր օրինակից:

Եվրոպացիների հրատարակած հայերեն գրքեր

Տեսանք, որ հայ տպագրության առաջին երկու դարերում հայերեն հրատարակություններ կատարվել են նաև եվրոպացի տպագրիչների ու հրատարակիչների կողմից: Դա շարունակվում է XVIII դարում:

Եվրոպացիների տպարաններում հայերեն գրքերի հրատարակությունը միշտ էլ մասնակցել են հայազգի սրբագրիչներ, որոնք հաճախ նաև խմբագիրներ էին, բնագիր պատրաստողներ: Այդ տպարաններում եղել են նաև հայ գրաշարներ:

XVIII դարում մինչև 1790-ական թվականները շարունակում էր գործել Հոմի Հավատի տարածման (Ուրբանյան) տրպարանը: Հայերեն գրքերը շարունակում էին տպագրվել սուլթանշահ-գրանժոնյան տպատառերով, իսկ 1780-ական թվականներին նոր, ավելի կատարելագործված տառեր սկսեցին գործածվել:

Այս հարյուրամյակի ընթացքում վենետիկում հայերեն գրքեր լույս են բնծայել Անտոնիո Բորտոլին, Ստեֆանո Օրլանդոն, Գեմետրիո Թեոդասիոն (ժագումով հույն), Զ. Բաշոն, Բատիստա Ալբրիցցի Զերոլիմոն, Պիետրո Վալվազին, Զիովաննի Պիացցան: Իտալական տպարաններին հայերեն գրքեր սովորաբար պատվիրում էին հայերը:

XVIII դարում եվրոպացիները հայերեն լեզվով կամ հա-

յերեն հատվածներով գրքեր շարունակել են տպագրել Լոնդոնում, Փարիզում, Հնոմում. այս դարում իբրև նորություն հայերեն տպագրություն է կատարվել Պարմա (Իտալիա), Հարլեմ (Հոլանդիա), Նյուրնբերգ (Գերմանիա) և այլ քաղաքներում:

Մ խ ի թ ա ռ յ ա ն ն ե Ր

XVIII դարի երկրորդ կեսից Արևմտյան Եվրոպայում հայերեն գրքերի հրատարակման գործում զգալի է դառնում Մխիթարյանների դերը:

Մխիթարյան անունով կոչվում են կաթոլիկ հայ հոգևորականների երկու միաբանություններ՝ Վենետիկի և Վիեննայի, որոնք հայ գրականության, գիտության, դպրոցա-կրթական և առհասարակ հայ մշակույթի զարգացման գործում հրակայան դեր կատարեցին XVIII և XIX դարերում:

Միաբանությունների հիմնադիրը եղել է Մխիթար Սեբաստացին (1676—1749): Նա ծնվել է Փոքր Հայքի Սեբաստիա քաղաքում: 15 տարեկան հասակում մտել է տեղի Ս. Խաչ վանքը և եռանդով զբաղվել ուսումնական գործով: Ապա անցել է Էջմիածին, Սեան՝ նպատակ ունենալով ուսումը շարունակել և հիմնել հայոց ուսումնա-մշակութային մի կենտրոն՝ ժողովրդին լուսավորելու նպատակով: Հայաստանն այդ ժամանակ, երկու մասի բաժանված, շարունակում էր մնալ Պարսկաստանի և Թուրքիայի բռնապետական իշխանությունների ներքո, և Մխիթար Սեբաստացու երազած մշակութային մի կենտրոն այնտեղ հիմնելը հեշտ գործ չէր: Մյուս կողմից, երկրի հետամնացությունը, տպագրության բացակայությունը, նորագույն գրականության լուրջ պակասը նույնպես անհաղթահարելի խոչընդոտներ էին ստեղծում:

Սեբաստացին որոշում է իր երազած կենտրոնը փորձել եվրոպայում հիմնելու, որտեղ այն կարող էր ազատ լինել բռնապետական ճնշումներից, և առավել զարգացած շրջապատը լայն հնարավորություն կստեղծեր հայերեն գրքեր հրատարակելու, ուսումնարան հիմնելու, հարուստ գրադարան ստեղծելու:

Սեբաստացին նախ գալիս է Կոստանդնուպոլիս, որտեղ 1701 թ. հիմնում է իր միաբանությունը և դպրոց, ապա 1717 թ. միաբանությամբ հանդերձ հաստատվում է Վենետիկի Ս. Ղազար կղզում և անմիջապես ծավալում կրթական, գրական ու գրահրատարակչական գործունեություն:

Մխիթար Սեբաստացու մահից հետո միաբանության ավելի քան քառասուն անդամներ շարունակում են մշակութային գործունեությունը, սակայն 1772 թ. վեճեր են տեղի ունենում, և միաբանության մի մասն անջատվելով, հանգրվանում է Տրիեստում, որտեղից էլ 1811 թ. տեղափոխվում է Վիեննա ու հաստատվում այնտեղ:

Այդպես գոյացան հայ մշակույթի երկու առաջնակարգ կենտրոններ Եվրոպայի մեջ:

Երկու միաբանություններն էլ ունեցան խոշոր գիտնականներ, բանաստեղծներ, թարգմանիչներ, ուսուցչապետներ: Նրանք իրենց մոտ և այլ վայրերում հիմնեցին դպրոցներ, հրատարակեցին պարբերականներ, մեծ քանակությամբ զբրքեր:

Մխիթարյանների գործունեությունը Վենետիկում ու Վիեննայում շարունակվում է և այժմ: Առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ 1915—1920 թթ. Արևմտյան Հայաստանը ցեղասպանության ու տեղահանության պատճառով դարձավ հայազուրկ, Մխիթարյանների գործունեությունը սկսեց թուլանալ:

Մխիթարյանների մշակութային բազմաբնույթ գործունեության մեջ այժմ մեզ հետաքրքրողը նրանց տպագրական-հրատարակչական գործերն են, որոնց հակիրճ պատկերն ենք ստորև ներկայացնում:

Մխիթարյանների հրատարակչական գործունեությունը սկսվել է դեռևս Կոստանդնուպոլսում: Մխիթար Սեբաստացին 1700 թ. Կոստանդնուպոլսի կաթոլիկական վերոհիշյալ տպարանում հրատարակում է կրոնական շորս գրքեր, այդ թվում՝ հաշատուր էրզրումեցու «Համառոտ մեկնութիւն Երզոյ կրգոցն Սողոմոնի», ապա և «Գիրք մտածական աղօթից»:

Հաստատվելով Վենետիկում՝ Սեբաստացին ծավալում է

իր միաբանության հրատարակչական աշխատանքը: Այս քաղաքում շուրջ 70 տարի Մխիթարյանները սեփական տպարան չունեին և հրատարակչության պատրաստած բնագրերը տպագրության էին հանձնում Վենետիկի իտալական տպարաններին, այդ թվում տպագրիչներ Բ. Ա. Ջերոլիմոսին, Ստ. Օրլանդոսին, Գ. Թեոդոսիոսին և այլոց: Վենետիկի Մխիթարյանները հատկապես շատ գրքեր են լույս ընծայել Ա. Բորտոլիի տպարանում:

Դեռևս 1715 թ. Մխիթարն այդ տպարանում լույս է ընծայում Ալբերտ Մեծի «Համառոտութիւն աստուածաբանութեան»-ը՝ իր ծանոթագրություններով («Լուծմունք»): Այնուհետև, 1718-ին և հաջորդ տարիներին Բորտոլիի մոտ տպագրում է մի քանի այլ կրոնական գրքեր:

Մխիթարն ինքը իր հեղինակած երկերից հրատարակել է հետևյալները. 1727 թ.՝ «Գուռն քերականութեան աշխարհաբառ լեզուին Հայոց», որ գրական արևմտահայերենի առաջին քերականությունն է (շարադրված է հայատառ թուրքերեն, օրինակները հայերեն): Նույն թվականին երկու անգամ լույս է ընծայել իր մի այլ աշխարհաբար գիրքը՝ «Գիրք քրիստոնէական վարդապետութեան», որն այս հարյուրամյակում վերահրատարակվեց ևս երկու անգամ: 1730 թ. Մխիթարը հրատարակում է իր «Քերականութիւն գրաբառի լեզուի» աշխատությունը և նրա մասը հանդիսացող «Հարցումն քերթողական»-ը, 1736-ին՝ «Մեկնութիւն գրոց ժողովողին»: Մխիթարի մահվան թվականին՝ 1749-ին տպագրվում է նրա «Բառգիրք հայկազեան լեզուի» ծավալուն (1251 էջ) բառարանի 1-ին հատորը, որը կազմված էր բառարանագրության նորագույն սկզբունքներով և հիմք դրեց հայ նոր գիտական բառարանագրությանը: Այնուհետև, Մխիթարի երկերը հրատարակում էին նրա աշակերտները: Օրինակ, բառարանի 2-րդ հատորը, որ պարունակում է գրաբարից աշխարհաբար և աշխարհաբարից գրաբար մասերը, ավարտել են Մխիթարի աշակերտները և լույս ընծայել 1769 թ.:

Մխիթար Սեբաստացու կատարած մյուս հրատարակու-



Նկ. 20. «Բառգիրք հայկազեան լեզուի», հատոր 2 (անվանաթերթ).
Վենետիկ, 1769 թ.

թյուններից են՝ Նոր կտակարան (1720), Ավետարան (1732), Աստվածաշունչ (1733) և ուրիշներ:

Մխիթարի մահից հետո, մինչև Ս. Ղազարում սեփական տպարան հիմնելը, 40 տարվա ընթացքում Մխիթարյանների հրատարակած գրքերից կարելի է հիշել ամենամյա օրացույցները, որոնք սկսում են լույս տեսնել 1757 թվականից. օրացույցները կազմում էին միաբանության անդամները. նախ Հակոբոս Չամչյանը (1757—1777), ապա Սուքիաս Աղամալյանը (1778—1779), Աղեքսանդր Ինճիճյանը (1780—1793), Խաչատուր Սյուրմեկյանը (1794, 1798—1800, 1810—1820), Մատթեոս Մաղաբյանը (1795—1797, 1801—1809) և ուրիշներ:

Մխիթարյան այդ շարունակվող օրացույցը դարձավ աշխարհի ամենաերկարակյաց ամենամյա հրատարակությունը (տպագրվել է շուրջ 220 տարի):

Մխիթարյանները 1779 թ. Գ. Թևոդոսիուի տպարանում լույս են ընծայում միաբանության անդամ Միքայել Չամչյանի «Քերականութիւն հայկազեան լեզուի» ծավալուն աշխատությունը, որը կարևոր նշանաձող եղավ գրաբարի ուսումնասիրության ասպարեզում և երկար ժամանակ հայկական դրույրոցներում օգտագործվում էր իբրև դասագիրք: 1784-ին Պ. Վալվազիի տպարանում Մխիթարյանները տպագրում են նույն Միքայել Չամչյանի «Պատմութիւն Հայոց» աշխատության առաջին հատորը, հաջորդ երկու տարիներին՝ երկրորդ ու երրորդ հատորները: Այս երկով հիմք է դրվում հայ ժողովրդի պատմության նոր, գիտական ուսումնասիրությանը: Չամչյանի այդ աշխատությունը օգտագործված աղբյուրների քանակով, նրանում տեղ գտած փաստերի առատությամբ, հաղորդման գիտական մակարդակով ու վստահելիությամբ մինչև օրս էլ մնում է չգերազանցված:

Իտալական տպարաններում կատարված Մխիթարյան վերջին հրատարակություններից հիշենք նաև Եղիա էնտադյանի «Համառօտ պատմութիւն օղապարիկ գետոյ» երկը (1785 թ.), Խ. Սյուրմեկյանի «Համառօտ թուաբանութիւն» աշխարհաբար դասագիրքը (1788 թ.):

Երկու միաբանութիւններից առաջինը տպարան բացեց Տրիեստում հաստատվածը՝ այդ քաղաքում հաստատվելուց 3 տարի անց՝ 1776 թ.: Այդ տարի տպարանի հրատարակած երախայրիքներն էին «Յորդորակ առ պաշտպանութիւն Սրբոյն Աստուածածնի», ապա՝ Այբբենարան, «Քրիստոնէական»:

Տրիեստում Մխիթարյան տպարանը մինչև Վիեննա տեղափոխվելը՝ 35 տարվա ընթացքում լույս է բնծայել ավելի քան 70 անուն հայատառ գրքեր, որոնցից 25-ը մետրոպատառ թուրքերեն: Մխիթարյան տպարանը հրատարակում էր նաև եվրոպական լեզուներով գրքեր, որից և միաբանութիւնը ըստանում էր իր եկամտաւորի զգալի մասը:

Տրիեստում հրատարակված հայերեն գրքերի մեծ մասը կրոնական-եկեղեցական է: Հրատարակվել են ժամագրքեր, պատարագատետրեր, Մաշտոց (1790 թ.), Ավետարան (1807): Տպագրվել են նաև տոնացույցեր ու դասագրքեր. վերջիններից հետաքրքրական են մի Այբբենարան՝ հրատարակված 1797-ին և մանավանդ ավելի վաղ 1788-ին լույս բնծայված «Հայնակ և նեմէցնակ... վասն պիտոյութեան հայ տղոց թրանսիլվանիացու երկրին»: Սա դասագիրք էր Տրանսիլվանիայի գերմանախոս հայ երեխաներին հայերեն սովորեցնելու համար: Նրման բնույթի էր «Հայնակ և մաջոնակ» (1834) դասագիրքը, որի նպատակն էր հունգարախոս հայերին հայերեն սովորեցնելը: Հիշենք, որ Տրանսիլվանիան (կամ Առդեալը) այն ժամանակ գտնվում էր Հունգարիայի կազմում (Ավստրա-հունգարական կայսրութիւն մեջ), և այնտեղ հայկական մեծ բնակավայր կար՝ կենտրոն ունենալով Գեոլա հայաքաղաքը: Տրիեստում, ապա Վիեննայում հաստատված Մխիթարյանները ստանձնել էին Տրանսիլվանիայի հայութիւն կրթական գործը:

Տրիեստում լույս տեսած հայերեն աշխարհիկ բնույթի գրքերից են թարգմանական այնպիսի երկեր, ինչպես, Եզոպոսի «Առակք»-ը (1784), Գուլիելմ Թոբերտսոնի «Վիպասանութիւն Ամէրիկոյ»-ն (1784), Բ. Կրոշեի «Պատմութիւն Ճենգիզի» (1788) և այլն: Տպագրվեց նաև գիրք Չինաստանի

մասին (1783), Մ. Գասպարյանցի թվաբանութիւն ձեռնարկը («Գործ համարողական արհեստի», 1787) և այլն:

Որոշ գրքեր հրատարակվում էին աշխարհաբար:

Ինչ վերաբերում է հայատառ թուրքերեն գրքերին, ապա նրանք հիմնականում կրոնա-բարոյական բնույթի էին և նախատեսված էին թուրքախոս դարձած հայերի համար: Այդ գրքերի թուրքերեն լեզվում շատ էին հայերեն բառերը, հատկապես քրիստոնեութիւն հետ առնչված, որ նկատելի է նույնիսկ վերնագրերում, ինչպես՝ «Սուրբ խաչ եօլուն գիարէթի» (1783), «Մտածական աղօթք քիթալը» (1783, 1786) և այլն:

Վենետիկի Մխիթարյանները տպարան են հիմնում 1789 թ.: Առաջին տպարանապետն էր Հովհաննես Զոհրապը, ապա 24 տարի (1790—1814) տպարանը ղեկավարել է Խ. Սյուրմելյանը:

Իր հաստատման առաջին տարում այս տպարանը լույս է բնծայել 5 անուն գրքեր, այդ թվում Գրիգոր Նարեկացու երկու երկերը՝ «Գիրք աղօթից»-ը և «Մեկնութիւն Երգոց երգոյն Սողովմոնի»-ն:

Մինչև դարավերջ Ս. Ղազարի Մխիթարյան տպարանը լույս է բնծայել մոտ երեք տասնյակ անուն գրքեր: Այստեղ են առաջին անգամ հրատարակվել հին ու միջնադարյան նշանավոր հայ հեղինակներից Մխիթար Գոշի առակները (1790 թ.), Ղազար Փարպեցու «Պատմութիւն հայոց»-ը (1793), Մովսէս Խորենացու թարգմանած «Իրք պիտոյից»-ը (1796) և այլն: Նույն շրջանում տպարանի լույս բնծայած գրքերից են նաև Ղուկաս Ինձիճյանի «Տեսութիւն հին և նոր աշխարհագրութեան»-ը (1791), Սահակ Պրոնյանի «Երկրաշափութիւն»-ը (1794) և այլն:

Ս. Ղազարի տպարանը անընդհատ կատարելագործվում էր, հարստանում եվրոպական նորագույն սարքավորումով, այն հայոց մեջ մշակութային ավելի ու ավելի նշանակալից դեր էր սկսում կատարել: Սակայն Վենետիկի, ինչպես նաև Վիեննայի Մխիթարյանների գործունեութիւնը զարգացման բարձրակետին հասավ XIX դարի ընթացքում:

Գարավերջում՝ 1799 թ., Վենետիկի Մխիթարյանները

ձեռնարկեցին իրենց պարբերականի հրատարակմանը, որ հայոց երկրորդ հանդեսն էր՝ 1794—96 թթ. հնդկահայոց «Ազդարար»-ից հետո: Նոր պարբերականը «Տարեգրութիւն» անունն էր կրում: Այն լույս տեսավ 1800 թ. (նյութերը վերաբերում էին նախորդ տարվան): Այս պարբերական հրատարակութիւնը ի տարբերութիւն գրաբար «Ազդարարի» աշխարհաբար էր՝ գրական արեւմտահայերեն: Այսպիսով, հայ հնատիպ գրքի ժամանակաշրջանում եղան հայերեն երկու պարբերական հրատարակութիւններ՝ «Ազդարար» և «Տարեգրութիւն»:

XVIII դարի 70—80-ական թթ. հայկական տպագրութիւնը թափանցեց Հնդկաստան, Ռուսաստան և մանավանդ հայոց աշխարհ:

Տպագրության մուտք Հայաստան

Հայկական տպագրութիւնը իր սկզբնավորումից սկսած 260 տարի զարգացավ օտարութեան մեջ՝ ծառայելով մայր երկրին: Այդ ընթացքում մտադրութիւններ, նաև փորձեր են եղել տպագրութիւնը հայոց բնաշխարհում հաստատելու, սակայն միշտ մնացել են ապարդյուն: Հայաստանի քաղաքական տարափոխիկ վիճակը, պատերազմները, էջմիածնի անկալուն կացութիւնը և այլ հանգամանքներ հնարավորութիւն չէին տալիս Հայաստանի որևէ վայրում տպարան հիմնելու:

Այդպիսի հնարավորութիւն ստեղծվեց XVIII դարի երկրորդ կեսին՝ Սիմեոն Երևանցու կաթողիկոսութեան (1763—1780 թթ.) օրոք: Պարսկա-թուրքական պատերազմները վաղուց դադարել էին և Արարատյան դաշտը՝ շրջակայքով մրտնուում էր Պարսկական պետութեան մեջ: Խաղաղութիւնը խախտվում էր գլխավորապես տեղի ու շրջակայքի ավատական իշխանութիւնների՝ խաների, փաշաների, վրաց թագավորի և այլոց բախումներով: Այդ իշխանութիւնները Պարսկաստանից իրենց կիսանկախ էին զգում, որ պարսկական կենտրոնական իշխանութեան թուլացման արդյունք էր: Քաղաքական իրադրութիւնը և Սիմեոն Երևանցու դիվանագի-



Նկ. 21. Սի էջ Հայաստանում հրատարակված առաջին գրքից (Սիմեոն Երևանցի Զրոսարան հոգևոր, էջմիածին, 1772 թ.)

տական հմտութիւնը հնարավորութիւն են ստեղծում էջմիածնի դիրքն ամրացնելու: Միմեոն Երևանցին բարիդրացիական հարաբերութիւններ է հաստատում Երևանի խան Լուսնչի հետ: Միաժամանակ բարեկամանում է Լուսնչի ախոյան Վրաստանի Հերակլ II թագավորի հետ: Նա հեղինակութիւն ունի նաև շրջակա մյուս խաների ու փաշաների մեջ:

Միմեոն կաթողիկոսը լավ հարաբերութիւններ ստեղծեց նաև Ռուսաստանի Եկատերինա II կայսրուհու հետ՝ նրանից ստանալով Ռուսական կայսրութեան բոլոր հայերի առաջնորդ համարվելու իրավունքը:

Միմեոն Երևանցին կարողացավ նախկինում էջմիածնին պատկանող մի շարք կալվածքներ ու գյուղեր Մայր աթոռին վերադարձնել խաների ու փաշաների տիրապետութիւնից: Դա ամրապնդեց էջմիածնի նյութականը: էջմիածնում հնարավոր դարձավ մի շարք կառուցումներ անել, բարելավել կրթական գործը, հոգ տանել Մատենադարանի մասին և այլն: Սակայն Միմեոն Երևանցու կատարած մշակութային ամենակարևոր գործը Հայաստանի հողում առաջին տպարանի հիմնադրումն էր:

Նախքան կաթողիկոս ընտրվելը՝ Միմեոնն, իբրև էջմիածնի նվիրակ, սպրել էր Կոստանդնուպոլսում, ծանոթ էր տեղի հայկական դադութի մշակութային կյանքին, մասնավորապես տպարանների աշխատանքին: Եղել էր նաև Զմյուռնիայում, աջակցութիւն ցույց տվել տեղի հայկական տպարանի աշխատանքին: Հայրենիքում տպարան հիմնելու միտքը նրա մեջ հաստատվել էր դեռևս այն ժամանակ, գուցե և ավելի վաղ, երբ նվիրակ էր Մադրասում և ծանոթ էր տեղի հնդկահայ հարուստ վաճառական Գրիգոր Միքայելյան-Չաքիկյանին: Վերջինս պատրաստակամութիւն էր հայտնել հոգալ հայրենիքում կառուցվելիք տպարանի ծախսերը:

Կաթողիկոս դառնալուց երկու տարի հետո Միմեոն Երևանցին նամակներ է գրում Կոստանդնուպոլիս և Զմյուռնիա իր ներկայացուցիչներին՝ հորդորելով նրանց ձեռք բերել հայկական տպատուներ և մամուլ՝ էջմիածին տեղափոխելու համար: Կաթողիկոսը փորձում է գնել Կոստանդնուպոլսում բը-

նակվող Սարգիս Սաֆարյանի հայերեն տպատուների հայրերն ու մայրերը: Սարգիսը եկել էր Վենետիկից՝ Կոստանդնուպոլիս բերելով տպագրական սարքեր, սակայն դրանց համար մեծ գին էր ուզում և համաձայնութեան չի գալիս կաթողիկոսի ներկայացուցչի հետ: Այնուհետև, կաթողիկոսը փորձում է համոզել Զմյուռնիայի հայկական տպարանի տիրոջը՝ Մարկոսին, տպարանը էջմիածին տեղափոխել, բայց սա ձգձգում է գործը: Այա՛ն՝ Ամստերդամի հայկական եկեղեցու տեսուչ Հովհաննեսի միջոցով Միմեոն Երևանցին փորձում է ձեռք բերել այդ քաղաքում բնակվող Առաքել Պողոսյանի ունեցած հայկական տուների մայրերն ու հայրերը: Պողոսյանը մտադիր էր Ամստերդամում հայկական նոր տպագրութիւն սկսել, բայց տպագրական բանվորների պակաս էր զգում: Կաթողիկոսը առաջարկում է տպարանը տեղափոխել էջմիածին և այստեղ սկսել տպագրական աշխատանք: Առաքելը համաձայնութիւն չի տալիս:

Ի վերջո, Միմեոն Երևանցին որոշում է տպարան ստեղծել տեղի ուժերով: Նա դրամական օգնութիւն է ստանում Գ. Միքայելյան-Չաքիկյանից: էջմիածնում սկսվում են տպարանի շէնքի կառուցման, տպագրական պարագաների պատրաստման աշխատանքները: Ստեղծվում է գրաձուլարան: Աշխատանքներին եռանդուն մասնակցում են կաթողիկոսի տեղապահ Մկրտիչ Շոռոթեցին և էջմիածնի ոսկերիչ վարպետ Հարութիւնը, որը պատրաստում է տպատուներ, զարդերի ու պատկերների տպատախտակներ: Տպագրական ձեռքի մամուլը նույնպես պատրաստվում է այս անձանց շնորհիվ (1910 թ. այդ մամուլը գտնվել և այժմ պահվում է Հայաստանի պատմութեան թանգարանում):

1771 թ. էջմիածնի տպարանը սկսում է գործել: Գրաշարները, տպագրողները, սրբագրիչները էջմիածնի միաբանութեան անդամներն էին:

Տպարանի շէնքի ճակատին զրվում է ընդարձակ արձանագրութիւն, որ կրում է 1771 թվականը: Արձանագրութեան մեջ (պահվում է Հայաստանի պատմութեան թանգարանում) հիշվում են Միմեոն Երևանցու և Գրիգոր Միքայելյան-Չաքիկ-

յանի անունները: Այս անունները գրվում էին նաև տպարանի հրատարակած գրքերի հիշատակարաններում:

Էջմիածնի նորաստեղծ տպարանը կոչվում է Գրիգոր Լուսավորչի անվան: Այստեղ ըստ հայ հին տպագրիչների ավանդույթի ամենից առաջ սկսում են տպագրել Սաղմոսարան, որը սակայն անհաջող է ստացվում և ոչնչացվում է: 1772 թ. սկսվում է Սիմեոն Երևանցու «Զբօսարան հոգևոր» աղոթագրքի տպագրությունը, որն ավարտվում է հաջողությամբ:

Այդպես, Սիմեոն Երևանցին կարողացավ անել այն, ինչ դեռևս XVI դարից եղել էր հայ մի շարք գործիչների երազանքը՝ հայրենիքում տպագրել հայերեն գրքեր:

Էջմիածնի հրատարակությունների հիշատակարանները վկայություններ են տալիս, թե ինչպիսի եռանդով է կաթողիկոսն անձամբ մասնակցել տպարանի հիմնադրմանը և ապա՝ տպագրական աշխատանքին: Տպարանի առաջին տեսուչ նշանակվել է Իսահակ Գեղամացին, մի եռանդուն անձնավորություն, որ շատ գործ է կատարել տպարանի աշխատանքը կատարելագործելու համար:

Հայաստանում տպագրված առաջին գիրքը՝ «Զբօսարան հոգևոր»-ը փոքր չափսի է (7,5×10,5 սմ.), 180 էջից բաղկացած: Տպագրությունը պարզունակ է, շարվածքն անկանոն, թեև միանգամայն ընթեռնելի: Պատկերներն անհրաժեշտ պարզությամբ չեն դրոշմված: Կաշեպատ կազմը գեղեցիկ զարդեր ունի, որոնք գրքի արտաքինը հաճելի են դարձնում:

Գիրքն սկսվում է հեղինակի առաջաբանով, իսկ վերջում դրված է ընդարձակ հիշատակարան, որտեղ մանրամասն պատմվում է էջմիածնի տպարանի հիմնադրման հանգամանքների մասին: Նկարագրվում է այն պատերազմը, որը 1768-ից մինչև 1771-ը տեղի է ունեցել Երևանի խանությունից և վրաց Հերակլ թագավորի միջև և որից տուժել է հայկական բնակչությունը: Հայտնի է, որ հակառակորդ կողմերին հաշտեցնողը եղել է ինքը՝ Սիմեոն Երևանցին: Հիշատակարանից պարզվում է նաև, որ պատերազմի պատճառով տպարանի բացումը մի քանի տարով ուշացել է:

1773 թ. էջմիածնի տպարանում լույս է տեսել Սիմեոն

Երևանցու «Տաղարան»-ը, ուր տեղ են գտել հեղինակի մի շարք բանաստեղծությունները: Հաջորդ տարին տպագրության է հանձնվել և 1775-ին լույս ընծայվել Սիմեոն Երևանցու կազմած «Տօնացոյց»-ը, որ 564 էջանոց գիրք է և արդեն աչքի է ընկնում համեմատաբար հաջող տպագրությամբ: Ունի բազմաթիվ գեղեցիկ զարդեր և պատկերներ: Գրքի հիշատակարանից պարզվում է, որ օգտագործված բոլորագիր տպատառերը, ինչպես և բոլոր զարդերն ու պատկերները պատրաստել է Հարություն էջմիածնցին: Հիշատակարանում խոսք կա նաև Սիմեոն Երևանցու տոկոնություն մասին. ասվում է, որ կաթողիկոսը, չնայած շարաշունչ ժամանակի մրրիկներին, «ոչ թուլանայ երբէք յայսպիսեաց աթոռաշահ և աղօգուտ գործառութեանց»:

Վերջապես, էջմիածին է գալիս Զմյուռնիայից հրավիրված տպագրիչ Մարկոսը, բայց հմուտ վարպետի օգնությունը էջմիածնի տպարանին կարճատև է լինում. ծերունին շտաով մահանում է:

Տպարանի կատարելագործմանը նպաստ է բերել նաև պուլսեցի նշանավոր վարպետ Պողոս Արապյանը, որը որոշ ժամանակով մնացել է էջմիածնում:

Էջմիածնի տպարանի աշխատանքներին խանգարում էր թղթի պակասը: Թուղթը բերվում էր Եվրոպայից, որ մեծ դժվարությունների ու ծախսերի հետ էր կապված: Սիմեոն Երևանցին որոշում է տեղում կառուցել թղթի գործարան: Պարսկաստանից և Փարիզից նա հրավիրում է պարսիկ և ֆրանսիացի մասնագետներ: Գործարանի կառուցման դրամը տրամադրում է նույն Գ. Միքայելյան-Չաքիկյանը: 1776-ին էջմիածնի թղթի գործարանն արդեն աշխատում էր (բամբակի, քաթանի և կանեփի հումքով): Հայաստանի թուղթը բավական որակով է. այն ունի նաև իր հատուկ ջրանիշը՝ կազմված գործարանի կառուցման թվականից, Սիմեոն կաթողիկոս և Գրիգոր Միքայելյան անունների սկզբնատառերից:

1779-ին Սիմեոն Երևանցին հրատարակության է հանձնում «Պարտավճար» դավանաբանական աշխատությունը, որի տպագրության համար առաջին անգամ սկսում է օգտա-

գործվել էջմիածնի գործարանի արտադրած թուղթը: Այդ ժամանակ նոր կոնվներ են ծագում խան Հուսեյնի և Հերակլ թագավորի միջև: Սկզբում Սիմեոն Երևանցուն հաջողվում է հաշտեցնել կողող կողմերին. հաշտության առթիվ կաթողիկոսը իր բարեկամ վրաց թագավորին նվիրում է մի տպագրական մամուլ, որը հետագայում օգտագործվեց Թիֆլիսի վրացական տպարանում: Սակայն Երևանի խանը, որ պարտքեր պետք է վճարեր վրաց թագավորին, չի կատարում իր խոստումը, և ընդհարումները վերսկսվում են ու տևում մի քանի ամիս: Կոնվները հիմնականում տեղի էին ունենում Արարատյան դաշտում, նաև էջմիածնի մոտակայքում: Տպարանը փակվում է:

Մանր ապրումների մեջ 1780 թ. վախճանվում է Սիմեոն Երևանցին՝ իր աշակերտներին պատվիրելով ավարտել «Պարտավճար»-ի սկսված տպագրությունը:

Հաջորդ կաթողիկոսի՝ Ղուկաս Կարնեցու զահակալության (1780 թ.) սկզբի տարիներին տպարանի աշխատանքը թուլանում է, մինչև որ 1785-ին տպագրվում է մի ժամագրիք, որն արդեն վկայում է էջմիածնում տպագրական արվեստի լուրջ առաջընթացը: Այդ մեծագիր (21×29 սմ., 426 երկայուն էջ) գիրքը վարպետորեն է գորգարված. գեղեցիկ է անվանաթերթի նկարազարդ շրջանակը, նրբաճաշակ են ներսի զարդերը: Ձևավորման հեղինակը Հարություն էջմիածնեցին է, որ շատ նկատելիորեն կատարելագործել է իր արվեստը: Գրքի հիշատակարանը կարևոր տեղեկություններ է տալիս տպարանի աշխատանքի վերաբերյալ, մասնավորապես խոսվում է տպագրական տարբեր նյութեր ու սարագաններ հեռու վայրերից բերելու հետ կապված դժվարությունների և Կովկասի լեռնականների ավերող արշավանքների պատճառով տպարանի կրած վնասների մասին: Ահա մի հատված. «Որպես և այժմոյս չառաջարժութիւն կովկասականաց խտասրտաց ի յաւերագործութիւն և յարինհեղութիւն այնպէս վրդովեաց զմեզ, մինչև անյոյս լինիլ մեզ և ի կենաց, ըստ գրեցելոյն»:

էջմիածնի տպարանի կատարելագործման վկայությունն է նաև Հովսեփոս Երբայեցու «Յաղագս պատերազմին հրէից ընդ հռովմայեցիս» գիրքը (Ստեփանոս Լեհացու թարգմանու-



Նկ. 22. 1785 թ. էջմիածնում տպագրված ժամագրքի անվանաթերթը՝ ձևավորված Հարություն էջմիածնեցու կողմից

թյամբ), որ լույս է տեսել 1787 թ., դարձյալ Հարություն էջմիածնեցու բարձրորակ ձևավորմամբ: Այս թվականներին էջմիածնում տպագրված գրքերը ունենում էին զարդանկար կաշեպատ կազմեր, որոնց մի մասը արվեստի իսկական գործեր են:

1787—1789 թթ. Ս. Գրիգոր Լուսավորչի անվան տպարանը լույս է ընծայում Սաղմոսաբան, Խորհրդատետր, Շարակնոց, իսկ 1793-ին՝ երկրորդ անգամ Սիմեոն Երևանցու Տաղաբանը: Գրանից հետո տպարանի աշխատանքը քառորդ դարով (մինչև 1818 թ.) դադարում է:

Արարատյան դաշտում միմյանց են հաջորդում խաների, բեգերի և փաշաների մի շարք նոր կռիվներ: Վրա է հասնում Աղա Մահմադ խանի ավերիչ արշավանքը (1795 թ.): Սկսվում է ռուս-պարսկական պատերազմը (1800 թ.): Խառը տարիներին էջմիածինը նորանոր կողոպուտների է ենթարկվում, թղթի գործարանն ավերվում է: Տպարանը կողոպտվում է: Գեպեքեր են եղել, երբ հայերը պարսիկ զինվորներից մեծ գումարներով գնել են տպարանից տարված տպատառեր և այլ պարագաներ ու վերադարձրել էջմիածնին:

Մինչև 1800 թ. էջմիածնում տպագրվել է 13 անուն գիրք՝ 7-ը Սիմեոն Երևանցու, 6-ը Ղուկաս Կարնեցու օրոք: Գրքերի այս քանակը, հասկանալի է, որ մեծ նպաստ չի կարող համարվել հայ գրքի ստեղծման ու բազմացման ուղիներում, շուրջ 1000 անուն հայերեն հնատիպ գրքերի մեջ այդ քանակը նշանակալից չէ: Հասկանալի է նաև, որ տպարանը վճռական փոփոխություն չի մտցրել անգամ XVIII դարի վերջին քառորդում հայ տպագրության կենտրոնների կարևորության մեջ: էջմիածինն այդ ժամանակամիջոցում իրեն անհրաժեշտ գրքերը հիմնականում շարունակում էր պատվիրել դրսում, ինչպես, օրինակ, Ն. Նախիջևանի, Աստրախանի, Կոստանդնուպոլսի տպարաններում:

Չնայած այս ամենին, էջմիածնի տպարանի դերը հայ մշակութի պատմության մեջ նշանակալից է: Արդեն ինքնըստ-


ինքյան կարևոր է այն փաստը, որ ավատական հետամնացության մեջ, պետականությունից զրկված Հայաստանը XVIII դարում դարձավ տպագրության երկիր:

Հայկական տպագրությունը Հնդկաստանում

Հնդկաստանի հայությունը հիմնականում կազմված էր նորջուղայեցիներից: Հնդկահայերի մշակութային կենտրոններն էին Կալկաթան և Մադրասը: XVIII դարի երկրորդ կեսին հնդկահայությունը նյութական բավական ծաղկուն վիճակի էր հասել, և հայկական տպարանի ստեղծման համար ամեն հնարավորություն կար:

Հնդկաստանում հայկական առաջին տպարանը հիմնում են նշանավոր Շահամիրյանները Մադրասում, 1772 թ.: Այս տպարանում են լույս տեսնում հայ հասարակական մտքի զարգացման մեջ նշանակալից դեր կատարած այնպիսի գրքեր, ինչպես՝ Հակոբ Շահամիրյանի «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ»-ը (1772 թ.) և Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառաց»-ը (1773 թ.): Այս երկերը անկախ, հանրապետական Հայաստան ստեղծելու ծրագիրն էին առաջադրում:

Ըստ երևույթին, ավելի նշանակալից էր միևնույն Մադրաս քաղաքում քիչ ավելի ուշ հիմնված մյուս հայկական տպարանի գործունեությունը, քանի որ այստեղ 1794 թ. հոկտեմբերից սկսում է տպագրվել հայոց պարբերական մամուլի առաջնեկը՝ «Ազդարար» ամսագիրը (հրատարակումը տևեց մինչև 1796 թ.): Հայ մշակութային կյանքում կատարած այս կարևոր իրադարձության նախաձեռնողը Հարություն քահանա Շմավոնյանն էր: «Ազդարարը» գրաբար ամսագիր էր, բայց նրա էջերում երբեմն տպագրվում էին նաև աշխարհաբար նյութեր: Շմավոնյանը նախքան «Ազդարար»-ը, լույս էր ընծայել ուշադրության արժանի այնպիսի գրքեր, ինչպես՝ Պաղտասար Դպիրի «Քերականութիւն»-ը (1791), Պորփյուրի «Ներածութիւն»-ը (1793), Հակոբ Թաղյանի «Գրքուկ երկրաչափական»-ը (1792): Այս տպարանը աշխատեց մինչև 1809 թ., ապա Շմավոնյանը գործի անցավ նույն թվականին րացված՝ Ս. Աղավալյանի տպարանում:



Նկ. 23. Հակոբ Շահամիրյանի «Որոգայթ փառաց»-ի անվանաթերթը՝ Մազրաս, 1773 թ.

Հնդկաստանում Մազրասից հետո, XVIII դարի վերջերին հայկական տպագրությունը թափանցեց Կալկաթա, ուր առաջին հայերեն գիրքը՝ Աբրահամ Կրետացու «Պատմութիւն անցից»-ը տպագրվեց 1796 թ.: Այս տպարանի հիմնադիրը Հովսեփ Ստեփանոսյանն էր:



Նկ. 24. Պատկեր «Որոգայթ փառաց»-ից

Հնդկահայ տպագրությունն ունեցավ իր առանձնահատուկ դեմքը նաև տպագրական արվեստի տեսակետից: Օրինակ, այստեղ տարածում գտան ուղղահայաց հայերեն տպատառերը, որոնց նախանմուշները առկա են դեռևս XVI դարում և որոնք ինչ-որ չափով հիմք ծառայեցին XIX դարում արամյան տառերի երևան գալուն:

Հայկական տպագրությունը Ռուսաստանում

1781 թ. Ռուսական կայսրության մեջ սկսեց գործել հայկական առաջին տպարանը: Նորջուղայեցի կրթյալ վաճառական Գրիգոր Խալիլարյանցը լոնդոնում պատրաստել

տված իր հայերեն տպատառերը բերելով Պետերբուրգ, դնում է տպագրական անհրաժեշտ սարքեր և սկսում է տպագրել հայերեն այբբենարան: Այս ձեռնարկումը հովանավորում է Ռուսաստանի հայերի հոգևոր առաջնորդ, հասարակական, մշակութային ակնավոր գործիչ Հովսեփ ԱրղուՅյանը:

Խալդարյանցի հրատարակած գրքերից առաջնեկը՝ այբբենարանը («Տետրակ այբբենական», 1781) եղավ Ռուսաստանում տպագրված հայերեն առաջին գիրքը: Այնուհետև հրատարակվել է Կլեոպատրա Սարաֆյանի «Բանալի գիտութեան» անունով հայ-ռուսերեն դասագիրք-բառարանը (1788): Այստեղ կա հայ-ռուսերեն խոսակցարան: Ուշագրավ է, որ գրված են գրական-արևելահայերեն խոսակցություններ: 1711 թվականից հետո սա առաջին դեպքն էր, որ նոր գրական հայերենի (աշխարհաբարի) արևելյան տարբերակով տպագրություն էր կատարվում: Գրքի առաջին մասը հայ-ռուսերեն բառարան է, երկրորդը հայերեն (աշխարհաբար) խոսել սովորելու ձեռնարկ է: Նոր գրական հայերենը բավական մշակված է և ինչ-որ չափով հիշեցնում է ճիշտ 70 տարի անց հրատարակված «Հյուսիսափայլ» նշանավոր ամսագրի լեզուն:

Ռուսաստանում հայ գրահրատարակչությունը կարծես հակում է ցուցաբերել հայերենի դասագրքեր, ինքնուսույցներ, բառարաններ հրատարակելու. դրանց թվում են նաև իր՝ Խալդարյանցի, հեղինակած «Գիրք, որ կոչի շափղ լեզուագիտութեան» կոչվող հայ-ռուսերեն բառարանը (1783 թ.) և Պողոս Տյուրիկեցի Քորոսյանի «Տետրակ համառոտ բառարանի» կոչվող թուրք-հայերեն շափածո բառարանը (Ն. Նախիջևան, 1794):

Գ. Խալդարյանցի մահից հետո տպարանը մնում է իբրև էջմիածնի սեփականություն. նրա փաստական տնօրենը դառնում է վերը հիշված Հովսեփ ԱրղուՅյանը, որը և տպարանը տեղափոխում է ավելի հայաբնակ վայրեր, նախ՝ Ն. Նախիջևան, ապա՝ Աստրախան: Այստեղ տպարանը շարունակում է աշխատել նաև XIX դարի առաջին կեսին:

Ն. Նախիջևանը (Գոնի Ռոստովի մոտ) իր շրջակա գյուղերով բաղկացած էր Ղրիմից այդտեղ փոխադրված հայերից:

Ղրիմահայերը ծագումով Հայաստանի Բագրատունիների թագավորության մայրաքաղաք Անիից ու շրջակայքից էին և Ղրիմի մի շարք քաղաքներում ունեին վանքեր, եկեղեցիներ, գրչության կենտրոններ: Այդ ժամանակ դեռևս մեծաքանակ Ղրիմահայությունը կապ էր պահպանում ինչպես Հայաստանի, այնպես էլ տարբեր վայրերի, գլխավորապես Ն. Նախիջևանի հայության հետ: ԱրղուՅյանի տպարանը 1790 թվականից աշխատում էր Ն. Նախիջևանի Ս. Խաչ վանքում, նրա արտագրանքը գլխավորապես օգտագործվում էր շրջակայքի և Ղրիմի հայության ու եկեղեցիների կողմից, ուղարկվում էր Հայաստան ու հայաբնակ այլ վայրեր:

Աստրախանը, ուր ԱրղուՅյանի տպարանը հաստատվեց 1796 թ., այդ ժամանակ դեռևս հայկական հոծ բնակչություն ուներ, կազմակերպված համայնք, որի հետ սերտ կապերի մեջ էին Մոզգոկի, Արմավիրի, Ղզլարի ու շրջակայքի հայկական ծաղկուն համայնքները: Հայկական տպարանը Աստրախանից գիրք էր մատակարարում նաև այդ շրջանների հայություն:

Երեք քաղաքներում գործած այս տպարանում մինչև XVIII դարի վերջը տպագրվել են շուրջ 50 անուն հայերեն գրքեր:

ԱրղուՅյանի տնօրինությամբ գործող այս տպարանը մեծ մասամբ կատարում էր էջմիածնի հրահանգներն ու պատվերները: Ըստ էության, այն դարձավ էջմիածնի տպարանը Ռուսաստանում (հիշենք, որ այն ժամանակ Ռուսաստանի բոլոր հայկական համայնքները կրոնական և մշակութային ղեկավարություն էին ստանում էջմիածնից):

Տպարանի լույս ընծայած գրքերի մեջ ամենամեծ տոկոսը կազմում են կրոնական-եկեղեցական երկերը, այդ թվում Ավետարան, սաղմոսարաններ, աղթագրքեր, Ճաշոց, մանավանդ շատ հրատարակվեցին մեծ ու փոքր ժամագրքեր:

Այուս հրատարակչություններից են հայ հին ու միջնադարյան հեղինակներ Եղիշեի «Գիրք որ կոչի Պատմագիրք»-ը («Վարդանանց պատերազմը», Պետերբուրգ, 1787 թ.), Ներսես Շնորհալու «Յիսուս որդի»-ն (Պետերբուրգ, 1785 թ.), Ստեփանոս Օրբելյանի «Ողբ և հառաչանք»-ը (Ն. Նախիջևան,



Նկ. 25. Նոր նախիջևանում տպագրված Նորհրդատերի անվանաթերթը (1794 թ.)

1790), Հովհաննես Երզնկացու «Վիպասանութիւն գերկնային մարմնոց շարժմանէ» տիեզերագիտական-փիլիսոփայական երկը՝ երկու հատորով (1792):

Տպարանը լույս ընծայեց շատ օրացույց-տոնացույցներ, ապա նաև Հ. Քալանթարյանի «Բժշկարան համառօտ»-ը (1793), Խորհրդատեր (1794), Ֆ. Ֆենելոնի «Պատմութիւն Թէլամարի որդւոյ» թարգմանական վեպը՝ երկու հատորով (1-ինը՝ 1793, 1794 թթ., 2-րդը՝ 1795 թ.) և այլն:

Հ. ԱրղուՅյանն այս տպարանում լույս ընծայեց նաև իր երկերից երկուսը՝ «Քարոզ» (1795) և «Խօսք ասացեալ...» վերնագրով ճառը՝ արտասանած Ղզլարում (1796):

1797-ին Աստրախանում հրատարակվում է նաև էֆիմերգէ, որ XVIII դարում տարբեր տեղեր լույս էր տեսել մի քանի անգամ:

* * *

XVIII դարի ավարտով վերջանում է հայ հնատիպ գրքի ժամանակաշրջանը, որի երեք հարյուրամյակների ընթացքում լույս տեսած գրեթե յուրաքանչյուր հայերեն գիրք ծանր երկունքով է ծնվել, ունցել է իր տպագրման հաճախ հուզիչ պատմությունը, երբեմն տարիներ տևած: Յուրաքանչյուրի վրա նաև զգացվում է վարպետ տպագրիչի անհատականությունը, տպագրական ոճը:

Պատկերացնելու համար XVI—XVIII դարերի հայ տպագրիչների աշխատանքի ծավալը հիշենք ՍՍՀՄ ժողովուրդների լեզուներով եղած հնատիպ գրքերի քանակային պատկերը: Ամենից մեծաքանակը ուսներեն հնատիպներն են, ապա ուկրաիններեն, որոնք հսկայանքով են հաշվվում: Այնուհետև, հնատիպ գրքեր կան հետևյալ լեզուներով՝ ըստ քանակի. հայերեն ավելի. քան 1000, լիտվերեն՝ 430 և լիտվերեն հատվածներով՝ 300=730, լատվիերեն՝ 420, էստոներեն՝ 262, վրացերեն՝ 85 (մոլդավերեն հնատիպերի քանակը պարզված չէ):

ՀԱՅ ԳԻՐԲԸ 1801—1920 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հայ ժողովրդի պատմության նոր շրջանի հատկանիշները ակնհայտորեն սկսում են երևան գալ XVII դարի երկրորդ կեսից: Այդ ժամանակ է սկիզբ առել նաև նոր գրական հայերենն ու նրանով ստեղծվող գրականությունը, թեև դեռևս բացարձակ գերակշռությունը մնում էր հին լեզվին և նրանով ստեղծվող գրականությանը:

XIX դարի սկզբից մինչև դարի կեսերը հայ ժողովրդի պատմության, մշակույթի ու գրականության մեջ երևան են գալիս այնպիսի երևույթներ, որոնք բնորոշ դարձան հայ հասարակական կյանքի և մշակույթի հետագա շրջանների համար: Այդ երևույթները իրենց յուրովի անդրադարձներն են ունեցել նաև հայ գրքի ու տպագրության զարգացման մեջ:

XIX դարի սկզբներին դեռևս պահպանվում էին հայ տպագրության նախորդ դարերի ավանդները. հայերեն շատ գրքեր դեռևս հիշատակարաններ ունեին, մեծ մասամբ ծանրաբեռնված անվանաթերթեր, տողերը հաճախ շարվում էին հասպաված բառերով: Շատ դեպքերում տպագրիչը պահպանում էր նաև հրատարակչի, խմբագրի ու սրբագրիչի դերը:

Բայց արդեն XVIII դարի վերջերին կային ավելի նոր ժամանակների որոշ հատկանիշներ ունեցող տպագրիչ-հրատարակիչներ, և լույս էին ընծայվում գրքեր պարզեցված անվանաթերթերով, հակիրճ հիշատակարաններով, բառերի՝ նըվազագույնի հասցված հասպավումներով: Երբեմն գրահրատարակիչի և տպագրիչի աշխատանքների որոշ տարբերակում էր լինում: Ասպարեզ էր գալիս հայ պարբերական մամուլը, որ նույնպես նոր երևույթ էր հայկական տպարանի կյանքում: Գրքերի տպագրության ընթացքը նկատելիորեն արագացվում էր:

XIX դարի առաջին կեսին այս կարգի երևույթները սկսեցին ավելի զգալի դառնալ: Այդ հիսնամյակում հրատարակվեցին նաև հայերեն որոշ գրքեր՝ գրեթե այժմյան գրքի ձևավորումն ունեցող: Շուտով բոլորովին մոռացվեց գրքի վերջում տպագրական հիշատակարան դնելու սովորույթը. գրքի մասին հիմնական տեղեկություն տվողը դարձավ պարզեցված անվանաթերթը:

Որոշ դեպքերում էլ տպարանը կարծես առանձնանում էր տպագրվելիք բնագրերի կազմման, խմբագրման ու սրբագրման աշխատանքներից:

Եվրոպայում, Ռուսաստանում, Ամերիկայում XIX դարում, հատկապես դարի երկրորդ կեսի ընթացքում գրքերի հրատարակչությունը մեծ մասամբ անջատվում է տպարանից, որը դառնում է սոսկ պատվեր ընդունող գործարան: Հայ գրահրատարակչական գործում դա շատ ավելի դանդաղ էր կատարվում և ավելի նկատելի էր պարբերական մամուլի լույս ընծայման գործում: Շատ դեպքերում տպարանապետը դեռևս բնագրեր էր կազմում ու խմբագրում կամ իր խմբագրած պարբերականներ էր տպագրում և կամ հեղինակը շարում էր իր գիրքը: Սակայն զարգացումը գնում էր դեպի այն, որ աստիճանաբար հայոց մեջ ևս տպարանը առանձնանալով հրատարակչությունից՝ իր գրահրատարակչական վաղեմի բնույթը սկսում էր փոխել:

Հայ տպագիր գրքի պատմությունը, որ նախորդ դարերում գերազանցապես ընդգրկում էր հայ տպագրիչների աշխատանքը, այժմ սկսում է միայն իր մի մասով առնչվել դրա հետ:

XIX դարի առաջին կեսի համար բնորոշ է գրաբար-աշխարհաբար մրցությունը, որ արտահայտվեց նաև գրահրատարակչական գործում: XVI դարում նոր գրական հայերենով (աշխարհաբար) գիրք չտպագրվեց, բանի որ այդ լեզուն դեռևս չէր ձևավորվել: XVII դարում տպագրվեցին 3, իսկ XVIII-ում 20 անունից քիչ ավելի գրքեր նոր լեզվով. այլ խոսքով՝ 300 տարում տպված 1000 անուն հնատիպ գրքերի մեջ միայն մոտավորապես 25-ն են եղել նոր գրական հայերեն, մնացածը գրաբար, շատ քիչ՝ միջին հայերեն: XIX դարի առաջին կեսին տրպագրվել են մոտ 1400 անուն գրաբար և շուրջ 320 անուն

աշխարհաբար գրքեր, դրանցից էլ շուրջ 280-ը արևմտահայերեն, 40-ը՝ արևելահայերեն: Նույն դարի երկրորդ կեսին նոր գրական հայերենով տպագրված գրքերն արդեն բացարձակ գերակշռություն ունեին գրաբար գրքերի համեմատ: Պարբերական հրատարակություններն այլ պատկեր են ներկայացնում. XIX դարի առաջին կեսին մոտ 30 անուն պարբերական հրատարակություններից շուրջ 20-ը լույս են տեսել նոր գրական հայերեն (գերազանցապես արևմտահայերեն), մյուսները՝ գրաբար, աշխարհաբարյան հատվածներով: Այսինքն՝ պարբերական մամուլի աշխարհաբարականացումը ավելի արագ է ընթացել, քան գրքերինը:

XIX դարի սկզբներից լուրջ քայլեր կատարեց հայոց կրթական գործը: Հայաստանի միջնադարյան դպրոցներն ու համալսարանները այլևս չկային, առանձին վայրերում մարմրում էին նրանց մնացորդները, երեխաները մեծ մասամբ գրագետ էին դառնում քահանաների ու տիրացուների գյուղական կամ թաղային կրթարաններում: Անհրաժեշտ էին նոստամանակներին ավելի հարմար ուսումնարաններ, և այդպիսիք միմյանց հետևից սկսում են բացվել: 1790-ական թվականներին Կոստանդնուպոլսում արդեն գործում էր Մայր դպրատունը, 1808-ից՝ Մխիթարյան երկու դպրոցներ, 1838-ից՝ Ճեմարան Ս. Երուսաղեմին: 1810 թ. Աստրախանում բացվեց Աղաբաբյան դպրոցը, 1815-ից Մոսկվայում սկսեց գործել Լազարյան ճեմարանը, 1821-ին Կալկաթայում բացվեց Մարդասիրական ճեմարանը, 1824-ից Թիֆլիսում գործում էր Ներսիսյան դպրոցը: 1799 թվականին Զմյուռնիայում բացված էր Ս. Մեսրոպի անվ. վարժարանը, 1834-ից Պաղոտայում գործում էր Մխիթարյանների Մուրադյան վարժարանը, իսկ 1836-ից Վենետիկում՝ Ռաֆայելյանը և այլն: Այս ուսումնական հաստատությունները, որոնք մեծ դեր կատարեցին հայ մշակույթի գործիչներ պատրաստելու ասպարեզում, հաճախ ունեին սեփական տպարաններ կամ դասագրքեր էին պատվիրում այլ տպարաններում:

XIX դարի առաջին կեսին հայ գրքի գլխավոր կենտրոնները մնում էին Հայաստանից դուրս: Դարի երկրորդ կեսին էլ Հայաստանի որևէ բաղաբ չգարձավ հայ գրքի այնպիսի խոշոր կենտրոն, ինչպիսիք էին Վենետիկը, Վիեննան, Թիֆլիսը, Կոստանդնուպոլիսը:

Սակայն այս հարյուրամյակում տպագրությունը Հայաստանում նշանակալից քայլեր կատարեց:

Հայաստանի առաջին տպարանը վերսկսեց աշխատանքը 1818 թ., երբ Եփրեմ կաթողիկոսը տպարանի նախկին շենքի ավերակների տեղում կառուցեց նոր շենք ու սարքավորեց տպարան, ուր նույն տարին սկսեց տպագրվել ժամագիրք, հաջորդ 1819 թ.՝ Սաղմոսարան:

Ապա նորից վրա հասան խառը ժամանակներ, և էջմիածնի տպարանը վերսկսեց իր աշխատանքը միայն 1833-ին, երբ Արևելյան Հայաստանի հիմնական մասը էջմիածնի ու Երևանի հետ պարսկական տիրապետությունից անցել էր Ռուսաստանին (1828 թ.) և ստեղծվել էր Հայկական մարզ:

Արևելյան Հայաստանի մի մասը (Արցախ, Գուգարք, Գարդման և այլն) Ռուսաստանին էին միացվել դեռևս 1801 թ., մյուս մասը (Այրարատ, Նախիջևան և այլն) Ռուսաստանի կազմի մեջ մտան 1828 թ.: Դա պատմական կարևոր իրադարձություն էր: Հայերը վաղուց էին ծրագրում Ռուսաստանի օգնությամբ ազատագրվել պարսկական և թուրքական տիրապետություններից ու վերականգնել հայկական պետականությունը:

Ռուսական կայսրության կազմի մեջ մտնելով Հայաստանի արևելյան շրջանները մշակութային կյանքի մեծ հնարավորություններ ստացան: Հայաստանի այդ մասերի նոսրացած հայ բնակչությունը համալրվեց Պարսկաստանի ու Թուրքիայի տիրապետության տակ մնացող հայկական երկրամասերի հայ բնակչությամբ: Երևանում ու նրա շրջակայքում ստեղծվեց հայ բնակչության բավական հոծ զանգված:

Չնայած այս ամենին Ռուսաստանում հայ հասարակա-

կան կյանքի ու մշակույթի առավել զլխավոր կենտրոնները ձևավորվեցին հայրենի երկրից դուրս: Արևելահայոց համար այդպիսի կենտրոն դարձավ նախ Թիֆլիսը, հետո՝ Բաքուն և Մոսկվան: Էջմիածնից բացի, մշակութային զարգացում սկսեցին ապրել Հայաստանի քաղաքներից նաև Շուշին, Երեվանը, Ալեքսանդրապոլը և 1877-ին Ռուսաստանի կազմի մեջ մտած Կարսը: Էջմիածինը պահպանեց ու բազմապատկեց իր մշակութային դերը, բայց հասարակական դերով երբեք չհասավ Թիֆլիսին:

1828 թվականից հետո էլ Էջմիածնի Մայր աթոռը դեռևս լուրջ դժվարություններ ուներ: Դրանք մեծ պարտքեր էին: Կաթողիկոս Հովհաննես Կարբեցին կարողանում է վճարել դրանք և որոշ բարեկարգությունների ձեռնարկել: Նրա գործերից էր նաև Էջմիածնի տպարանի նորոգումը: 1833-ից մինչև 1835 թ. այստեղ տպագրվում է երկու գիրք՝ մի Շարահնոց («Ձայնաքաղ շարական»), որ 562 էջից բաղկացած խոշոր չափսի ու բավական հաջող տպագրություն է, ապա՝ «Գիրք հանդիսադրութեանց», որ ուսական կայսրին մեծարելու արարողություն գիրքն էր՝ կազմված դեռևս անցյալ դարում, Սիմեոն Երևանցու կողմից: Այնուհետև, հաջորդ մի քանի տարում տրպագրվում են եկեղեցական գրքեր:

1838 թ. Էջմիածնի տպարանը հիմնովին վերանորոգվում է. ձեռք են բերվում տպագրական նոր պարագաներ, տառերի նոր հայրեր ու մայրեր են պատրաստվում: Տպարանի այդ նորոգման պատճառ է լինում 1837 թ. Նիկոլայ I կայսեր այցը Էջմիածին. նա լինում է նաև տպարանում, որը ժամանակակիցների պատմելով շատ խզճով վիճակի մեջ էր: Դրանից հետո սկսվում է վերակառուցումը:

1838 թ. Էջմիածնում տպագրվում է «Հարյուր և չորս սուրբ պատմություն» ռուսերենից թարգմանված գիրքը՝ նորաձույլ տպատառերով: Տպարանը գնալով կատարելագործվում է. դրա ապացույցն է 1839—40 թթ. այնտեղ տպագրված ճաշոցը՝ բաղկացած 811 երկսյուն էջից (25×36 սմ. չափսի): Դա լավ թղթի վրա, մաքուր կատարված բարձրորակ տպագրություն է՝ նկարիչ Վլասիոս Հակոբյանի ճաշակավոր պատկեր-

ներով ու զարդերով: Այդ շրջանում օգտագործվում էին նաև XVII դարի 80-ական թվականներին Հարություն Էջմիածնեցու պատրաստած տպատախտակները. օրինակ, հիշյալ ճաշոցի անվանաթերթի համար օգտագործված է 1788 թ. Էջմիածնում տպագրված Խորհրդատետրի անվանաթերթի շրջանակի տպատախտակը:

Մինևույն 1838-ին Էջմիածնում նկարիչ և վիմագրիչ Հովհաննես Տեր-Մկրտչյանը պատրաստում է վիմագրատուն: Նա վիմագրական (լիտոգրաֆիական) արվեստը սովորել էր Մոսկվայի ու Պետերբուրգի վարպետների մոտ և հաջողությամբ վիմագրական աշխատանք էր կատարում Էջմիածնում:

1842 թ. Էջմիածնում լույս է ընծայվում տեղի միաբան Հովհ. Շահխաթունյանի «Ստորոգութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ» պատմա-աշխարհագրական նշանավոր աշխատությունը (երկհատոր) և Էջմիածնի ժառանգավորաց վարժարանի ուսուցիչ ու տեսուչ Կարապետ Շահնազարյանի «Արհեստ թուաբանութեան» արժեքավոր դասագիրքը:

1833-ից մինչև 1842 թ. Էջմիածնի տպարանից դուրս են գալիս 14 անուն գրքեր, մի տարի ընդմիջում է լինում, այնուհետև տպարանն իր աշխատանքը անընդմեջ շարունակում է ամբողջ XIX դարում և XX-ի առաջին երկու տասնամյակում: Ներսես Աշտարակեցու կաթողիկոսության օրոք (1843—1857 թթ.) Էջմիածնի տպարանի զարգացումը թույլ էր ընթանում, քանի որ կաթողիկոսի ուշադրության կենտրոնում էր Տիֆլիսում իր հիմնադրած տպարանը (Ներսիսյան դպրոցի): Դա պատճառ է դառնում այն բանի, որ Էջմիածնում գրված որոշ գրքեր հնարավոր չի լինում տեղում հրատարակել և ուղարկում են տպագրության Թիֆլիս, Մոսկվա, Շուշի:

Էջմիածնից հետո հայկական բնաշխարհում երկրորդ տրպարանը ստեղծվել է Արցախի Շուշի քաղաքում: 1820-ական թթ. այստեղ գործունեություն էին ծավալել Բաղեշից եկած մի քանի գերմանացի բողոքական քարոզիչներ: Նրանք հայերի մեջ բողոքական դավանանք տարածելու նպատակով հիմնում են դպրոց և տպարան, որի համար տառեր են ստանում Մոսկ-

վայի կազարյան ճեմարանից: Տպարանը հիմնվել է 1827 թ., մեզ հասած առաջին գիրքը 1828 թ. հրատարակություն է. կոչվում է «Պատմութիւն Սուրբ գրոց», թարգմանություն է ռուսերենից, ծավալով փոքր (44 էջ): Հաջորդ 1829 թ. տպագրվում են քրիստոնեական երկու ձեռնարկներ և Պողոս Ներսիսյանի «Համառօտութիւն հայկական քերականութեան»-ը, մյուս տարի՝ Հովսեփ Արցախեցու բառարանը՝ գրաբարից աշխարհաբար: Բոլոր այս գրքերը նախատեսված էին բողոքական զրպրոցի համար: Այնուհետև, այստեղ տպագրվում են մի շարք բողոքական բնույթի կրօնական երկեր:

Շուշիի բողոքականները սկզբից եթ սկսեցին գրքեր հրատարակել նոր գրական լեզվով՝ արևելահայերեն: Եվ դա Հայաստանի հողում նոր գրական հայերենի առաջին տպագիր քայլերն էին, որոնք նպաստ բերեցին աշխարհաբարի մշակման և ամրապնդման գործին: Այս տպարանում մինչև 1833 թ. լույս տեսան երկու տասնյակից ավելի գրքեր:

Էջմիածնի կաթողիկոսը սկզբում բարյացակամ էր վերաբերվում բողոքական քարոզիչների գործունեությանը, օգնում էր տպարանի կազմակերպմանը, բայց շուտով նրա վերաբերմունքը փոխվեց: Կովկասի կառավարչապետ բարոն Ռոզենին կաթողիկոսը բողոք ուղարկեց՝ խնդրելով Շուշիում դադարեցնել բողոքականների գործունեությունը: 1836 թ. ռուսական կառավարության հրամանով փակվեց Շուշիի բողոքական դպրոցը, իսկ տպարանը վաճառվեց Արցախի եկեղեցական առաջնորդ Բաղդասար Զալալյանին, դարձավ Արցախի հոգեվոր թեմի և դպրոցի սեփականություն:

Շուշիի այս տպարանում սկսում են տպագրվել այլ բովանդակության գրքեր: Այսպես, 1838-ին լույս են տեսնում՝ Եփրեմ Ասորու «Գիրք ազօթից»-ը և մի հորհրդատետր, երկուսն էլ գրաբար (վերջինն ըստ Հայաստանյան եկեղեցու կանոնի): 1839-ին տպագրվում է Եսայի Հասան-Զալալյանի «Պատմութիւն Աղուանից»-ը, Մ. Սալլաթյանի և Խ. Տեր-Հովհանյանցի գրաբարի քերականության ձեռնարկները:

1874 թ. այս տպարանում սկսում է հրատարակվել «Հայկական աշխարհ» աշխարհաբար թափառական ամսագիրը.

ապա տպարանը փակվում է և աշխատանքը վերսկսում 1885-ին:

80-ական թթ. սկզբում Շուշիում սկսում է գործել նաև մի ուրիշ տպարան, որ պատկանում էր Մ. Հակոբյանին: Այդտեղ 1881-ին առաջին անգամ տպագրվում է հայ նշանավոր վիպասան Բաֆֆու «Խենթը» վեպը, որի դերը հայ ազգային պայքարի զարգացման գործում հսկայական եղավ: Այնուհետև, այստեղ իրար հետևից տպագրվում են ականավոր հայ պատմաբան ու վիպասան Լեոյի (Ա. Բաբախանյան) գեղարվեստական ստեղծագործություններն ու պատմական ուսումնասիրությունները (հիշենք, որ Լեոն բնիկ շուշեցի էր): Տպագրվում են նաև ուրիշ հայ հեղինակների գործեր:

Շուշիում այս երկու տպարաններին ղուգահեռ մինչև դարավերջ գործել է նաև մի երրորդ տպարան, որ հայտնի է Տեր-Սահակյանի անունով: Այստեղ, ի թիվս այլ գրքերի, տպագրվել են մի քանի բնագիտական ու փիլիսոփայական երկեր:

Այս քաղաքում XIX դարի երկրորդ կեսին նկատելիորեն զարգացել է հայ գրավաճառությունն ու գրադարանային գործը: Շուշիում հատկապես հարուստ էին Հայոց բարեգործական ընկերության, Հասարակաց ժողովի գրադարանները, որոնք հրատարակում էին իրենց գրքային ունեցվածքի գրացուցակները: Բավական հարուստ գրադարաններ կային նաև Շուշիի հայկական մի շարք դպրոցներին կից:

* * *

Էջմիածնի տպարանի աշխատանքը, XIX դարի 40-ական թթ. թուլացումից հետո, 50-ական թթ. վերջում սկսում է աշխուժանալ: 1860-ական թթ. առաջին հինգ տարիներին այստեղ հրատարակվում է ավելի քան տասը անուն գիրք՝ բարձրորակ տպագրությամբ:

Էջմիածնի տպարանը իր զարգացման գագաթին է հասնում դարի 70-ական թթ.: 1866-ին կաթողիկոս դարձած Գևորգ IV-ը Էջմիածնում մշակութային մեծ գործունեություն է ծավալում. նախ հիմնադրում է տեղի նշանավոր ճեմարանը

(Գևորգյան), որը Մոսկվայի կազարյան ճեմարանի հետ հայոց բարձրագույն ուսումնական հաստատության դեր էր կատարում: Այնուհետև, հիմնովին բարեկարգվում է տպարանը. ձեռք են բերվում տպագրական նոր մամուլ և այլ սարքավորումներ, Մոսկվայից և Թեոդոսիայից բերվում են հայերեն տառերի նոր տեսակներ: Ստեղծվում է տպագրական-հրատարակչական հանձնաժողով:

1868 թ. էջմիածնում հիմնադրվեց «Արարատ» պատմաբանասիրական ամսագիրը, որին թղթակցել են մի շարք ակադեմիկոս հայ գիտնականներ ու բանաստեղծներ: Ամսագիրը մեծ դեր կատարեց հայ պատմագիտության, բանասիրության զարգացման գործում, անընդմեջ հրատարակվելով մինչև 1919 թ.:

Յոթնամյանական թվականներին, «Արարատի» համարների հետ, էջմիածնի տպարանը լույս է ընծայել ավելի քան 30 անուն գիրք՝ հիմնականում պատմական և բանասիրական բովանդակություն ունեցող. այդ թվում անցյալի հայ հեղինակներից Ուխտանեսի, Սիմեոն Ապարանցու և Սիմեոն Երեզլանցու երկերը, Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» (1880 թ.) և այլն:

Տպագրական արվեստի տեսակետից հուշակ հանեց մեծադիր Շարակնոցը («Չայնագրեալ Շարական») հայկական նոր նոտաներով (1875 թ.): Բովանդակության տեսակետից էջմիածնի համար նորություն էր Մ. Գալֆանյանի «Նախաշավիղ օդերևութաբանության» բնագիտական գրքի (1875 թ.) հրատարակումը:

Որոշ ժամանակ էջմիածնի տպագրական-հրատարակչական գործը ղեկավարում էին Կոստանդնուպոլսի տպագրիչ Նշան Պերպերյանը և Թիֆլիսից որպես «Արարատի» խմբագիր հրավիրված հայ ականավոր գրող Ղազարոս Աղայանը (որը միաժամանակ գրաշարական գործի մասնագետ էր):

Աստիճանաբար էջմիածնի ճեմարանում որպես դասախոսներ համախմբվում են ժամանակի լավագույն հայ գիտնականները: Գարավերջին և XX դարի սկզբներին «Արարատի» մեջ, ինչպես և առանձին գրքերով տպագրվում են ճեմարանի

ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ


ԵՐԱՆԵՂԻՈՅՆ

ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

ՅԱՃԱՆԽՊԱՏՈՒՄ ՃԱՌԻՔ

ԼՈՒՍԱՒՈՐԸ

«Գրքի մեջ եւ արտագրածի կոմ
միւ արարք եւ եւ որպէ՛ս զայն
է գործարար Աւետարանաւ ձեռքը
Կ. ՍԷ՛»



ՅԱՆԱԶԻՐԱՆՈՎ, ՀԱՄԵՆԻԱՆՈՒԹԵԼԱՍԻ

ՆՐ ՍԱՆՈՒԹԻՒԹՅԱՆՈՐՈՎ

Ը. ՅԵՐ ՄԻՆԵՆԵՆԻ.

ՏՊԱՐԱՆ

ՄԵՐ ԵՐՈՒԹԵՅ ՄԻՐՈՅ ԼՂՄԻՐՉԻՔ

1884 — ԹՅՈՒԳ

Նկ. 26. էջմիածնի հրատարակություններից

դասախոսների, այդ թվում բանասեր-պատմագետներ Գալուստ Տեր-Մկրտչյանի, Հակոբ Մանանդյանի, Կարապետ Տեր-Մկրտչյանի, Գարեգին Հովսեփյանի, լեզվաբան-գրականագետներ Մանուկ Աբեղյանի, Հրաչյա Աճառյանի, լեզվաբան Գրիգոր Ղափանցյանի, գրականագետ Արսեն Տերտերյանի և այլոց մի շարք աշխատությունները, որոնք մինչև այսօր էլ մնում են հայագիտական առաջնակարգ հրատարակություններ: Մեծ արժեք են ներկայացնում հայ պատմիչներ Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու, Ագաթանգեղոսի գործերի գիտաքննական հրատարակությունները: Այստեղ տպագրվեցին VII դարի նշանավոր հայ մաթեմատիկոս Անանիա Շիրակացու աշխատությունները, Գրիգոր Լուսավորչի «Յաճախապատում»-ը, ինչպես և մի շարք թարգմանական գրքեր, այդ թվում Կոիլոլի առակները:

Մեծ քանակ են կազմում էջմիածնի տպարանում հրատարակված դասագրքերն ու ձեռնարկները, որոնք նախատեսված էին Գևորգյան ձեռնարանի աշակերտների համար:

Դարավերջին կառուցվում է նոր և հարմար շենք՝ տպարանի ու գրաձուլարանի համար, իսկ XX դարի սկզբին Փարիզից բերվում են տպագրական նոր սարքեր ու մեքենաներ: Հայերեն տառաշարերը հարստացվում են Վրեննայից և Քիֆլիսից բերված նոր տառատեսակներով: էջմիածնի հրատարակությունները այնքան բարձրորակ են դառնում, որ 1895 թ. Պետերբուրգում կազմակերպված տպագրական գործի ցուցահանդեսին մասնակցում է նաև այս տպարանը:

էջմիածնում բացի Գրիգոր Լուսավորչի անվ. տպարանից յոթնամյանական թվականներին Ս.Գայանեի վանքին կից գործել է նաև մի այլ տպարան, որը կազմակերպել ու ղեկավարել է տեղի վանահայր, բանասեր Վահան Բաստամյանը: Այդ տրպարանի մեջ հիմնականում հրատարակվում էր «Դպրոց» մանկավարժական հանդեսը (1874—1876 թթ.):

Երևանը, որին վիճակված էր դառնալու Հայաստանի մայրաքաղաք և հայ գրքի գլխավոր կենտրոն, տպագրության քաղաք դարձավ համեմատաբար ուշ՝ 1876 թ.: Այդ տարին Զարբիա Գևորգյանը Երևանում հիմնում է մի փոքր տպարան:

Նրան ընկերանում է գրող, հրապարակախոս և հասարակական գործիչ էմին Տեր-Գրիգորյանը, որը և սկսում է իր երկերը հրատարակել այդ տպարանում: Նրա բանաստեղծությունների «Քոչնիկ» ժողովածուն Երևանում տպված առաջին գիրքն է (1876 թ.): Ապա՝ 1880 թ. տպարանն ամբողջովին մնում է է. Տեր-Գրիգորյանի տնօրինությանը և աշխատում մինչև 1910 թ.: Նույն 1880-ին այդտեղ սկսում է տպագրվել Վասակ Բաբաջանյանի «Պսակ» լրագիրը, որը Երևանի առաջին պարբերական հրատարակությունն էր:

Շուտով (1880 թ.) Բաբաջանյանը հիմնում է իր սեփական տպարանը, և «Պսակը» սկսում է լույս տեսնել այդտեղ: Նույն թվականից այդտեղ տպագրվել է սկսում նաև մի այլ պարբերական՝ բժիշկ Լ. Տիգրանյանի հիմնադրած «Առողջապահական թերթիկ»-ը: Այդ տպարանում լույս են տեսել նաև մի քանի բժշկական և բնագիտական գիտահանրամատչելի գրքույկներ:

Այնուհետև, մինչև 1920 թ. Երևանում բացվել են մի քանի այլ մասնավոր տպարաններ, այդ թվում՝ «Կուլտուրա», «Ուրարտիա», «Հերմես», «Լույս», «Հայրենիք», Այվազյանցի տպարանը: Սրանցում գլխավորապես տպագրվում էին երևանի լրագրերը՝ «Հրազդան», «Նոր ձայն», «Կոհն», «Երևանի հայտարարություններ», «Միտք», «Զանգ», «Ժողովուրդ» և այլն: Երևանի թե՛ պարբերականները և թե՛ տպարանները մեծ մասամբ կարճ կյանք էին ունենում:

1900-ական թթ. Երևանում բացի պարբերական հրատարակություններից լույս են ընծայվել նաև մի շարք գիտահանրամատչելի և ուսումնական բնույթի գրքեր ու գրքույկներ:

Երևանում սկսում է աշխուժանալ նաև հայոց գրավաճառությունն ու գրադարանային գործը: Գեոևս 1832 թ. Երևանի նորաբաց գավառական ուսումնարանում հիմնադրվել է գրադարան, որի հարստացման գործով 1843 թվականից ղեկավարել է հայ մեծ գրող ու լուսավորիչ Խաչատուր Աբովյանը՝ ուսումնարանի նոր տեսուչը: Ուսումնարանը նախ դարձել է նախագիմնագիտ, ապա 1881 թ.՝ գիմնագիտ: Նրա գրադարանն այդ ժամանակ ուներ շուրջ ութ հազար միավոր գրականություն:

Այն օգնություն էր ստանում Հայոց բարեգործական ընկերությունից և շուտով դառնում է հանրային, այսինքն՝ բաց ընդհանուր օգտագործման համար: Այս գրադարանի գրքային ունեցվածքը մասը դարձավ 1921 թ. կազմակերպված Հայաստանի Ալ. Մյասնիկյանի անվ. հանրային (հանրապետական) գրադարանի հիմնական գրականության:



Նկ. 27. Երևանում կատարված առաջին հրատարակություններից (հեղինակ և տպարանատեր Էմին Տեր-Գրիգորյան)

Երևանում մինչև 1920 թ. գործել են նաև այլ գրադարաններ, այդ թվում՝ թեմական դպրոցի, իգական գիմնազիայի, յոթ տարրական դպրոցների, պետական պալատի գրադարան-

ները, քաղաքային կենտրոնական գրադարան-ընթերցարանը:

Արևելյան Հայաստանի քաղաքներից Գյումրիում (Ալեքսանդրապոլ, այժմ՝ Լենինական) տպագրությունը սկիզբ է առել Երևանի հետ միաժամանակ՝ 1876 թ.: Առաջին տպարանն այստեղ հիմնել է Գևորգ Սանոյանը: Այդ տպարանը աշխատել է մինչև 1918 թ.: Ըույս ընծայելով մի շարք գրքեր ու պարբերականներ: Այդտեղ է տպագրվել հայ նշանավոր բանաստեղծ-գուսան Ջիվանու երկերի առաջին ժողովածուն (1882), նույնի երկրորդ հրատարակությունը (1886), ինչպես և տեղի բանաստեղծների երկերը, ռուս-հայերեն մի բառարան, երկրաչափության դասագիրք, «Շիրակ» օրացույց-պարբերականը և այլն:

1890 թ. այս քաղաքում Ա. Մալխասյանի կողմից հիմնվել է մի ուրիշ տպարան, ուր տպագրվում էին գեղարվեստական ու պատմական գրքեր, վերջիններից է՝ Արիստակես Լաստիվերցու «Պատմություն»-ը:

Այնուհետև, 1900-ական թթ. Ալեքսանդրապոլում բացվել են նաև այլ տպարաններ (Ստեփանյանցի, Հ. Ղասաբյանի և այլն): Այս քաղաքի տպարանները լույս են ընծայել տեղի պարբերականները՝ «Ախուրյան», «Ոստիկ», «Ժայռ», «Ասպարեզ», «Արագած», «Երիտասարդ», «Գավառի ձայն», «Արև», «Նոր կյանք», «Լույս» և այլն:

1890 թ. տպարան է բացվել Արևելյան Հայաստանի գյուղաքաղաքներից Նոր-Քայազետում (ներկայումս՝ Կամո), ուր տպագրվել է մի քանի գիրք, այդ թվում տեղի հայտնի գուսան Սաղաթի «Ամրահ և Սալվի» ստեղծագործությունը (1890):

XIX դարի վերջին քառորդից սկսած մինչև 1920 թ. տպարաններ են բացվել Հայոց բնաշխարհի արևելյան մասի մի շարք այլ վայրերում ևս՝ ինչպես՝ Գանձակում, Կարսում, Ախալքալաքում, Ախալցխայում, Աշտարակում: Հիշատակության արժանի է Ջանգեղուրի լեռնաստանի կենտրոն Գորիսում 1909 թ. բացված «Սասուն» տպարանը, ուր տպագրվել են «Գավառ», «Որոտան», «Մյունիք» լրագրերը: Այդ տպարանում լույս են տեսել նաև մի քանի գրքույկներ:

Տպագրութիւնը Արեւմտյան Հայաստան թափանցեց Արեւելյանի համեմատ ավելի ուշ: Ռահվիրան նշանավոր հասարակական-մշակութային գործիչ Մկրտիչ Խրիմյանն էր: Նա 1855 թ. Կոստանդնուպոլսում հիմնեց տպարան և սկսեց հրատարակել «Արծվի Վասպուրական» ամսագիրը: Ապա նա տպարանը տեղափոխեց Արեւմտյան Հայաստանի Վան քաղաքը և 1858 թ. մոտակայքի Վարագա վանքում վերսկսեց «Արծվի Վասպուրական»-ի հրատարակութիւնը: Նույն վանքում Խրիմյանը հիմնել էր գիշերօթիկ դպրոց, և տպարանում աշխատում էին այդ դպրոցի աշակերտները: Այստեղ, բացի հիշյալ ամսագրից, հրատարակվել են նաև գրքեր, մասնավորապես տեղի բանաստեղծ ու թատերագիր Տ. Ամիրջանյանի ստեղծագործութիւնները:

1863 թ. Խրիմյանը տպարան է հիմնում Հայաստանի մի այլ քաղաքում՝ Մուշում, որտեղի թեմական առաջնորդն էր նա ընտրվել: Այստեղ Ս. Կարապետ վանքում մինչև 1865 թ. լույս է ընծայվել «Լրատար Արծվիկ Տարոնո» հանդեսը, որը խմբագրել է նշանավոր գրող և բանասեր Գարեգին Սրվանձտյանը: Որոշ ընդմիջումից հետո տպարանը սկսեց աշխատել դարձյալ Վանում, իսկ 1884-ին բռնագրավվեց իշխանութիւնների կողմից:

XX դարի սկզբներին Վանում բացվել էին մի քանի այլ տպարաններ՝ Ժամկոչյանի, Բարսեղյանի, Հովնանյանի և այլն, որոնք գործել են մինչև 1915 թ.: հիմնականում տպագրելով տեղի պարբերական հրատարակութիւնները՝ «Վան-Տոսպ», «Աշխատանք», «Լույս» և այլն:

Արեւմտյան Հայաստանի Սեբաստիա քաղաքը (Փոքր Հայքում) հայկական տպագրութիւնը մուտք է գործել 1875 թ.: Անդրանիկ Վարդանյանի ջանքերով: Այստեղ տպագրվում էր «Սիվաս» շաբաթաթերթը: Հրատարակված գրքերից է մի Աղոթագիրք: Ապա այդ քաղաքում գործել է Հայկ Վարդանյանի տպարանը (1905-ից): 1910 թ. այստեղ Կ. Պարսամյանն է հիմնել մի այլ տպարան, ուր սկսել է լույս տեսնել «Հող-դար» լրագիրը: Այդտեղ տպագրվել են նաև նշանավոր հայ բանա-

ստեղծ Դանիել Վարուժանի «Տրտունջքը», Հ. Բալայանի «Համառոտ տաղաչափութիւնը» և այլն: 1913 թ. Կ. Պարսամյանը նոր տպարան է սարքավորել, ուր լույս են տեսել մի շարք գրքեր, այդ թվում՝ Հ. Սրապյանի «Ինչ է էսպերանտոն», Մ. Իսպիրյանի «Գրելու արվեստը» գրքերը և այլն: Մինչև 1915 թ. Սեբաստիայում լույս են տեսել նաև այլ պարբերական հրատարակութիւններ՝ «Ջայն սեբաստացվոց», «Անդրանիկ»:

1909 թ. հայկական տպարան է սկսում աշխատել Արեւմտյան Հայաստանի խոշորագույն կենտրոնում՝ Կարինում, որտեղ լույս է տեսել «Հառաջ» լրագիրը, ապա հրատարակվել են «Սիրտ», «Ալիք» պարբերականները:

Հայկական տպագրութիւնը ոտք դրեց նաև Արեւմտյան Հայաստանի և Հայկական Կիլիկիայի մի շարք այլ վայրեր ևս՝ Երզնկա, Եվզոկիա (Թոխաթ), Խարբերդ, Ամասիա, Մարզվան, Տրապիզոն, Այնթապ, Ադանա, Մարաշ և այլն:

XIX դարի երկրորդ կեսից սկսած Հայաստանում տպագրութիւնի աշխուժացումը զուգակցված էր կրթական գործի ծավալման հետ: Երկրի թե՛ արեւմտյան, թե՛ արեւելյան մասերում հիմնվում են հարյուրավոր թեմական, ծխական, բողոքականների և այլ կարգի դպրոցներ: Քաղաքներում ու գյուղերում երևան են գալիս բազմաթիվ գրադարաններ, ընթերցարաններ:

Միջնադարյան Հայաստանի գրադարաններից շարունակում էր գործել և հարստանալ էջմիածնի մատենադարանը: Մինչև 1920 թ. Հայաստանում բացի Երևանից ու Շուշիից հայկական բազմաթիվ գրադարաններ են գործել՝ Ալեքսանդրապոլում, Կարսում, Գորիսում, Դիլիջանում, Ղափանում, Կավարտում, Ղանթարում, Ջալալօղլիում, Նոր Բայազետում, Խարբերդում, Վանում, Կարինում և շատ ու շատ այլ քաղաքներում ու գյուղերում: Հայաստանի թե՛ արեւելյան, թե՛ արեւմտյան մասերում գրադարաններ հիմնում էին Հայոց բարեգործական և այլ ընկերութիւնները, քաղաքական կուսակցութիւնները, հայոց եկեղեցին, կաթոլիկներն ու բողոքականները, անհատներ, գյուղական համայնքները և այլն:

1915 թ. դարնանը վրա հասած մեծ աղետը աննախադեպ էր հայոց պատմութեան հազարամյակների ճանապարհներին. 1915—1922 թթ. իր հինավուրց հայրենիքում սպանդի ենթարկվեց կամ վտարվեց երկրից ամբողջ արևմտահայութունը և արևելահայերի մի մասը (Կարսի մարզ և Իզմիրի շրջան): Թուրքիայի այլ հայաբնակ վայրերում ևս հայերը ոչնչացվեցին կամ հեռացվեցին իրենց բնակավայրերից: Մոտ երկու միլիոն հայ դարձավ ցեղասպանութեան զոհ, հարյուր հազարավոր գաղթականներ ապաստանեցին տարբեր երկրներում:

Հազարավոր հայեր են տպագիր գրքեր ու ձեռագրեր ոչնչացան: Հայկական տպագրական շատ կենտրոններ իսպառվեցան: Զգալապես նվազեց հայ գրքի ընթերցողների քանակը:

Դա հայ գրքին ու հայկական տպագրութեանը երբեք հասցրված ամենածանր հարվածն էր, բայց, բնավ, ոչ մահացու: Հայ ժողովուրդը և նրա գիրն ու գրքային մշակույթը շարունակեցին ապրել ու նոր պտուղներ տալ:

ՄԵԽՅԱՐՅԱՆ ՀՐԱՏԱՐԱՅԻՆ ԹՅՈՒՆՆԵՐ

Հայ գրքի առավել զլխավոր կենտրոնները շարունակում էին մնալ Հայաստանից դուրս: XIX դարի առաջին կեսին ամենից շատ հայեր են գրքեր (ավելի քան 600 անուն-հրատարակություն) տպագրել են Վենետիկի Մխիթարյանները:

Հրատարակվեցին նախ միաբանության անդամների հեղինակած տարբեր բնագավառների վերաբերող շատ երկեր: Այնուհետև, տպագրվում էին հայ հին ու միջնադարյան հեղինակների երկերը՝ հատուկ մատենաշարերով. կար «Ընտիր մատենագիրք» շարքը, որ փոքրագիր, հրատարիչ ձևավորված գրքուկներից էր բաղկացած և նախատեսված էր ընթերցողների լայն շրջանի համար: Նպատակն էր անցյալի հայ գրավոր մշակույթը մատչելի դարձնել ժողովրդին: Կար նաև «Մատենագրութիւնք նախնեաց» մատենաշարը, որ ավելի շատ նախատեսված էր բանասերների համար. գրքերը մեծադիր



Նկ. 28. Նղիշի «Վասն պատերազմի Վարդանանց» երկի վենետիկյան հրատարակություններից մեկը (անվանաթերթ)

էին: Այս երկու մատենաշարով լույս տեսան հայ հին ու միջնադարյան պատմիչների, փիլիսոփաների, բանաստեղծների, բժիշկների՝ Ազաթանգեղոսի, Կորյունի, Խորենացու, Եղիշեի, Եզնիկի, Դավիթ Անհաղթի, Նարեկացու, Լաստիվերցու, Շնորհալու, Գրիգոր Տղայի, Մխիթար Հերացու և այլոց երկերը: Դասական բնագրեր էին հրատարակվում նաև Վենետիկի Մխիթարյանների «Սոփերք հայկականք» մատենաշարով:

Մխիթարյանները թարգմանում ու հրատարակում էին նաև համաշխարհային դասականների գործերը, ինչպես՝ Եզոպոսի, Հոմերոսի, Վիրգիլիոսի, Միլտոնի, Գ. ԴեՖոյի և շատ ուրիշների ստեղծագործությունները:

Մեծ էր հրատարակվող դասագրքերի քանակը, որոնց մի մասն աշխարհաբար էր: Վենետիկի Մխիթարյաններն իրենց մի քանի դպրոցների համար լույս էին ընծայում այբբենարաններ, ինչպես և քերականության, հայոց և ընդհանուր պատմության, բնագիտության, կենդանաբանության, թվաբանության, երկրաչափության, աշխարհագրության և այլ առարկաների դասագրքեր, քարտեզներ, ուրիշ ուսումնական նյութեր:

«Մատենադարան մանկանց» մատենաշարով լույս տեսան մանուկներին հասցեագրված շատ գրքեր ու գրքույկներ, հատկապես Քր. Շմիդտի՝ դասական հեղինակներից կատարած հայտնի վերապատումների թարգմանությունները: Դասագրքերի և մանկական գրականության հրատարակման գործում մեծ էր նշանավոր մանկավարժ, պատմաբան Մինաս Բժշկյանի (1777—1851 թթ.) դերը:

1900 թ. Մխիթարյանները լույս ընծայեցին «Որբունի» բացառիկը, իսկ 1901-ից այն շարունակվեց որպես «Գեղունի» պատկերազարդ հանդես: Այստեղ հրատարակվում էին հայկական ճարտարապետության հուշարձանների պատկերներ, անվանի գեղանկարիչների նկարներ: «Գեղունին» բարձրաճաշակ հանդես էր:

Հրատարակվեցին նաև բժշկական, լեզվաբանական գրքեր, բառարաններ, օրացույցներ և այլն:

Լեզվաբանական աշխատություններից հատկապես կու-

րևոր էր Գաբրիել Ավետիքյանի գրաբարի «Քերականութիւն»-ը, որը գիտական առավել ճշգրտությամբ ներկայացրեց հին հայերենի քերականական կառուցվածքը և բարձր գնահատվեց ոչ միայն հայ գիտնականների, այլև եվրոպացի արևելագետների կողմից: Շատ ավելի կարևոր էր Գ. Ավետիքյանի, Խ. Սյուրմեկյանի, Մ. Ավգերյանի կազմած երկհատոր «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բացատրական բառարանը, կամ ինչպես սովորաբար անվանում են՝ Հայկազյան բառարանը (1836, 1837 թթ.), որը դարձավ հետագա հայ բառարանագրությունների հիմքը և իր բացառիկ արժեքով մինչև այժմ էլ մնում է չգերազանցված: Այս բառարանը կազմվել է ձեռագրային և տպագիր հարյուրավոր բնագրերի բառամթերքի հավաքմամբ: Նյութը մշակվել է ժամանակի եվրոպական բառարանագրության ամենաբարձր մակարդակով: Այս բարդ բառարանի տպագրությունը նույնպես առաջնակարգ է:

Չգերազանցված է մնում նաև Աստվածաշնչի սահակմեսրոպյան թարգմանության 1805 թ. կատարված հրատարակությունը՝ Հովհաննես Զոհրապյանի առաջնակարգ աշխատասիրությամբ: Հայ մշակույթի և գիտության զարգացման համար արժեքավոր էին նաև Վենետիկի Մխիթարյաններից Ս. Սոմալյանի, Ղ. Ինճիճյանի, Ս. Ազոնցի, Մ. Զախչախյանի, Մ. Ավգերյանի, Հ. Ավգերյանի, Ե. Թովմաճյանի, Է. Հյուրմյուզյանի, Գ. Փեշտրմալճյանի և այլոց երկերի հրատարակությունները:

Վենետիկի Ս. Ղազարում մտավոր-մշակութային կյանքի զարգացման գործում հաճախ նկատելի են եղել միաբանության ղեկավարների նախաձեռնումները, ինչպես և նրանց անձնական հակումները: Օրինակ, Ս. Ազոնցի ղեկավարության տարիներին (1799—1824) կարևոր տեղ էր հատկացվում կրոնական, աստվածաբանական երկերի հրատարակությանը, Ս. Սոմալյանի օրոք (1824—1846) ուշադրության կենտրոնում էր հայ հին ու միջնադարյան հեղինակների երկերի հրատարակումը, Գ. Հյուրմյուզյանի ժամանակ (1846—1876) մեծ տեղ տրվեց գեղարվեստական գրականության հրատարակությանը: Ինքը՝ Գ. Հյուրմյուզյանը բանաստեղծ էր, նա լույս էր ընծա-

յում նաև իր ստեղծագործությունները, ինչպես և իր կատարած թարգմանությունները Կոռնելից, Ռասինից և ուրիշներից: Այդ տարիներին հրատարակվեցին հայ դասականության (կլասիցիզմի) ականավոր ներկայացուցիչ Արսեն Բագրատունու ստեղծագործությունները՝ գլխավորապես «Հայկ Դյուցազն» վիպերգը (1858), ինչպես և նրա թարգմանությունները (Հոմերոսի «Իլիականը», Ջ. Միլտոնի «Դրախտ կորուսյալը» և այլն): Բագրատունին այն հեղինակներից էր, որոնք գեռևս հույս ունեին գրաբարը դարձնել հայերի գրական-խոսակցական լեզուն, ուստի և նա իր երկերը գրում էր ու թարգմանություններն անում հին գրական լեզվով: Անշուշտ, հին լեզուն վերականգնելու այդ ճիգերն ապարդյուն անցան:


Փոքր-ինչ ավելի ուշ, ի հակադրություն Բագրատունու, Վենետիկի Մխիթարյաններից Արսեն Ղազիկյանը Հոմերոսի, Սոփոկլեսի, Դանթեի, Լեոպարդիի և եվրոպական այլ հեղինակների երկերը սկսեց թարգմանել նոր լեզվով և, բնականաբար, շատ ավելի մեծ հաջողություն ունեցավ:

1850-ական թվականներից սկսած Ս. Ղազարում լույս էին տեսնում մեծ բանաստեղծ ու պատմաբան-աշխարհագրագետ Ղևոնդ Ալիշանի երկերը: «Նուագը» խորագիրը կրող նրա բանաստեղծությունների ժողովածուները (1881—1886 թթ.) շերտորեն ընդունվեցին հայ հասարակայնության կողմից: Ալիշանը զգալի նպաստ բերեց հայ գրականության արևմտյան հատվածի աշխարհաբարացման գործում:

Զուգահեռաբար հրատարակվում էին Ղ. Ալիշանի հայագիտական պատմա-աշխարհագրական կոթողային աշխատությունները՝ «Շիրակ», «Սիսուան», «Սիսական», «Այրարատ», «Հայապատում» և շատ ուրիշներ:

1860—80-ական թթ. հրատարակվեցին ականավոր գրականագետ Գարեգին Զարբանալյանի հայ գրականության պատմությանը նվիրված մեծարժեք աշխատությունները:

Վենետիկի տպարանատպեռներից կարևոր դեր է կատարել Հովհաննես Սորդուճյանը, որի տնօրինության ժամանակ հրատարակվեց նոր հայկազյան բառարանը, ինչպես և Մ. Զախչախյանի Հայ-իտալերեն բառարանը (1837): Վերջինս կարևոր



Նկ. 29. XIX դարի Մխիթարյան հրատարակություններից՝ Ղ. Ալիշանի «Այրարատ»-ը (անվանաթերթ). Վենետիկ, 1890 թ.

դեր խաղաց հայերեն նոր բառեր ստեղծելու ավանդների մշակման գործում: Մխիթարյան տպարանում երկար ժամանակ (1836—1860 թթ.), որպես գրաշար ու տպագրիչ է աշխատել ականավոր գիտնական Անտոն Քաջունին և մեծ վաստակ ունի տպարանի կատարելագործման ասպարեզում:

Ավելի ուշ (1891—1893 թթ.) տպագրվեց Ա. Քաջունու «Բառգիրք արվեստից և գիտությունից և գեղեցիկ դպրությանց» հանրագիտարանը: Կարևոր էին նաև միաբանությունից ալլ անդամների՝ Ս. Էփրեկյանի «Բնաշխարհիկ բառարանի» տպագրությունը (1900—1905 թթ.), ինչպես և Վ. Հացունու, Բ. Սարգիսյանի, Մ. Ճանաշյանի և շատ ուրիշների հայագիտական աշխատությունների հրատարակումը:

Վենետիկի Մխիթարյանները հրատարակում էին նաև միաբանության անդամ շահագիտացող հայագետների, ինչպես և հայ բանաստեղծների, արվեստագետների շատ երկեր:

XIX դարի սկզբից մինչև 1915 թ. Վենետիկի Մխիթարյանները լույս են ընծայել մեկ տասնյակ անունից ավելի ամսագրեր՝ բացի վերոհիշյալ «Տարեգրություն»-ից, նաև «Եղանակ Բյուզանդյան», «Հիշատակարան», «Գիտակ Բյուզանդյան» և այլն: 1843 թ. մշակութային ականավոր գործիչ Գաբրիել Այվազյանի կողմից հիմնադրված «Բազմավեպը», որ լույս է տեսնում մինչև այսօր, եղավ հայագիտական շատ բեղմնավոր հանդես և բոլոր հայ պարբերական հրատարակություններից ամենաերկարակյացը: «Բազմավեպը» իր գոյության մոտ 150 տարվա ընթացքում հրատարակել է տարբեր բնագավառների վերաբերյալ հազարավոր նյութեր: Մինչև 1857 թ. նրանում տպագրվում էին կրոնական, բնագիտական, պատմական ու այլ գիտությունների վերաբերող հանրամատչելի հոդվածներ: 1858-ից «Բազմավեպում» ավելի շատ էին հրատարակվում գեղարվեստական երկեր՝ հայ և այլազգի հեղինակների, 1872-ից այն դարձել է գերազանցապես հայագիտական ամսագիր: «Բազմավեպի» պարբերականությունը ևս փոփոխվել է. եղել է երկշաբաթյան, ամենամսյա հանդես և այլն: «Բազմավեպին» թղթակցել են նշանավոր շատ գիտնականներ, գրողներ, արվեստագետներ հայ և եվրոպացի, որի շնորհիվ

այդ հանդեսը դարձավ աշխարհի հայագիտական առաջնակարգ հրատարակություններից մեկը: Տպագրվել են մի քանի մեծահատոր, բացառիկ համարներ՝ նվիրված Ա. Դանթեին (1921), Զ. Բայրոնին (1924), Մխիթարյան Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի հարյուրամյակին (1936), Մխիթար Սեբաստացուն (1950, 1977) և այլն: Ներկայումս «Բազմավեպը» հրատարակվում է տարեկան 2 կամ 3 համարով, նրա՝ որպես հայագիտական առաջնակարգ հանդեսի նշանակությունը, նըվազել է:

Մխիթարյանների մյուս ճյուղը, 1811 թվականից հաստատվելով Վիեննայում, նույնպես ծավալեց գրահրատարակչական գործունեություն. մինչև XIX դարի կեսերը այստեղ հրատարակվել են շուրջ 160 անուն հայերեն գրքեր, իսկ մինչև դարավերջ՝ շուրջ 500 անուն: Շարունակաբար տպարանը կատարելագործվել է, և ավելի է լայնացել նրա գրահրատարակչական հնարավորությունը:

Վիեննայի Մխիթարյանները հրատարակել են հայագիտական արժեքավոր շատ գրքեր, ամենից առաջ միաբանությունից անդամ-հայագետներին: Նշանավոր եղավ Արսեն Այտընյանը (1825—1902) իր մի շարք աշխատություններով, մանավանդ «Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի» ուսումնասիրությամբ, որը նոր գրական հայերենի առաջին խստորեն գիտական, մանրակրկիտ ուսումնասիրությունն է: Այտընյանի աշակերտ Հակոբոս Տաշյանը (1866—1933) մեծ համարում ստացավ եվրոպական արևելագետների շրջանում: Նա 45 տարի անընդմեջ զբաղվել է հայոց լեզվի, պատմության, գրականության, հայ ձեռագրերի ուսումնասիրությամբ, գրել և հրատարակել է բազմաթիվ աշխատություններ, որոնց արժեքը պահպանվել է մինչև այժմ: Հիշենք մի քանիսը. «Արշակունի դրամներ» (1917), «Ուսումնական հայերեն լեզվի» (1920), «Հին Հայաստանի արևմտյան սահմանը» (1948), «Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենագրարանին Մխիթարյացի Վիեննա» (1895): Այս վերջինը հայ հին ձեռագրերի լավագույն, օրինակելի մատենագիտությունն է և իր վերլուծական ծանոթագրություններով առաջնա-

կարգ ուսումնասիրություն: Այդ երկի բարդ տպագրությունը Վիեննայի Մխիթարյան տպարանը իրականացրել է փայլուն կերպով:

Հրատարակվեցին նաև Վիեննայի Մխիթարյան ականավոր գիտնականներից Ա. Գարագաշյանի, Հ. Գաթրըճյանի, Գ. Մենեվիշյանի, Գ. Գոլբրիկյանի, Գ. Գալեմբյարյանի, Հ. Քոսյանի, Թ. Կետիկյանի, Ա. Վարդանյանի, Ս. Կոզյանի, Հ. Մատիկյանի, Հ. Ոսկյանի, Պ. Տեր-Պողոսյանի և ուրիշների հայագիտական ուսումնասիրությունները: Հատկապես ճանաչում գտավ ներսես Ակինյանը (1883—1963), որը հեղինակ է մոտ 500 աշխատությունների՝ նվիրված հայագիտության ամենատարբեր բնագավառներին: Ն. Ակինյանը 1909—1963 թթ. եղել է Վիեննայի Մխիթարյան գրադարանի տնօրենը, նույն ժամանակամիջոցում նաև «Հանդես ամսօրյա» պարբերականի խմբագիրը (ընդմիջումներով):

Վիեննայի Մխիթարյանների բառարանային հրատարակություններից հիշատակելի են երկլեզվյան՝ հայ-թուրքերեն (Հ. Պողանճյանի՝ 1838, 1858 թթ., Ե. Զազրճյանի՝ 1850 թ.), հայ-գերմաներեն (Ս. Կոյլավի՝ 1889 թ.), ինչպես և երեքլեզվյան ֆրանսերեն-հայերեն-թուրքերեն (Ս. Էմինյանի՝ 1853, 1871 թթ.), քառլեզվյան՝ իտալերեն-ֆրանսերեն-հայերեն-թուրքերեն (Փ. Ճամաճյանի՝ 1846) և հունարեն-իտալերեն-հայերեն-թուրքերեն (Ա. և Ս. Ապարյանների՝ 1848 թ.) բառարանները:

Մխիթարյանները հրատարակեցին նաև նշանավոր եվրոպացի հայագետներ Հ. Գելցերի, Հ. Կարստի, Ա. Կարիերի, Ֆ. Կոնիբերի, Հ. Հյուբշմանի, Ն. Մառի, Հ. Մարկվարտի, Հ. Պետերսընի և շատ ուրիշների աշխատությունները, ինչպես և միաբանության անդամ չհանդիսացող հայ ականավոր բանասերներ՝ Ն. Աղոնցի, Հ. Աճառյանի, Ս. Մալխասյանցի, Հ. Մանանդյանի երկերը: Լույս ընծայեցին հայ և այլագրի (թարգմանաբար) շատ դասականների ստեղծագործություններ, այդ թվում Քսենոֆոնի, Յիցերոնի, Կորյունի, Շեքսպիրի, Լաֆոնտենի, Րաֆֆու, Իսահակյանի, Տագորի և այլոց երկերը:

Վիեննայի Մխիթարյանները ևս իրենց մի քանի դպրոցների համար հրատարակել են շատ դասագրքեր՝ գիտության տարբեր բնագավառների վերաբերյալ, ինչպես և մանուկների համար գրքեր, մասնավորապես «Կրթական և դրոսայի տետրակներ» մատենաշարով:

Մխիթարյան տպարանը Վիեննայում ևս շարունակում էր ընդունել եվրոպական լեզուներով գրքերի պատվերներ:

Վիեննայի Մխիթարյանները 1819 թ. լույս ընծայեցին «Մանոթությունք վաճառականագիտության», իսկ 1847—1863 թթ. «Եվրոպա» պարբերականները: 1887-ից մինչև այժմ լույս է տեսնում նրանց «Հանդես ամսօրյա» հայագիտական ամսագիրը: Պարբերականությունը եղել է տարբեր, շատ տարիներ՝ ամենամսյա: Ներկայումս լույս է տեսնում անկանոն՝ տարեկան մի քանի համար. նրա վաղեմի մեծ նշանակությունն էլ կարծես նվազում է: «Հանդես ամսօրյան» իր գոյության ավելի քան 90 տարիների ընթացքում հրատարակել է հայ հին և միջնադարյան հեղինակների բնագրեր, աշխարհի խոշորագույն հայագետների մեծաթիվը շատ աշխատություններ: Դրանց զգալի մասը (շուրջ 300 անուն) հետո Մխիթարյանները լույս էին ընծայում առանձին գրքերով՝ «Ազգային մատենագրան» շարքով:

Թե՛ Վենետիկի, թե՛ Վիեննայի Մխիթարյանները նշանակալի գեր են կատարել նաև հայ գրքի հավաքման, պահպանման ու մատենագիտական գրանցման գործում: Ս. Ղազարի և Վիեննայի հայոց գրադարանները՝ հայ գրագիր մատյանների, հնատիպերի ու նոր հրատարակությունների, ինչպես և պարբերական մամուլի բացառիկ արժեք ունեցող պահպանող են և բազմիցս օգտագործվել ու օգտագործվում են եվրոպացի, ամերիկացի, հայ ուսումնասիրող գիտնականների կողմից:

Վենետիկի Մխիթարյաններից Գ. Զարհանալյանի «Հայկական մատենագիտությունը» (1883 թ.) և Ա. Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտությունը» (1909—12) հայ տպագիր գիրքը ներկայացնող ամենակարևոր ուղեցույցները եղան:

Արդեն XVIII դարում Կոստանդնուպոլիսը արևմտահայերի հասարակական-մշակութային կենտրոնն էր: Նրա այդ դերն ավելի մեծացավ XIX դարում և պահպանվեց մինչև Հայոց եղեռնը (1915 թ.):

Կոստանդնուպոլիսը XIX դարում՝ մեկ հարյուրամյակի ընթացքում, մինչև հաջորդ դարի 15 թվականը ունեցավ 130-ից ավելի հայկական տպարաններ: Այնտեղ հայ գրահրատարակչական գործը անընդհատ վերելք ապրեց մինչև եղեռնի օրերը, որից հետո այս քաղաքում սկսվեց հայ գրահրատարակչության ու տպագրության անկում:

XIX դարի առաջին կեսին շարունակում էր գործել Արապյանների տպարանը (սկզբնավորված 1766-ին), որ փակվեց 1850-ական թվականների երկրորդ կեսին: Պողոս Արապյանը իր երեք որդիների հետ երկար ժամանակ պոլսահայ տպագրության կենտրոնական դեմքն էր: Հետո հոչակվեց Խաչիկ Արապյանը որպես օսմանյան կայսրության ամենահմուտ գրաձուլիչ և տպագրիչ: Արապյանները տպագրել են ժամագրքեր, սաղմոսարաններ, տաղարաններ, հայ հին ու միջնադարյան մատենագիրների երկեր, դասագրքեր, բժշկարաններ, գեղարվեստական գրքեր, բառարաններ, Կոստանդնուպոլսի «Սուրհանդակ Բյուզանդյան» և նշանավոր հրատարակատու Լ. Սվաճյանի «Մեղու» պարբերականները և այլն: Պ. Արապյանը հրատարակեց նշանավոր լեզվաբան, մանկավարժ Գր. Փեշտրեմալճյանի երկերը, այդ թվում նրա նշանավոր «Բառագիրք հայկազեան լեզուի»-ն (1844—1846 թթ.):

Կոստանդնուպոլսի XIX դարի նշանավոր տպագրիչներից էր նաև Հովհ. Մյուհենտիսյանը (1810—1891 թթ.), որ հրուշակվեց որպես բազմահմուտ գրաձուլիչ և տպագրիչ, ինչպես և հայկական ու արաբա-թուրքական նոր բնույթի տպատուներ ստեղծող (անվանվեց թուրքական Գուտենբերգ): Կոստանդնուպոլսի նրա երեք կատարելագործված տպարաններում լույս են տեսել գեղարվեստական, լեզվաբանական, բարոյագիտական, փիլիսոփայական, բնագիտական, մանկավարժական

գրքեր, դասագրքեր, օրացույցներ, տաղարաններ, Շարակնոց, Մաշտոց, Գրիգոր Նարեկացու «Մատյանը» և այլն: 1850—60-ական թթ. Մյուհենտիսյանը տպագրեց Կոստանդնուպոլսի մի շարք հայերեն թերթեր ու հանդեսներ, այդ թրվում՝ «Հայաստան», «Բուրաստան», «Նոյյան աղավնի», «Աստղիկ արևելյան», «Սեր», «Մասիս», «Ժամանակ», «Զեփյուռ հայրենյաց», Արապյաններից հետո՝ «Մեղուն» և այլն:

Կոստանդնուպոլսի տպագրիչ-հրատարակիչներից բեղմնավոր եղավ նաև Ճանիկ Արամյանը. նա տպագրական գործը սովորեց Փարիզում և այնտեղ հիմնեց իր տպարանը, որը 1862 թ. փոխադրեց նախ Մարսել, ապա՝ Կոստանդնուպոլիս (1864): Այդ ժամանակաշրջանում Կոստանդնուպոլսի մյուս նշանավոր տպարանատեր-հրատարակիչներից էին՝ Կ. Ութուճյանը (Մասիս) պարբերականի խմբագիրը, Հովհաննես Չամուռճյանը, Թուրեն Քյուրքչյանը, Հովսեփ Գավաֆյանը, Գևորգ Զարգարյանը, Նզիա Տնտեսյանը, Գարեգին Պաղտատյանը, Միքայել Սարըյանը, Արամ Աշճյանը, Սերվիլենը, Պերպերյանները, Լ. Թոլայանը, Հակոբ և Վահան Մատթեսոյանները, Ներսես Արամյանը, Բյուզանդ Քեղյանը, Վահրամ և Հրաչյա Տեր-Ներսեսյանները, Օնիկ Արզումանը, Հովնան Փալազաշյանը, Տիգրան Տոգրամաճյանը, Վաղինակ Բյուրատը և շատ ուրիշներ: Կային նաև «Գուտենբերգ», «Շանթ», «Արաքս» և այսպիսի անուններով հայկական այլ տպարաններ:

Կոստանդնուպոլսի հայկական տպարաններում XIX դարի սկզբից մինչև 1920 թ. հազարավոր անուն հայերեն գրքեր հրատարակվեցին: Նրանցում էին լույս տեսնում արևմտահայ դասականներ՝ Մ. Պեշիկթաշլյանի, Պ. Դուրյանի, Սիամանթոյի և այլոց երկերը՝ թե՛ պարբերական մամուլում, թե՛ առանձին գրքերով: Այստեղ հրատարակվեցին արևմտաեվրոպական, ռուսական, ամերիկյան հեղինակների շատ երկեր: Նույն ժամանակամիջոցում Կոստանդնուպոլսում լույս են տեսել ավելի քան 350 անուն հայերեն պարբերականներ:

Կոստանդնուպոլսում հայ գրավաճառուիցնը XIX դարի սկզբներից նոր փուլ թևակոխեց. հայոց մեջ տարածված շրջիկ գրավաճառությունը XIX դարի սկզբին այստեղ առաջին

անգամ փոխարինեց գրախանութիւնը: Դարի առաջին կեսին Կոստանդնուպոլսում գրավաճառութեամբ հռչակվեց Քրիթապլի Մարգարը: Նա հայ գրքի առևտուր էր անում ինչպես Հայաստանի, այնպես էլ այլ երկրների հայաբնակ վայրերի հետ: Էջմիածին, Շուշի, Երևան, Վենետիկ, Վիեննա, Զմյուռնիա, Երուսաղեմ, Պետերբուրգ, Աստրախան, Ն. Նախիջևան, Ն: Զուղա, Կալկաթա, Մադրաս, — ահա այն քաղաքների ոչ լրիվ ցանկը, ուր հասնում էին Մարգարի առաքած հայերեն գրքերը և որտեղից նա գրքեր էր ստանում: Մարգարի ծառայութեանը օգտվել են ժամանակի հայոց ուսումնական հաստատութիւնները և շատ անհատներ, այդ թվում Դանիել և Եփրեմ կաթողիկոսները, բանասերներ Զ. Շահխաթունյանը, Զ. Շահան Զրպետը, բանաստեղծ և ուսուցչապետ Հարություն Ալամդարյանը, նշանավոր գործիչներ Մ. Արղուժյանը, Ռ. Մաղաթյանը, Բ. Բեհբությանը, Զ. Լազարյանը, Գեորգ Արծրունին և շատ ու շատ ուրիշներ:

Այնուհետև, Կոստանդնուպոլսում բացվել և գործել են ուրիշ շատ գրատներ, ինչպես, օրինակ, Պաղտասար Սրապյանի, Պապա Դանիելի, Հովսեփ Գավաֆյանի, Պողոս Պալենցի, Սմբատ Դավթյանի, Պ. Պաղտատլյանի, Աշխանի, Հովհ. Գրլըճյանի, Ա. Յաղըճյանի, «Արշալույս», «Նփրատ», «Գարուն», «Արամազդ», «Արծիվ» և շատ ուրիշներ:

Թուրքիայում այս ժամանակամիջոցում հայ գրքի մյուս կարևոր կենտրոնն էր Զմյուռնիան, որտեղ հրատարակվեցին շուրջ 50 հայերեն պարբերականներ և հարյուրավոր անուն գրքեր:

XIX դարի առաջին կեսին այստեղ տպագրական գործունեութիւն ծավալեց Ամերիկյան մարդասիրական ընկերութիւնը, որ նախապես հայերեն գրքերի հրատարակութիւն էր սկսել Մալթա կղզում: Այդ տպարան-հրատարակչութիւնը բողոքական քարոզիչներին էր և լույս էր ընծայում քրիստոնեական աշխարհաբար գրքեր: Ամենից ավելի հայտնի էր նախ Հոման Հալլոկի, ապա Գուլիելմ Գրիֆիտի անուններով: 1830—1850-ական թթ. այդ տպարանում լույս են տեսել շուրջ 150 անուն հայերեն գրքեր, այդ թվում առաջին

անգամ գրական արևելահայերեն Սաղմոսարան (1843 թ.), և առաջին աշխարհաբար Աստվածաշունչը (արևմտահայերեն) ամբողջութեամբ (1847—1850 թթ.):

Այնուհետև, Զմյուռնիայում գործել է Ստեփանոս Պապոյանի տպարանը, որտեղ սկսեց լույս տեսնել հայտնի «Արշալույս արարատյան» պարբերականը: 1840—1900-ական թթ. նշանավոր էին նաև Մեսրոպյան վարժարանի, Արաղածունյաց, Դեղեյան եղբայրների, Գր. Մսերյանի, Մատթեոս Մամուրյանի, Բարսեղ Քեշիշյանի տպարան-հրատարակչութիւնները: Մինչև 1920 թ. այս քաղաքում գործել են շուրջ 20 հայկական տպարաններ:

Հայկական տպագրութիւնը թափանցեց նաև Թուրքիայի հայաբնակ այլ քաղաքներ (Հայաստանից դատ), գլխավորապես Կոստանդնուպոլսի մոտակա հարավում՝ Պարտիզակ, Նիկոմիդիա, ապա նաև այլ հայաշատ վայրեր՝ Ադաբազար, Բրուսա, Ռոզոստո, Սամսոն, Կոնյա և այլն:

Օսմանյան կայսրութեան տիրապետութեան տակ գտնվող Երուսաղեմ քաղաքը հայկական տպագրութեան կենտրոն դարձավ 1832 թվականից: Այդ ժամանակ տեղի Ս. Հակոբյանց վանքին կից հիմնված հայկական տպարանը ծաղկել սկսեց 1860—70-ական թվականներից: Տպարանը հրատարակում էր հիմնականում կրոնական-եկեղեցական գրքեր, իսկ այնուհետև բանասիրական աշխատութիւններ, հայ մատենագիրների երկեր, պատմական, քերականական, աշխարհագրական ուսումնասիրութիւններ, դասագրքեր, օրացույցներ և այլն: 1866-ից մինչև այժմ այստեղ տպագրվում է «Սիոն» ամսագիրը: Նշանավոր եղավ 1895 թ. Թ. Աստվածատրյանի «Համաբարբառ Հին և Նոր կտակարանաց» մեծածավալ աշխատութեան հրատարակութիւնը:

Ռ Ռ Ռ Ս Ա Ս Ս Ա Ն

Ռուսաստանում Աստրախանի Արղուժյան տպարանը գործեց մինչև 1837 թ. և XIX դարի այդ տարիներին երկու տասնյակից քիչ պակաս գրքեր հրատարակեց: Մինչև այս տպարան

րանի փակվելը՝ 1810 թ. աստրախանցի տպագրիչ Հովսեփ Հովհաննիսյանը հայկական նոր տպարան է հիմնում Պետերբուրգում: Այդտեղ լույս ընծայված մեկ տասնյակից քիչ ավել գրքերի մեջ նկատելի են Ռուսաստանի աստվածաշնչային ընկերության հայերեն հրատարակությունները, այդ թվում մի Աստվածաշունչ (1817 թ.):

Այս տպարանի սարքավորումը 1828—1829 թթ. տեղափոխվեց Մոսկվա և օդտաղործվեց կազարյան ճեմարանի տպարանում:

XIX դարի քսանական թվականներից Մոսկվայում սկսեց աշխուժանալ հայոց հասարակական և մշակութային կյանքը, դրան նպաստեց 1815-ին այստեղ բացված կազարյան արևելագիտական ճեմարանը, որն ավելի քան մեկ հարյուրամյակ կրթել ու դաստիարակել է բազմաթիվ հայ, ռուս և այլ ազգության պատկանող պատանիներ ու երիտասարդներ:

1829 թ. կազարյան ճեմարանում ստեղծվեց տպարան, որի համար, բացի Պետերբուրգի վերոհիշյալ տպարանի սարքերից, տառերի մայրեր բերվեցին նաև արտասահմանից: Ստեղծվեց գրաձուլարան, որտեղից հայերեն տառեր էին մատակարարվում նաև այլ վայրերում գործող հայկական տպարաններին:

Բացի հայերեն հրատարակություններից, կազարյան ճեմարանի տպարանը լույս էր ընծայում նաև ռուսերեն ու ֆրանսերեն գրքեր:

Տպարանը իր բեղմնավոր գործունեությունը շարունակեց մինչև դարավերջ: Հայ մատենագիրներից այստեղ տպագրվեցին Մխիթար Այրիվանեցու, Վարդան Արևելցու, Կիրակոս Գանձակեցու և ուրիշների գործերը, եղիշերի նշանավոր երկի աշխարհաբար առաջին թարգմանությունը՝ «Պատմություն Վարդանի և Հայոց պատերազմի համար» վերնագրով (1863 թ.) և այլն: Այստեղ են տպագրվել կազարյան ճեմարանի դասախոսներ, ականավոր գիտնականներ Մկրտիչ էմինի, Գրիգոր Խալաթյանի և այլոց աշխատությունները, Ա. Խուզարաշյանի Հայ-ռուսերեն մեծ բառարանը, բանաստեղծ Ս. Շահագիրի նշանավոր «Լեոնի վիշտը» վիպերգը, ինչպես նաև «Հյուս-

սիսափայլ», «Համբավաբեր Ռուսիո», «Ճոաքաղ» հայերեն պարբերականները:

Հայ հասարակական-մշակութային կյանքում նշանակալից դեր կատարեց «Հյուսիսափայլ» ամսագիրը (1858—1864), որի խմբագիրն էր ականավոր գրականագետ ու հրապարակախոս Ստեփանոս Նազարյանը, իսկ գլխավոր աշխատակիցն ու ամսագրին ոգի տվողը՝ հայ մեծ մտածող, ազատության անկուն մարտիկ ու բանաստեղծ Միքայել Նալբանդյանը:

XIX դարի 20-ական թվականներից արևելահայերի հասարակական-մշակութային կյանքի գլխավոր կենտրոնն է սկսում դառնալ Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսը, որը 1801 թ. անցել էր Ռուսաստանի տիրապետության տակ: Այդ դերը ստանձնելուն նպաստեց 1824 թ. այս քաղաքում ներսիսյան դպրոցի բացումը: Հիմնադիրն էր Ներսես Աշտարակեցին, որն այդ ժամանակ Վրաստանի հայոց թեմի առաջնորդն էր: Ներսիսյան դպրոցը իր բացման օրից դարձավ կովկասահայության գլխավոր ուսումնական հաստատությունը և գոյությունը պահպանեց մոտ 100 տարի: Նրա սաներից շատերը՝ սկսած Խ. Աբովյանից, Ս. Նազարյանից մինչև Հ. Թումանյան, դարձան հայ գրականության, հասարակական կյանքի նշանավոր դեմքեր: Այս դպրոցին կից բացված տպարանի դերը նույնպես կարևոր եղավ Կովկասում հայկական տպագրության զարգացման համար:

Համաձայն Ամստերդամի քաղաքապետարանի դիվանական մի քանի փաստաթղթերի, Թիֆլիսում հայկական տպարան դեռևս 1680-ական թթ. փորձել է հիմնել վրաց Արշիլ թագավորը: Նա Ամստերդամի քաղաքապետի միջոցով հայկական տպատառերի պատվեր է տվել տեղի վարպետներին: Սակայն այդ տպարանը չի բացվել:

Թե որքան կարևորություն էր տալիս Ներսես Աշտարակեցին Թիֆլիսում հայկական տպարանի աշխատանքին, երևում է թեկուզ նրանից, որ այդ տպարանը սկսել է աշխատել ներսիսյան դպրոցի բացումից մեկ տարի առաջ՝ 1823 թ.: Տպարանի համար հայերեն տառերի հայրեր ու մայրեր, ինչպես և ձուլված տպատառեր բերվել են Ամստերդամից: Դրանք

դեռևս 1750-ական թթ. վերը հիշված Առաքել Պողոսյանի սեփականությունը եղած այն տպատաներն էին, որոնք փորձել էր ձեռք բերել Սիմեոն Երևանցին էջմիածնի տպարանի համար:

Ներսիսյան դպրոցի տպարանը իր աշխատանքի առաջին տարում լույս է ընծայել Հնդկաստանում բնակվող հայ բժիշկ Դավիթ Կարբեցի Մկրտչյանի «Պատմութիւն և խրատ բժըշկութեան» գիրքը՝ մաղձախտի (խոլերայի) բուժման վերաբերյալ: Հաջորդ տարին լույս է տեսել Ներսես Աշտարակեցու մի աշխատությունը՝ «Համառոտութիւն անցից քրիստոսակերտ Մայր աթոռոյ»: Այնուհետև, մինչև 1850 թ. տպարանում հրատարակվել է 30 անուն գիրք, այդ թվում դասագրքեր: Օրինակ, վերահրատարակվեց Մ. Զամչյանի «Քերականութիւն հայկազեան լեզուի» գրաբարի ձեռնարկը, տպագրվեց Ռոստոմ Երզնկյանի «Համառոտութիւն պատմութեան Հայոց»-ը (1843 թ.) և այլն: Նույն շրջանում այստեղ տպագրվեց Ներսես Շնորհալու լավագույն երկերից մեկը՝ «Ողբ Եղեսիոյ»-ն (1829 թ.), ինչպես և Սարգիս Զալալյանի «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» աշխատությունը (1842 թ.) իսկ ավելի ուշ՝ 1858 թ. և. Աբովյանի հուշակավոր «Վերք Հայաստանին»:

Տպարանը Ներսես Աշտարակեցու մշտական հոգատարության առարկան է եղել: Այնտեղ գործել է տառաձուլարան, վիճագրական արտադրամաս, անընդհատ կատարելագործվել է տպագրական արվեստը: Եվրոպայից Ներսես Աշտարակեցին բերել է տվել լատիներեն տառերի հայերն ու մայրեր, իսկ ռուսերեն ու վրացերեն տառեր պատրաստվել են տպարանի ձուլարանում: Այդպես, տպարանն ի վիճակի էր նաև այլ լեզուներով տպագրություն կատարել:

Տպարանի տնօրեն էր նշանակվել դպրոցի տեսուչ, բանաստեղծ ու մանկավարժ Հարություն Ալամդարյանը, սկզբից ևեթ տպագրական ամբողջ աշխատանքի ղեկավարն էր հմուտ տպագրիչ-վարպետ Գեորգ Արծրունին:

1828 թ. Ներսես Աշտարակեցին, շկարողանալով դիմագրավել իշխանությունների լարած մեքենայություններին, թողնում է Թիֆլիսի թեմի առաջնորդի իր պաշտոնը: 1830-ին Ներ-

սիսյան դպրոցն ու տպարանը փակվում են: Դպրոցը շուտով վերսկսում է իր աշխատանքը, բայց տպարանը փակ է մնում մինչև 1841 թ.:



Նկ. 30. Ներսիսյան դպրոցի վաղ հրատարակություններից (1828 թ.)

Տպարանի նորոգման գործով նորից սկսում է զբաղվել Ներսես Աշտարակեցին, որն արդեն դարձել էր հայոց կաթողիկոս (1843 թ.): 1846 թվականից այստեղ սկսում է տպագրվել Կովկասում առաջին հայերեն (գրաբար) պարբերականը՝ «Կովկասը», որի խմբագիրն էր մշակութային գործիչ Հակոբ Կարենյանը: Ավելի ուշ՝ 1858 թվականից այստեղ էր տպագրվում «Մեղու Հայաստանի» նշանավոր շաբաթաթերթը (աշխարհաբար):

Ներսիսյան դպրոցի տպարանը իր գոյությունը պահպանել է մինչև 1860-ական թթ.: Նրան զուգահեռ 1838—43 թթ. Թիֆլիսում գործել է Հակոբ և Դավիթ Արզանյանց եղբայրների տպարանը, որը շուրջ հինգ տարվա ընթացքում հրատարակել է տասից ավելի գրքեր, այդ թվում և. Աբովյանի «Նախաշավիղ» դասագիրքը, ինչպես և Այբեքնարան, «Գրաստան հատուկտիր գրուածոց հայ մատենագրաց», Հ. և Դ. Արզանյանց-

ների «Քերականութիւն հայ» դասագրքերը (Ներսիսյան զրպ-րոցի համար), ինչպես և գյուղատնտեսական գրքեր՝ ծխախոտ, բամբակ, տորոն մշակելու մասին, մետաքսագործութեան ձեռ-նարկ, բժշկարան և այլն:

1850 թ. Թիֆլիսում գործել է գրող և մանկավարժ Գաբ-րիել Պատկանյանի տպարանը, որտեղ հրատարակվում էր նրա «Արարատ» ամսագիրը: Դա առաջին պարբերականն էր գրական արևելահայերենով լույս տեսնողը: 1849—1850 թթ. այս քաղաքում գործել է նաև Ղուկասի և Շահմուրադյանի տը-պարանը:

XIX դարի երկրորդ կեսին Թիֆլիսը արդեն հայ գրքի զըլ-խավոր կենտրոնն էր Կովկասում և ամբողջ Ռուսական կայս-րությունում: Ըստ վիճակագրական տվյալների, այս քաղա-քում 1860-ական թվականներին ուսերեն գրքերից հետո ամե-նաշատ տպագրվել են հայերեն գրքեր: Օրինակ, 1862—1868 թթ. ընթացքում Թիֆլիսում հրատարակվել են ուսերեն 91, հայերեն 53, վրացերեն 42, կաբարդիներեն 4, օսերեն 2 անուն գրքեր («Сборник статистических сведений о Кавказе», Թիֆլիս, 1869, էջ 165):

Թիֆլիսն, իբրև Անդրկովկասի և կովկասահայությունից կենտրոն, դարի երկրորդ կեսին սկսում է նկատելիորեն աղ-դակել արևելահայոց գրահրատարակչությունը, և գլխավորա-պես այս քաղաքի հայոց տպարանների ու հրատարակչություն-ների շնորհիվ է, որ շուտով ամբողջ Կովկասում հայ գրքի հրատարակչությունը իր ընդհանուր քանակով գրավում է առա-ջին տեղը: Օրինակ, 1891 թ. Կովկասում հրատարակվել են հայերեն 131, ուսերեն 114, վրացերեն 79, ադրբեջաներեն 7 անուն գրքեր («Кавказский календарь», Թիֆլիս, 1890, էջ 239—254):


XIX դարի երկրորդ կեսին, մինչև 1915—20 թթ. Թիֆլի-սում գործել են մի շարք մասնավոր հայկական տպարաններ. գրանցից էր Գաբրիել Մելքումյանի և Համբարձում էնֆիաճ-յանի նշանավոր տպարանը (հետագայում՝ «Հ. էնֆիաճյան և ընկ.»), որն իր եվրոպական առաջնակարգ սարքավորամբ, հարուստ ու գեղեցիկ տառատեսակներով, գրածուլարանով մի

ժամանակ լավագույնն էր արևելահայոց տպարանների մեջ: Այստեղ 1860-ական թթ. հրատարակվել են հայ դասականներ և. Աբովյանի, Գ. Սունդուկյանի երկերը, նաև «Մեղու Հայաս-տանի», «Կոունկ Հայոց աշխարհին» պարբերականները և այլն: Ապա այս տպարանը անցավ Տ. Ռոտինյանի տնօրինությունը: Թիֆլիսի մյուս հայ տպարանատերերից էին Հովհաննես Մար-տիրոսյանը, Մովսես Վարդանյանը, Տիգրան Նազարյանը, Մնացական Մարտիրոսյանը, օրիորդ Ն. Աղանյանցը, հայտնի էին նաև «Էպոխա», «Հերմես», «Պրոգրես» տպարանները և այլն:

Մինչև 1920 թ. Թիֆլիսում էր արևելահայոց պարբերա-կան մամուլի գլխավոր կենտրոնը. այստեղ լույս են տեսել մոտ 200 անուն հայերեն թերթեր ու հանդեսներ, որոն-ցից առավել հայտնիներն են՝ «Մեղու Հայաստանի», «Կոունկ Հայոց աշխարհին», «Մշակ», «Փորձ», «Արձագանք», «Աղ-բյուր», «Նոր դար», «Մուրճ», «Տարաղ», «Հորիզոն», «Լուծա», «Հասկեր», «Նաթաբալա», «Գործ», «Աղղաղրական հանդես», «Գեղարվեստ» և այլն, բուլղարիկյան պարբերականներից են «Պրոլետարիատի կոնվը» (1903—1905), «Կայծ» (1906) և ուրիշներ:

Թիֆլիսում ապրել ու գործել են հայ դասական գրակա-նության (արևելյան ճյուղի) նշանավոր դեմքեր՝ Պ. Պոռշ-յանը, Ղ. Աղայանը, Գ. Սունդուկյանը, Բաֆֆին, Մուրացանը, Հ. Թումանյանը, Լ. Շանթը, Վ. Փափաղյանը, Նար-Գոսը, Ա. Իսահակյանը և ուրիշներ: Այս և ուրիշ շատ հայ հեղինակ-ների ստեղծագործություններ, ինչպես և ուսու ու եվրոպական գրողների երկերի բազմաթիվ հայերեն թարգմանություններ հրատարակվել են Թիֆլիսի հայկական տպարաններում: Գե-ղարվեստական գրքերի տպագրությամբ առաջին տեղում էր Հ. Մարտիրոսյանի տպարանը:

Թիֆլիսի հայկական տպարաններից մի քանիսը աչքի էին ընկնում իրենց նորագույն ճարտարվեստով: Եվրոպայից անընդհատ բերվում էին տպագրական սարքավորումներ, էլեկտրական տպագրամեքենաներ և այլն: Այս տեսակետից աչքի էին ընկնում Մ. Մարտիրոսյանի, Ն. Աղանյանցի տպա-



Նկ. 31. Մովսես Վարդանյանի հրատարակություններից (Քրիստոս)


րանները, որոնց հրատարակած գրքերն ու թերթերը տպագրական արվեստով մի ժամանակ մրցում էին Ռուսաստանի և Եվրոպայի լավագույն տպարանների արտադրանքի հետ:

Այս քաղաքում կարևոր եղավ Կովկասի հայոց հրատարակչական ընկերությունը XIX դարի վերջերից սկսած: Ընկերությունը լույս ընծայեց գեղարվեստական արժեքավոր շատ երկեր, հատկապես համաշխարհային դասական գրողների:

XIX դարում, մինչև 1920 թ. Քրիստոսի ծաղկում է հայոց գրավաճառությունն ու գրադարանային գործը: Նշանավոր տպարանատերեր Համբարձում Էնֆիաճյանը իր եղբոր Ավետիքի հետ ղեկնա XIX դարի առաջին կեսին Քրիստոսից գրավաճառություն էին ծավալել ամբողջ աշխարհի հայություն մեջ: Նրանց գրատունը հարուստ էր հին ու նոր գրքերով, ունեին հայերեն գրեթե բոլոր պարբերականները: Նրանց գրավաճառային ցուցակը 1847 թ. տպագրվել է Կալիֆոռնիայի «Ազգասեր» հանդեսում, 1848-ին Կոստանդնուպոլսի «Հայաստան» պարբերականում, 1850 թ. լույս է տեսել առանձին գրքով (Քրիստոսի): Էնֆիաճյանների գրատունը գիրք էր մատակարարում նաև հայոց դպրոցներին, այդ թվում լազարյան ճեմարանի և Ներսիսյան դպրոցի գրադարաններին:

Քրիստոսի գործել են նաև մի շարք այլ հայկական գրավաճառատներ. Զաքարիա Գրիգորյանցի և ընկ. Կովկասյանը, Ալադաթյանի գրատունը, Ստ. Տեր-Իսրայելյանի Կենտրոնականը, Ի. Տեր-Միքայելյանինը, «Գուտեներգ», «Գիր» և այլն:

Քրիստոսի հարուստ հայկական գրադարաններից են եղել Ներսիսյան դպրոցինը (հիմնադրվել է 1824 թ.), քաղաքի հանրային գրադարանը, էթանագին գրադարանը, քաղաքի ժողովարանի, Հայոց բարեգործական ընկերության, Հովնանյան օրիորդաց դպրոցի գրադարանները և այլն: Պահպանված են այդ գրադարանների գրացուցակները: Այս գրադարանների գրքային ունեցվածքի մեծ մասը 1920-ական թթ. տեղափոխվեց Նրևան և հանձնվեց Ալ. Մյասնիկյանի անվ. հանրապետական գրադարանին: Քրիստոսի եղել են նաև անհատական հարուստ գրադարաններ, որոնցից են Գ. Շիրմազանյանի և Ն. Արղունյանի գրքային հավաքածուները:



Նկ. 32. Նույններ «Հայ բանաստեղծների» ժառանգարելից
(Քիֆլիս, XX դարի սկզբներ)

1870 թ. հայկական տպարան բացվեց Բաքվում: Այն պատկանում էր Բաքվի հայոց մարդասիրական ընկերությանը: Այստեղ լույս տեսան Մխիթար Գոշի, Ողիմպիանոսի և Նդոպոսի «Ընտիր առակները», «Սոխակ Հայաստանի» նշանավոր երգարանի 4 պրակները, մի շարք դասագրքեր, խորեն Ստեփանեի «Հայկական աշխարհ» թափառական (տարբեր վայրերում հրատարակված) պարբերականը և այլն:

Այնուհետև, Բաքվում սկսում են գործել մի շարք ուրիշ հայկական տպարաններ՝ «Մալաֆյանցի և ընկ.» (1874-ից), Ա. Ղասաբյանցի (1876-ից), Ինչպես և Ս. Տեր-Հովհաննիսյանի, Հ. Գյուլբասարյանի, Ս. Շահբաղյանցի, Երևանցյանի, «Արոր», «Արամազդ» և այլն: Մինչև 1920 թ. Բաքվում լույս են տեսել հարյուրավոր հայերեն գրքեր և ավելի քան 60 անուն թերթեր ու հանդեսներ:

Բաքվում ծավալվում է նաև հայերեն գրքերի վաճառքը: Միմյանց հետևից բացվում են հայկական գրադարաններ: Բացի Բաքվի հայկական դպրոցների և բանվորական ոչ մեծ գրադարաններից, կարելի է հիշել Գրիգոր Լուսավորչի անվան մարդասիրական ընկերության հայկական խոշոր գրադարանը (այժմ Աղրբեջանական ՍՍՀ հանրապետական գրադարան). ժամանակին այդտեղ գրադարանավար է աշխատել հայ գրականության դասական Ալ. Շիրվանզադեն:

Ղրիմի հայության կենտրոն Թեոդոսիայում 1859—1865 թթ. լույս էր տեսնում Գ. Այվազյանի «Մասալց աղավնի» հանդեսը, որ այդտեղ էր տեղափոխվել Փարիզից: Հանդեսը տպագրվում էր մեծահարուստ Հարություն հալիպյանի հիմնած (1859 թ.) տպարանում: Այստեղ տպագրվում էին նաև դասագրքեր՝ նույն ժամանակ Թեոդոսիայում գործող տղաների ու աղջիկների հայոց դպրոցների համար: Այս տպարանը փակվել է 1874 թ.:

1870—80-ական թվականներից Ն. Նախիջևանում և Ռոստովում տպագրվել են մի շարք հայերեն գրքեր հիմնականում տեղի հայկական հոծ բնակչության համար: Հայտնի էր Տեր-Աբրահամյանի տպարանը: Ն. Նախիջևանում XX դարի առաջին երկու տասնամյակում հրատարակվել են մոտ մի տաս-

նյակ հայերեն պարբերականներ, այդ թվում՝ «Նոր կյանք», «Մեր ձայնը», «Լույս»: Այդ ժամանակ այստեղ գործում էր Ս. Ավագյանի տպարանը:

Մինչև 1920 թ. հայկական տպագրություն եղել է նաև Ռուսական կայսրության ուրիշ շատ վայրերում (բացի Հայաստանից)՝ Բաթումում, Պյատիգորսկում, Սամարղանդում, Անապայում, Սուխումում, Արմավիրում և այլն:

Նախքան այդ՝ 1848—1850 թթ. հայկական տպագրություն էր եղել Շամախիում, ուր երեք մտավորականներ՝ Մովսես Զոհրապյանը, Մարգարե Ղուլիյանը և Մինաս Տարկլիճյանը իրենց տպարանում լույս են ընծայել հայերեն երեք կրոնական գրքեր: Ապա 1856 թ. այստեղ տպարան է հիմնել Ա. Գրիգորյանը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՅՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ

1865 թ. հայկական տպագրությունը հաստատվում է Կահիրեում, որտեղ Աբրահամ Մուրադյանի տպարանում սկսում է լույս տեսնել «Արմավենի» լրագիրը: Մինչև 1920 թ. այս քաղաքում հրատարակվեցին շատ հայերեն գրքեր և շուրջ չորս տասնյակ անուն հայերեն պարբերականներ; թեև Կահիրեն այդ թվականից հետո է, որ պետք է վերելք ապրեր որպես հայ գրքի կենտրոններից մեկը:

Եգիպտոսի մյուս գլխավոր քաղաքում՝ Ալեքսանդրիայում, հայկական տպագրությունը սկիզբ առավ 1888-ին՝ «Նեղոս» պարբերականի հրատարակությամբ:

Մերձավոր արևելքի մյուս երկրներից հայկական տպագրությունը 1867-ին թափանցել է Սիրիա (Հալեպ), 1901 թ.՝ Կիպրոս (Նիկոզիա):

Պարսկաստանում Նոր Զուղայի տպարանը 1688 թվականից հետո 175 տարի չի գործել: 1863-ին այստեղ տպագրվել է մի փոքր օրացույց: 1872 թ. սկսել է գործել դեռևս 28 տարի առաջ՝ սեբաստաբնակ նորջուղայեցի Մ. Հորդանանյանի՝ Ամենափրկիչ վանքին նվիրած տպագրական մամուլը: 1904 թ. գործի է դրվել տպագրական նոր սարքավորում և սկսել է

տպագրվել «Նոր Զուղայի լրագիր» երկշաբաթաթերթը: Ամենափրկիչ վանքի տպարանը գործում է մինչև այժմ, այն իր գոյության սկզբից լույս է ընծայել ավելի քան 250 անուն գիրք: Նոր Զուղայի տպարանի հիմնադրումից ավելի քան երկուսուկես դար հետո՝ (1880 թ.) հայկական տպագրությունը թափանցեց Պարսկաստանի այլ քաղաքները՝ Ռաշտ (1880), ապա՝ Թավրիզ (1889), փոքր-ինչ անց՝ նաև Թեհրան (1894):

Հնդկաստանում հայկական տպագրությունը գործել է նաև XIX դարում: Մադրասում դարասկզբին շարունակել է գործել Հարություն Շամալոնյանի տպարանը, ուր մինչև 1809 թ. լույս են ընծայվել ևս 4 թե 5 հայերեն գրքեր: Այս քաղաքում 1809—1818 թթ. աշխատում էր նաև Սարգիս Աղավալյանցի տպարանը, որ հրատարակել է 6 կամ 7 անուն հայերեն գիրք, մի գիրք է տպագրվել Հակոբ և Հովսեփ Նազար-Շմրյանցի տպարանում (1812 թ.):

Ավելի բեղմնավոր է եղել Կալկաթան, որտեղ XIX դարում գործել են 10-ից ավելի հայկական տպարաններ, այդ թվում հնդկահայոց Արարատյան ընկերության, Ավետ և Հովհաննես Ավետյանցների, Պողոս Հորդանանյանի, Եպիսկոպոսական ճեմարանի, Մարդասիրական ճեմարանի, Օճանասփյուռ ժողովի և ուրիշների: Վերջինում 1821—1823 թթ. լույս էր տեսնում Մարտիրոս Դավթյան-Մկրտչյանի «Շտեմարան» հանդեսը, իսկ առաջինում՝ 1845—1852 թթ. ականավոր հայ բանաստեղծ ու հրապարակախոս Մեսրոպ Թաղիադյանի «Ազգասեր» ամսագիրը: Կալկաթայում ի թիվս մի շարք գրաբար գրքերի, լույս են տեսել նաև արևելյան աշխարհաբարի նորջուղայական տարբերակով գրքեր, ինչպես, օրինակ «Խտրադիմա դժողություն» հետաքրքրական կատակերգությունը (տպ. Պողոս Հորդանանյանի, 1821 թ.):

Կալկաթայի մոտ Սիրամպուր գյուղաքաղաքում Ասովա-ծաշնչային ընկերությունը 1819 թ. լույս ընծայեց հայերեն Ասովածաշունչ:

Կալկաթայում հայերեն գրքեր ավելի քիչ քանակով տպագրվում էին նաև դարի երկրորդ կեսին: Օրինակ, Մարդասիրական ճեմարանի տպարանը 1867, 1870, 1871 թթ. հրատարա-

կել է հայերեն օրացույցներ: «Արարատյան ընկերության» տպարանն օգտագործելով իբրև իր սեփականը՝ Հովհաննես Խաչիկյանը 1860-ական թթ. վերջերից և 70-ականների սկզբին իր մի քանի երկերն է տպագրել:

Բայց շուտով հնդկահայոց տպագրությունը և առհասարակ մշակութային կյանքը մարեց, քանի որ այստեղի հայությունը ևս ձուլվեց, այս դեպքում անգլիացավ. նրանցից շատերը հեռացան երկրից:

XIX դարում և XX-ի առաջին երկու տասնամյակում հայկական տպագրությունը պտուղներ տվեց նաև Արևմտյան և Միջին Եվրոպայի մի շարք երկրներում: Այդ շրջանում Ֆրանսիայի մայրաքաղաքում, ուր ֆրանսիացիների ձեռքով հայերեն տպագրություն էր եղել XVI և XVII դարերում, հայերեն մի շարք գրքեր ու պարբերականներ հրատարակվեցին դարձյալ ֆրանսիական տպարաններում: Կարելի է հիշել այդ կարգի հետևյալ տպարանները՝ Կայսերական կամ Ազգային, Գ. Դյուբրեի, Վ. Ռեմկեի, «Է. Դյունոյի և ընկ.», Վալտերի, Ա. Բուրդիեի, Ծ. Նորլեի և այլն:

Կայսերական տպարանը, որ XVII դարում լույս էր բնծայել Ֆ. Ռիվոլայի վերը հիշված բառարանը (2-րդ հրատ., 1633) և թարգմանական «Առաել պարզաբանություն»-ը (2-րդ հրատ., 1634), XIX դարի սկզբներին հրատարակեց Մ. Բեյլոգի «Փորձառութիւն հայկազեան լեզուի» (1812), հայադեա Ն. Շահան-Ջրպետի «Յորդորակ առ Հայս բնակեալս ի հարաւային աշխարհիս կայսերութեան Ռուսաց ի վերայ երկրագործութեան խոտեղէն բամբակի» (1816) գրքերը, Գ. Մելիք-Շահնազարյանի, Ն. Շահան-Ջրպետի, Լ. Լանգլեի «Տեղեկութիւնք ի վերայ այժմեան կացութեան թագաւորութեանն Պարսից» (պարսկերեն, հայերեն, ֆրանսերեն—1817—1818 թթ.) աշխատությունը: Գ. Դյուբրեի տպարանում հրատարակվել են Վարդան Այգեկցու միջնադարյան առակները («Հատընտիր առակք», 1825), Ներսես Ծնորհալու «Ողբ Եղեսեայ» վիպերգը (1827), երեք անգամ նոր կտակարան (երկու անգամ գրաբար և աշխարհաբար զուգահեռ բնագրերով՝ 1825, 1828, մեկ անգամ միայն աշխարհաբար՝ 1828):

Ֆրանսիական մյուս տպարաններում լույս են բնծայվել հայերեն պարբերականներ ու տարբեր բովանդակության գրքեր: Օրինակ, «Է. Դյունոյի և ընկ.» տպարանում է հրատարակվել Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» նշանավոր ծրագրային երկը (1857, Ս. Մանիկյան կեղծանունով):

Փարիզում գործած հայ տպագրիչներից կարելի է հիշել Կարապետ Շահնազարյանին, որ 1857-ին այդ քաղաքում հիմնեց տպարան ու լույս բնծայեց հայ պատմիչների մատենաշար և ուրիշ գրքեր, Կարապետ Ներսեսյանին, որ 1900—1910-ական թթ. Փարիզում գեղարվեստական գրքեր և Ա. Չոպանյանի «Անահիտ» գրական հանդեսն էր տպագրում: Այս քաղաքում գործել են նաև ուրիշ շուրջ երկու տասնյակ հայկական տպարաններ:

Փարիզում գործած հայ տպագրիչներից ամենանշանավորը վերոն արդեն հիշված Ճանիկ Արամյանն էր, որ Կոստանդնուպոլսից գալով այս քաղաքը տպագրական արվեստ է սովորում Վալտերի տպարանում, որին կից 1854 թ. կահավորում է իր հայկական արտագրամասը և տպագրում Ստ. Ոսկանյանի «Արևելք», «Արևմուտք», Գ. Այվազյանի «Մասյաց աղավնի» հանդեսներն ու մի շարք գրքեր:

Ճ. Արամյանն սուներ իր գրածուլարանը, որտեղ ի թիվս այլ տառերի պատրաստում էր նաև հայերեն նորաձև տառատեսակներ: Հակառակ քիչ աչ թեքված հայերեն տպագրական բոլորագիր տառերի, որոնք ամենատարածվածն էին, Արամյանի նոր տպատառերը ուղղահայաց են: Զգացվում է լատինական տպատառերի ազդեցությունը: Դրանց նախօրինակը, ինչպես ասվել է, առկա է XVI դարի որոշ եվրոպացիների (Ամբրոսիոս Թեղոս, Թուրնայզեր) տպագրած հայերեն բնագրերում և վենետիկյան ու հնդկահայ մի քանի հրատարակություններում: Ճ. Արամյանի տառերը գեղեցիկ են, ավելի քիչ տեղ գրավող: Դրանք նրա անունով կոչվեցին՝ Արամյան, և բոլորագրին զուգահեռ տարածվեցին ամենուրեք: Հետագայում նրանց օրինակով ստեղծվեցին նաև հայերեն տպատառերի ուրիշ տեսակներ («Նորք» և այլն), որով նշանակա-

Աից շափով հարստացավ հայկական տպատառերի տեսակա-
նին:

Ճ. Արամյանը 1859 թ. հիմնեց իր առանձին տպարանը և
ճոխացրեց, մինչև 1862 թ. այստեղ ընդլայնեց հրատարակ-
չական գործը: Ապա տպարանը փոխադրեց Մարսել, հետո՝
Կոստանդնուպոլիս: Ճ. Արամյանը, ի թիվս շատ գրքերի, տը-
պագրել է նաև հայ դասականների՝ Եղնիկի, Եղիշեի, Նարե-
կացու, Մ. Նալբանդյանի, Ծերենցի, Պ. Դուրյանի, Գ. Սըր-
վանձտյանի և այլոց երկերը:

Փարիզը դառնում էր հայ գրի ու գրքի մի նոր կենտրոն,
աշխուժանում էր հայոց գրավաճառությունը: Այդ քաղաքում
կային հայկական գրատներ: Սակայն այստեղ հայ հրատա-
րակչական գործի ծաղկումը միշտ փութանցիկ է եղել. հայերն
արագ ձուլվում էին՝ ֆրանսսանում, և հայ ազգային կյանքը ան-
կում էր ապրում, մարելու էր մոտենում նաև հայկական գրա-
հրատարակչությունը, մինչև որ հայ գաղթականների նոր
ալիք էր գալիս այդ քաղաքը:

Մարսելում Ոսկանյան տպարանի փակվելուց (1686 թ.)
ավելի քան 170 տարի անց նոր տպագրություն է սկիզբ առ-
նում: 1862 թ. այստեղ երկու տարի գործում էր Փարիզից տե-
ղափոխված Ճ. Արամյանի տպարան-հրատարակչությունը:
1885-ից այս քաղաքում հրատարակչական-տպագրական գոր-
ծունեություն է ծավալում մանկավարժ, հրապարակախոս
Մկրտիչ Փորթուզալյանը: Մարսելում նա լույս էր ընծայում
գլխավորապես ազգային-ազատագրական բովանդակության
գրքեր և «Արմենիա» բանասիրական, քաղաքական-հասարա-
կական լրագիրը: Իր հրատարակությունները Փորթուզալյանը
սկզբում տպագրում էր Մարիուս Շիբլերի, ապա իր՝ սեփա-
կան տպարանում: Նրա գրաշարներից էին իր երկու զուտորե-
րը՝ Շուշանն ու Հայկանուշը, որոնք հայտնի են իբրև առաջին
հայ կին գրաշարներ: Մարսելում գործել են նաև ուրիշ հայ-
կական տպարաններ:

Տրանսիայի մի այլ քաղաքում՝ Մոնպելյեում, հրատա-
րակվել են 1887-ից «Հնչակ», 1912-ից՝ «Փորձ», 1913-ից՝
«Վտակ Իրանի» պարբերականները:

Լոնդոնում XVII դարի աննշան տպագրությունից հետո,
1736 թ. Կարլոս Աբերսի տպարանում լույս էր տեսել Մովսես
Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ն ու «Աշխարհացոյց»-ը՝
հայերեն և լատիներեն ղուգահեռ բնագրերով, 1780-ին Յ. Ռի-
վինգտոնի տպարանում Գ. Խալդարյանը հրատարակել էր
«Դաւանութիւն հաւատոյ եկեղեցեաց Հայաստանեայց» գիրքը,
իսկ XIX դարում դարձյալ անգլիացիների տպարաններում մի
շարք հայերեն՝ հիմնականում կրոնական գրքեր տպագրվեցին:
Անգլիայում հայկական տպարաններ նույնպես գործել են.
Լոնդոնում՝ «Հայաստան» և Հայոց որբանոցի, Մանչեստրում՝
Կ. Շահնազարյանի, ինչպես և՝ Թորոս Զուղայեցու, Նշան Զի-
հանյանի: XIX դարի 60—90-ական թթ. և XX դարի սկզբնե-
րին Անգլիայում լույս են տեսել «Հայաստան», «Մարտ», «Նոր
կյանք», «Հնչակ», «Պատանի» (Լոնդոն), «Երկրագունդ» «Վաղ-
վան ձայնը», «Հայ եկեղեցի» (Մանչեստր) և այլ հայերեն
պարբերականներ:

XIX դարի 80-ական թվականներից մինչև 1920 թ. հայ-
կական տպագրություն է եղել նաև Ռումինիայում (Գալաց,
Յաշ, Ֆոկչան, Բուխարեստ), Բուլղարիայում (Վառնա, Ռուս-
չուկ, Ֆիլիպե, Շումլա, Սոֆիա), Գերմանիայում (Մարբուրգ,
Բեռլին), Հունաստանում (Աթենք), Շվեյցարիայում (Ժնև,
Լոզան), Շվեդիայում (Ստոկհոլմ), Հունգարիայում (Բուդա-
պեշտ):

Մալթա կղզում 1828—1831 թթ. ամերիկյան բողոքա-
կանների Մարդասիրական ընկերությունը տպագրել է հայա-
տառ թուրքերեն կրոնական գրքեր: Այնուհետև, ինչպես ասվել
է, այդ ընկերությունը հայերեն գրքերի հրատարակությունը
տեղափոխեց Զմյուռնիա:

Ամերիկյան մայր ցամաքում հայերեն տպագրություն
եղավ 1857 թ.: Աստվածաշնչային ընկերությունը, ինչպես աշ-
խարհի այլ մասերում, ԱՄՆ-ում ևս հրատարակում էր տարբեր
ազգերի լեզուներով (այդ թվում հայերեն) Աստվածաշունչ,
նրա առանձին գրքերը և քրիստոնեական այլ երկեր: Այդ ըն-
կերությունը Նյու-Յորքում վերոհիշյալ թվականին վերահրա-
տարակեց Զմյուռնիայում 18 տարի առաջ իր իսկ տպագրած

«Ապաշխարացույց» գիրքը, իսկ 1859-ին Աստվածաշունչը (աշխարհաբար), ապա նույնը նորից վերահրատարակեց 1867-ին: 1860-ական թթ. ընկերությունը հայերեն լույս էր ընծայում նաև Աստվածաշնչի առանձին գրքերը՝ Նոր կտակարան, Ավետարան, Սաղմոսարան:

1888 թ. այս քաղաքում տպարան է բացել Հ. Էկինյանը և հրատարակել ամերիկահայ առաջին պարբերականը՝ «Արեգակ», ապա և այլ թերթեր:

1890-ական թվականներից սկսած ԱՄՆ-ում սկսում են երևան գալ հայերեն մի շարք պարբերական հրատարակություններ՝ մեծ մասամբ ազգային-ազատագրական թեքումով: Պատճառն այն էր, որ այդ շրջանում հայկական կոտորածների պատճառով Արևմտյան Հայաստանից և Թուրքիայի այլ հայաբնակ վայրերից զգալի գաղթականություն հաստատվեց ԱՄՆ-ում:

Նյու-Յորքում գործել է նաև «Արարատ» լրագրի տպարանը, որտեղ լույս է ընծայվել համանուն թերթը (1891—92 թթ.): Եղել են «Երիտասարդ Հայաստանի», «Կոչնակի», «Արաքսի» տպարանները, որոնցում 1900-ական թթ. տպագրվում էին համանուն, ինչպես և այլ պարբերականներ: Այդ տպարանները լույս էին ընծայում նաև հայերեն գրքեր ու գրքույկներ՝ ազգային-ազատագրական, կենսագրական և այլ բովանդակությամբ:

Բոստոնում 1899-ից հրատարակվել է «Հայրենիք» լրագիրը և գործել նրա տպարանը, ուր բացի այդ լրագրից, լույս են ընծայվել քաղաքական-հասարակական բնույթի գրքեր, այդ թվում Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» երկը 2-րդ հրատարակությամբ: Այս քաղաքում 1900-ական թթ. գործել է նաև «Ձայն Հայրենյաց» պարբերականի տպարանը: Բոստոնում մինչև 1920 թ. հրատարակվել են երկու տասնյակ հայերեն պարբերականներ: Ֆրեզնոյում դրանց քանակը մոտ 13 է եղել:

ԱՄՆ-ի մյուս քաղաքներից մինչև 1920 թ. հայկական տպագրություն է եղել նաև Վոթերթաունում, Չիկագոյում,

Պրովիդենսում, Բրուկլինում, Ֆիլադելֆիայում, Դետրոյտում և այլուր:

* * *

1912 թ. ամբողջ աշխարհի հայությունը նշեց հայ տպագրության 400-ամյակը, որին միացել էր նաև հայոց գրերի գյուտի 1500-ամյա հոբելյանը: Դա հայ գրի ու գրքի մեծ տոն էր: Այդ թվականին լույս տեսան հոբելյանին նվիրված մի շարք աշխատություններ, այդ թվում Թեոդիկի «Տիպ ու տառը» (Կոստանդնուպոլիս) և Լեոյի «Հայ գրքի տոնը» (Թիֆլիս), մի շարք հայ պարբերականներ հատուկ կամ բացառիկ համարներ նվիրեցին այդ տոնին:

Կարծես ամփոփվեց հայ տպագիր գրքի անցած 400-ամյա ուղին:

Մոտավոր հաշվումներով տարբեր երկրներում մինչև 1920 թ. տպագրվել են շուրջ 15.000 անուն հայերեն գրքեր, մոտ 1800 անուն պարբերականներ: Մի փոքր, բազմաճալած ժողովրդի համար սա, հավանաբար, դրական նշանակալից հունձք էր:

Հայկական տպագրությունը վերելք ապրեց Հայաստանի խորհրդանշանացումից հետո, որտեղ ստեղծվեց պետական հրատարակչություն, աստիճանաբար հայ գրքի զլխավոր կենտրոնը դարձավ Երևանը:

V դարից ի վեր մեսրոպյան գիրը, հայերեն ձեռագիր ու տպագիր գրքերը աշխարհի փոթորկուն և փոքր ազգերին կլանելու պատրաստ օվկիանոսում եղան հայության ինքնահաստատման ու գոյատևելու ձգտման արտահայտությունը: Նրանցում ամփոփված է հայ ժողովրդի դարերով ստեղծած գրավոր բազմահարուստ մշակույթը, որ իր ինքնօրինակ դիմագծով պատվավոր տեղ է զբաղեցրել համաշխարհային մշակույթի գանձարանում:

Հ Ա Յ Գ Ի Ր Ք Ը.
1512—1920

Բ Ո Վ Ա Ն Կ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Առաջին մաս. Հայ ձեռագիր գիրքեր	5
Նախքան V դարը	5
Տառերի մաշտոցյան գյուտը և հայ դպրությունը	6
Հայ ձեռագիր գրքեր	10
Երկրորդ մաս. Հայ տպագիր գիրքեր 1512—1800 թթ.	18
Տպագրություն	18
Հայկական տպագրության առաջին դարը	22
Հայ առաջին տպագրիչ Հակոբ Մեղապարտը	25
Աբգար Գպիր Թոխաթեցի, Սուլթանշահ, Հովհաննես Տերզեցի	37
Հայկական տպագրության երկրորդ հարյուրամյակը	44
Հոռոմ	45
Լվով, Նոր Զուղա, Կոստանդնուպոլիս, Վենետիկ	48
Ոսկանյան տպարան	58
Վանանդեցիներ	69
Հայ գիրքը XVIII դարում	71
Կոստանդնուպոլիս, Զմյուռնիա	72
Եվրոպացիների հրատարակած հայերեն գրքեր	82
Մխիթարյաններ	83
Տպագրության մուտքը Հայաստան	90
Հայկական տպագրությունը Հնդկաստանում	99
Հայկական տպագրությունը Ռուսաստանում	101
Յրրորդ մաս. Հայ գիրքեր 1801—1920 թվականներին	106
Տպագրությունը Հայաստանում 1801—1920 թթ.	109
Մխիթարյան հրատարակություններ	122
Փուրբիա	132
Ռուսաստան	135
Հայկական տպագրություն ալ վայրերում	146

Հրատարակչական խմբագիր
Ժ. Բ. ԱՓԻՆՅԱՆ
Գեղարվեստական խմբագիր
Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱՆՅԱՆ
Տեխնիկական խմբագիր
Հ. Մ. ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ
Սրբագրիչ
Ռ. Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎՖ 03629 Պատվեր 1172 Հրատ. 5423 Տպաքանակ 3000
Հանձնված է շարվածքի 28.11 1980 թ.: Ստորագրված է տպագրության
5. 06. 1981 թ.: Տպագրական 9,75 մամուլ. + 2 ներդիր, պայման. 8,4 մա-
մուլ, հրատ. 6,85 մամուլ: Փուղթ լիտոգրաֆիական, 84×1081/32,
գինը 1 ա. 05 կ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 19, Բարեկամության 24 գ-
Издательство АН Армянской ССР, Ереван, Барекамутян, 24-г.
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության Երևանի տպարան,
Բարեկամության 24

Типография Издательства АН Армянской ССР, Ереван,
Барекамутян 24.